ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2009

929 : 947.925 Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ա 95229

ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՍՐՅԱՆ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 130-ԱՄՅԱԿԻՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
50

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
50

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ
2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Մ 283 Ա.

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Աշոտ Մելքոնյան

Մ 283 Ա. Ասրյան Ա. Ս.
Արամ Մանուկյան. կյանքը և գործունեությունը.- Եր.: Պատմ. ինստ., 2009,- 114 էջ:

Աշխատության մեջ արխիվային վավերագրերի, ժամանակի մամուլի և այլ սկզբնաղբյուրների, հուշագրական և պատմագիտական տարաբնույթ գրականության հիման վրա գիտականորեն ներկայացվում է հայոց պատմության նշանավոր դեմքերից մեկի՝ 20-րդ դարասկզբի խոշորագույն ազգային-քաղաքական ու պետական գործիչ, Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի (1879 - 1919 թթ.) կյանքը և գործունեությունը:

ISBN 978-99941-73-35-8

ԳՄԴ 63.3 (2Հ)

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
(1879 - 1919)

«Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսեցէք ձեր խղճի հետ և ըսէք, արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնազոհ, որքան Արամը, տե՞ւ էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը...»:

Նիկոլ Աղբալյան

Արամ Մանուկյանը հայոց պատմության մեծերից է, հայոց նորագույն պատմության մեջ իր կատարած դերով ամենախոշոր, կենտրոնական դեմքը: Անհնար է պատկերացնել նոր ժամանակներում Հայոց անկախ պետականության վերականգնման փաստը, առանց վերհիշելու և արժևորելու Արամ Մանուկյանի կյանքն ու գործունեությունը: Հայոց պատմության ներկա փուլում, երբ մեր ժողովուրդը ջանքեր է գործադրում Հայաստանի երրորդ հանրապետության կայացման և ամրապնդման ուղղությամբ, մեծ հայրենասերի անցած ուղու ուսումնասիրությունն ու գնահատումը գիտատեսական ու գործնական բացառիկ կարևորություն է ներկայացնում: Ազգային ոգու բարձրացմանն ու ազգային ուժերի համախմբմանը, հայոց պետականության վերականգնմանը ուղղված նրա արդյունավետ ձեռնարկները, տիրող իրավիճակին չհամակերպվելու և շրջապատին չենթարկվելու նրա անսասան վճռականությունը, իրատեսական մոտեցումը ժողովրդի առջև ծառացած խնդիրներին կարող են օրինակելի լինել մեր պետական այրերի, հասարակական-քաղաքական ուժերի համար, որպեսզի ընկալեն, թե ճգնաժամային իրավիճակներում ինչպես պետք է համախմբեն ժողովրդին՝ հայրենիքը շենացնելու և հզորացնելու, ներքին և արտաքին մարտահրավերները դիմակայելու համար: Այն կարող է նպաստել մատաղ սերնդի ազգային ոգով դաստիարակությանը, ուսանողության և հասարակության տարբեր խավերի ազգային ու պետական մտածողության ամրապնդմանը:

Արամի անձը և գործունեությունը մշտապես գտնվել են պատմագիրների ուշադրության ներքո: Նրա մասին, մահվանից (1919թ. հունվարի 29) անմիջապես հետո, սկզբնապես և՝ Հայաստանում, և՝ արտերկրում,

իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո միայն արտերկրում, հրատարակվել են բազմաթիվ համառոտ կենսագրականներ և կյանքի ու գործունեության առանձին դրվագներին նվիրված հուշագրություններ: Նրա գործունեության առանձին կողմեր տեղ են գտել նաև քննարկվող ժամանակաշրջանի վերաբերյալ ժամանակակիցների կողմից գրված հուշերում, հազվադեպ՝ նաև հայ պատմաբանների աշխատություններում:

Արդեն 1919թ. փետրվարի 9-ին Երևանի «Զանգ» թերթում Արամ Մանուկյանի կենսագրականով հանդես եկավ Ս. Վրացյանը[1]: Երևանի «Աշխատանք» թերթի խմբագրությունը նրա հիշատակին նվիրեց թերթի առանձին թողարկում[2]: «Հայրենիք» ամսագրի խմբագրությունը 1922թ. նոյեմբերին հրատարակեց Ս. Վրացյանի և Ռուբեն Տեր-Մինասյանի կազմած Արամի կենսագրականը՝ ներկայացնելով գործչի կուսակցական-հեղափոխական գործունեությունը մինչև Արևմտյան Հայաստան շարժվելը (1904թ. հոկտեմբեր)[3]: Արամին նվիրված կենսագրականներ հրատարակվեցին նաև հետագայում[4]: 1923թ. Օ. Մխիթարյանը հրատարակեց Արամի հեղափոխական և մարդկային նկարագրի բնութագրմանը նվիրված հոդված[5]: Սարդարապատի ճակատամարտի օրերին Արամի վճռական դերը ներկայացրեց նրա գործակից Ա. Շահխաթունին[6]: 1925թ. «Հայրենիք» ամսագրում տպագրած հուշ-հոդվածում Վ. Նավասարդյանը տվեց 1918թ. ամռանը Երևան ժամանած Խալիլի և Արամի հանդիպման պատմությունը[7]: Ռուբենն իր հուշերում, որոնք առաջին անգամ առանձին գրքերով լույս տեսան 1951-1952թթ. Լոս-Անջելեսում, իսկ հետագայում ունեցան մի շարք վերահրա-

---

[1] Վրացեան Ս., Արամ (Սարգիս Յովհաննիսեան), «Զանգ», Երևան, 1919, փետրվարի 9, N 16:

[2] «Աշխատանք»ի բացառիկ՝ նվիրված Արամի հիշատակին, Երևան, 1919, փետրվարի 12, N 4:

[3] «Հայրենիք»ի խմբագրություն, Արամի կենսագրութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 1922, նոյեմբեր, N 1, էջ 26-31:

[4] «Դրօշակ», Փարիզ, 1929, հունվար-փետրվար, N 1-2, էջ 26-32 և այլն:

[5] Մխիթարեան Օ., Արամ, «Հայրենիք», 1923, հունիս, N 8, էջ 38-42:

[6] Շահխաթունի Ա., Արամը. յիշողութիւններ, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, հունվարի 30, N 670 . 249; նույնի, Խալիլ փաշայի հանդիպումները Արամի հետ (Իմ յուշերից), «Հայրենիք», 1959, հուլիս, N 7, էջ 27-34; նույնի, Սարդարաբադի հերոսամարտը եւ մահափորձը Արամ փաշայի դէմ (Իմ յուշերից), «Հայրենիք», 1959, օգոստոս, N 8, էջ 21-30:

[7] Նաւասարդեան Վ., Արամի կեանքից, «Հայրենիք», 1925, նոյեմբեր, N 1, էջ 75-79:

տարակություններ, այդ թվում Հայաստանում՝ 1990թ.[8], հետաքրքիր մանրամասներ ներկայացրեց Արամի գործունեության կարսյան շրջանի (1903-1904թթ.), Արևմտյան Հայաստանում 1905-1912թթ. ծավալած գործունեության, նաև 1918թ. Երևանում ծավալված իրադարձություններին Արամի մասնակցության վերաբերյալ:

Կոմսը (Վահան Փափազյան) իր հուշերում հետաքրքիր մանրամասներ ներկայացրեց Վանում 1905-1914թթ. Արամ Մանուկյանի գործունեության, ինչպես նաև արևմտահայերի առաջին համագումարին (1917թ.)նրա մասնակցության մասին[9]:

Արամի վերաբերյալ իրենց հուշ-մենագրություններում ուշագրավ տեղեկություններ են հաղորդում նաև Օ. Մխիթարյանը, Մալխասը (Արտաշես Հովսեփյան), Ս. Վրացյանը և ուրիշներ[10]: Օ. Մխիթարյանն իր մենագրության մեջ արձանագրել է Արամի մասնակցությունը Վանի 1915թ. ապրիլյան հերոսամարտին, ինչպես նաև նրա ձեռնարկները որպես Վանի հայկական նահանգապետության նահանգապետի:

Վանում Արամի ծավալած գործունեության մասին տեղեկություններ կան նրա ժամանակակից ոչ դաշնակցական գործիչների՝ ռամկավարներ Ա. Դարբինյանի, Ա. Եկարյանի, Ա. Թերզիբաշյանի, անկուսակցական Հ. Երամյանի հուշ-մենագրություններում[11]:

Արամի գործունեության մասին արժեքավոր հիշատակություններ կան օտարազգի ժամանակակիցների մենագրություններում[12]: Արամի

---

[8] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1-7, Երևան, 1990:
[9] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Ա, Պոսթըն, 1950, հ. Բ, Պէյրութ, 1952:
[10] Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930; Մալխաս, Ապրումներ, հ. Ա, Պէյրութ, 1956; Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962; նոյնի, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. Դ, Պէյրութ, 1965, հ. Ե, Բեյրութ, 1966; նոյնի, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
[11] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947; Յուշեր Արմենակ Եկարեանի, Խմբագրեց՝ Լ. Աճէմեան, Գահիրէ, 1947; Թերզիբաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942; Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Աղեքսանդրիա, 1929:
[12] Մորգենթաու Հ., Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Թարգմանիչ՝ Ենովք Արմեն, Երևան, ֆաքս. հրատ., 1990; Henry B., Au Pays de L'Epouvanter: L'Arme'nie Martyre. Pre'face de M. Paul Deschanel, Paris, 1917; Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919 և այլն:

գործունեության առանձին դրվագներ արձանագրվել են նաև սփյուռքում հրատարակված մի շարք աշխատություններում[13]:

Արամի գործունեության մասին ուշագրավ նյութեր կան Հայաստանում հրատարակված փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում[14], «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական հանդեսի թողարկումներում[15]:

Սկզբնաղբյուրային առատ տեղեկություններ կան ՀՅ Դաշնակցության պատմության նյութերի հատորյակներում[16]:

Արամի կյանքի ու գործունեության համեմատաբար ծավալուն և տարողունակ շարադրանքը տվել է 1918թ. ճակատագրական ամիսներին նրա գործակից Արշալույս Աստվածատրյանը: Դեռևս 1934-1935թթ. «Վեմ»

---

[13] Hovannisian R., The Republic of Armenia, vol. I, The First Year, 1918-1919, Berkeley-Los Angeles-London, 1974; նույնի, Armenian Van/Vaspurakan, U.S.A., 2000; Ter Minassian A., La Re'publique d'Arme'nie (1918-1920). La memoire du siecle, Bruxelles, 1989 և այլն:

[14] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Խմբագիր՝ Ջ. Կիրակոսյան, կազմողներ՝ Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1972; Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Խմբագիր Մ. Ներսիսյան, կազմողներ՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1991; Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна. Составители М. Нерсисян, Р. Саакян, Ереван, 1982; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний В. Микаелян, Ереван, 1995; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Պատ. խմբագիրներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000; Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Պատասխանատու խմբագիրներ՝ Միրզոյան Ս., Սամիկոնյան Ֆ., Երևան, 1998:

[15] Ավետիսյան Մ., Փաստաթղթեր Արամ Մանուկյանի պետական գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1990, N 2, էջ 133-152; Андраник Озанян, Документы и материалы, Главный редактор Галоян Г., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1991, N 1-2; Հայոց Ազգային Համախորհրդակցությունը (Թիֆլիս, 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբեր), Փաստաթղթեր ու նյութեր, Խմբագիր՝ Վ. Ղազախեցյան, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, N 1-2:

[16] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պատրաստեց եւ խմբագրեց Տասնապետեան Հ., հ. Բ, Պէյրութ, 1985; հ. Գ, Բէյրութ, 1976; հ. Դ, Բէյրութ, 1982:

ամսագրի[17] և 1951թ. «Հայրենիք» ամսագրի էջերում նա շարադրել էր իր հուշերը Արամի Երևանյան շրջանի (1918թ.) գործունեության մասին[18]: «Հայրենիք» ամսագրի էջերում (1963թ. նոյեմբերից 1964թ. օգոստոս) հրատարակած հոդվածաշարում Ա. Աստվածատրյանը, իր իսկ մատնանշմամբ, որպես աղբյուրներ ունենալով Արամի, Կոմսի, Ռուբենի և իր անձնական հուշերը, Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն»ը, «Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան» գիրքը, նկարագրել է Արամի կյանքն ու գործը ծնունդից մինչև մահը[19]: Նրանում վեր են հանվել Արամի նվիրվածությունը ազատագրական շարժմանն ու հայրենիքին, անշահախնդրությունն ու բարձր կամային հատկանիշները, ներկայացվել են նրա գործունեության մի շարք շրջաններ:

Ա. Աստվածատրյանի հոդվածաշարի, Արամի և այլ ժամանակակիցների հուշերի, ինչպես նաև մենագրություններից վերցված հատվածների միավորմամբ 1969թ. կազմվեց Արամի մահվան 50-ամյակին նվիրված «Արամը» ժողովածուն, որը 1991թ. վերահրատարակվեց Երևանում[20]: Ամբողջությամբ վերցրած՝ դրանք գնահատելի գործեր են եղել Արամի գործունեությանն աշխարհասփյուռ հայության բեկորներին ծանոթացնելու և հիշատակը վառ պահելու, նրա օրինակով սերունդներին դաստիարակելու առումներով: Սակայն, դրանք չի կարելի համարել Արամի կյանքի և գործունեության մասին ամբողջական աշխատություն՝ ելնելով այն իրողություններից, որ դրանցում ներկայացված չեն Արամի կյանքի և գործունեության մի ամբողջ շարք խնդիրներ ու ժամանակահատվածներ, իսկ մի մասն էլ ներկայացված է թերի:

Ցավոք հայրենիքում երկար ժամանակ Արամի մեծությունն ի հարկին չգնահատվեց: Հայաստանում խորհրդային կարգերի գոյության տասնամյակների ընթացքում հայրենական պատմագրությունը

---

[17] Աստուածատրեան Ա., Արամը (յուշեր ու տպաւորութիւններ), «Վեմ», Փարիզ, 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, N 6, էջ 23-35, հունվար-ապրիլ, N 1, էջ 57-72:
[18] Աստուածատրեան Ա., Արամը (յուշեր եւ տպաւորութիւններ), «Հայրենիք», Բոստոն, 1951, փետրվար, N 2, էջ 22-46:
[19] Աստուածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1963, նոյեմբեր, N 11, էջ 33-52, դեկտեմբեր, N 12, էջ 69-80, 1964, հունվար, N 1, էջ 50-64, փետրվար, N 2, էջ 48-55, մարտ, N 3, էջ 29-42, ապրիլ, N 4, էջ 67-89, մայիս, N 5, էջ 72-80, հունիս, N 6, էջ 75-80, հուլիս, N 7, էջ 74-80, օգոստոս, N 8, էջ 35-41:
[20] «Արամը», Մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991:

պարտադրված էր 19-20-րդ դարերի ազգային կարևորության իրադարձությունների, ազգային շատ ու շատ հերոսների թվում հրապարակավ եթե ոչ վատաբանելու, ապա մոռացության մատնելու կամ էլ ի միջի այլոց և խիստ վերապահումներով արտահայտվելու Արամի մասին[21]: Իհարկե, երբեք չպետք է մոռանալ այն իրողությունը, որ երբեմն խորհրդահայ պատմագիտական միտքը կարողանում էր ճեղքել իր ճանապարհին հարուցված գաղափարական-քաղաքական արգելքները և ասել ճշմարտությունը պատմական ոչ այնքան հեռավոր անցյալի իրադարձությունների, նաև առանձին գործիչների, այդ թվում և Արամի մասին: Դրա լավագույն օրինակներից է այն, որ դեռևս 1981թ. Հայկական սովետական հանրագիտարանում հրապարակվեց Արամի՝ ճիշտ է բավական զուսպ և հակիրճ, բայց ճշմարիտ կենսագրականը[22]: Իսկ որ գիտեին Արամի մեծության մասին և ցանկանում էին գնահատել այն, կասկածի ենթակա չէ: Դրա վկայությունն է ՀՀ պատմության պետական թանգարանի (ՀՀ ՊՊԹ) նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդում պահվող Արամին նվիրված Հ. Թուրշյանի անտիպ հոդվածը: Նրանում հեղինակը, ազատ լինելով ամեն տեսակ կապանքներից, բարձր է գնահատել Սարդարապատի հերոսամարտին Արամի մասնակցությունը[23]:

Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից հետո ստեղծվեցին բարենպաստ պայմաններ խորհրդային ժամանակաշրջանում պատմության անտեսված էջերի և պատմական գործիչների, այդ թվում և Արամ Մանուկյանի կյանքի և գործունեության ազգաշահ ուսումնասիրության համար: Պարբերական մամուլում տպագրվեցին նրա գործունեությունն արժևորող մի շարք հոդվածներ, նրա գործունեության առանձին կողմեր տեղ գտան պատմագիտական հիմնարար արժեք

---

[21] Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965; Աղայան Ծ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982; Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984 և այլն:

[22] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981, էջ 254:

[23] ՀՀ ՊՊԹ, Նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, Թուրշյան Հ., Հուշեր նվիրված Վանի 1915թ. ինքնապաշտպանության հերոս Արամ Մանուկյանին, բաժնի մատյան 941, մայր մատյան 11844, թ. 39:

ներկայացնող աշխատություններում[24]: 2004թ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտին կից գործող մասնագիտական խորհրդում տողերիս հեղինակը պաշտպանեց Արամի կյանքին և գործունեությանը նվիրված թեկնածուական ատենախոսություն[25]: Նրա հիման վրա 2005թ. հրատարակվեց Արամի կյանքի և գործունեության ամբողջական պատմությունը բովանդակող առաջին գիտական մենագրությունը[26], որը 2008 և 2009թթ. վերահրատարկվեց:

Սույն աշխատության մեջ, որը հանդիսանում է վերոհիշյալ մենագրության սեղմված տարբերակը, արխիվային նյութերի, ժամանակի մամուլի և այլ սկզբնաղբյուրների, այդ թվում Արամի հուշերի բնագրի և այլ գրառումների, ժամանակակիցների հուշերի, չեզոք (այդ թվում և օտարազգի) և ընդդիմադիր հեղինակների, հայրենի պատմաբանների հիմնարար աշխատությունների օգտագործման և վերլուծության միջոցով գիտականորեն ներկայացնում ենք Արամի կյանքի և գործունեության ամբողջական պատմությունը: Արամի ամբողջ կյանքը և կուսակցական, ազգային-քաղաքական ու պետական գործունեությունն իր բոլոր դրսևորումներով դիտարկել ենք որպես մեկ միասնական ամբողջություն, որպես հայ ժողովրդի ազատությանն ու գոյավիճակի բարելավմանը, անկախ պետականության վերականգնմանն ու ամրապնդմանը միտված գործի անբաժանելի բաղադրիչներ:

---

[24] Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), Երևան, 1999; Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, գ. Ա, Բ, Երևան, 1996; նույնի, Ազատագրական պայքարի ուղիներում, Չորս գրքով, գ. I, II, Երևան, 2003; Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999; Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997; նույնի, Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998; Կարապետյան Մ. Ս., Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 1998; Զոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ., Երևան, 2000 և այլն:

[25] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2004, 202 էջ:

[26] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2005:

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄՈՒՏՔԸ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Արամ Մանուկյանը (ծննդյան անվամբ Սարգիս Հարությունի Հովհաննիսյան[27]) ծնվել է 1879թ. մարտի 19-ին Արցախ-Ղարաբաղի Շուշի քաղաքում[28]:

---

[27] Մանկության տարիներին նրան հաճախ անվանել են Սերգեյ: Այդպես էր նաև Կարսում (1903-1904թթ.): Միայն 1904թ. վերջից Երկիր անցնելու շրջանից նա ընդունեց Արամ Մանուկյան հեղափոխական անունը: Դա ընդունված կարգ էր. Երկիր անցնող ազատագրական շարժման բոլոր գործիչներն ընդունում էին հեղափոխական անուն:

[28] Տես՝ Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2009, էջ 14-15: Այս տեսակետի կողքին, որը հաստատվում է բազմաթիվ ուղղակի և անուղղակի փաստերով, պատմագիտության մեջ կա երկրորդ տեսակետ ևս, որը գործչի ծննդավայր է ընդունում Ղափանի Զեյվա գյուղը:
Ինքը Արամ Մանուկյանը, տարբեր աղբյուրներում պարզ և որոշակի իրեն համարել է Ղարաբաղի ծնունդ: 1904թ., Ռուբեն Տեր-Մինասյանի հետ ունեցած զրույցներից մեկում նա հայտնել է. «...Ղարաբաղը ես լաւ կը ճանաչեմ, քանի որ անոր զաւակն եմ» (Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Երևան, 1990, էջ 192): 1916թ. մայիսին՝ Պետրոգրադում հայ փախստականական առաջին համագումարի պատգամավոր Արամը երկխոսությանը մասնակից իր զրուցակցին ասել է. «Ես ռուսահպատակ եմ, ծնունդով շուշեցի եմ...» («Գրական թերթ», Երևան, 1990, մարտի 30, N 14): 1917թ. գրած իր հուշերում նա շուշեցի Իշխանի հետ Վանում ունեցած առաջին հանդիպման առիթով ի միջի այլոց նկատել է. «...մեր հայրենակցութիւնն ու նախկին ծանօթութիւնը մեծ բան էր այս հեռաւոր եւ օտար հորիզոնի տակ» (Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարան, Նորագույն ձեռագրերի հավաքածո, N 146, Մանուկյան Արամ, Վերյիշումներ դիւցազնական անցեալից, Տետր 3, էջ 9բ; Արամ, Յուշեր, «Հայրենիք», 1923, ապրիլ, N 6, էջ 79):
Անշուշտ, հարցի վերաբերյալ անգնահատելի է գործչի միակ ժառանգի Սեդա Մանուկյանի կարծիքը: Արձագանքելով մեր հարցմանը նա, հենվելով մոր և հորաքրոջ հետ ունեցած կենդանի շփումների միջոցով ձևավորված տեղեկությունների վրա, 2000թ. հունվարի 24-ի նամակում գրում է, որ Արամի ծննդավայրը Շուշին է (Ա. Ասրյանի անձնական արխիվ, Սեդա Մանուկյանի 2000թ. հունվարի 24-ի նամակը Արմեն Ասրյանին):
ՀՅԴ իններորդ ընդհանուր ժողովի (1919թ.) կողմից կուսակցության պատմությունը պատրաստելու նպատակով ընտրված մարմնի անդամներ, ՀՅԴ ականավոր գործիչներ Ս. Վրացյանը և Ռուբեն Տեր-Մինասյանը 1922թ. հրատարակած Արամի կենսագրականում գրել են, որ Արամը ծնվել է Շուշի քաղաքում

Արամի հայրը զինագործ էր (դոնդախսազ), իսկ մայրը՝ Սոնան, զբաղվում էր երեխաների խնամքով, որոնք ընտանիքում հինգն էին՝ Հովհաննես, Կարապետ, Սարգիս, Աննա, Սառա*: Սարգիսը (Արամը, այսուհետև՝ Արամ) երեխաներից կրտսերն էր, ընտանիքի սիրո և ուշադրության առարկան: Նա նախնական կրթությունը ստացել է Շուշիի Ագուլյաց ծխական դպրոցում, ապա 1895թ. ընդունվել է Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոց:

Արամի պատանեկության և ուսումնառության տարիները՝ 1890-ական թթ., թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ազատագրական զինված պայքարի վերելքի, հայրենասիրական-ազատասիրական գաղափարների բուռն խմորումների ժամանակաշրջան էին: Շուշին դարձել էր այդ խմորումների կարևոր կենտրոններից մեկը: Թեմականի աշակերտ Արամը շատերի հետ անդամագրվեց Շուշիում իր կազմակերպչական ցանցն ընդարձակող հայ ազատամարտի

(«Հայրենիք», Բոստոն, 1922, նոյեմբեր, N 1, էջ 26): Արամի բազմաթիվ այլ ժամանակակիցներ ևս նրան համարել են շուշեցի («Հայրենիք», 1963, նոյեմբեր, N 11, էջ 34; «Աշխատանք», Երևան, 1919, փետրվարի 12, N 4):
Սակայն, հետագայում մի շարք հեղինակներ, ելնելով այն հանգամանքից, որ Արամի ծնողները գրեթե միշտ ապրում էին Զեյվայում, երբեմն հակասելով իրենք իրենց, սկզբնավորեցին Զեյվայի տարբերակը: Ս. Վրացյանը և Թադեն առաջիններն էին, որ 1929թ. ՀՅԴ օրգան «Դրօշակ»ում Զեյվան նշեցին որպես Արամի ծննդավայր («Դրօշակ», Փարիզ, 1929, հունվար-փետրվար, N 1-2 , էջ 26, 29):
Ղափանի Զեյվա գյուղի սբ. Ստեփանոս եկեղեցու չափաբերական մատյանների (Շուշիի մատյանները չեն պահպանվել) ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ոչ մի հետք չկա Արամ Մանուկյանի՝ Սարգիս Հովհաննիսյանի, ծննդյան մասին: Դրանցում տեղեկություններ չկան նաև նրա ծնողների, եղբայրների ու քույրերի ծննդյան, մահվան կամ ամուսնության վերաբերյալ: Հետևաբար, Արամ Մանուկյանի ծննդավայրը Շուշին է:
* Արամի հարազատների մի մասը մահացել են բնական մահով, մինչև 1920թ. ղարաբաղյան կոտորածները, իսկ մյուսները՝ կոտորածների ժամանակ: Արամի եղբայրներից ու քույրերից միայն Սառային է հաջողվել շուրջը հավաքել իր և Կարապետի երեխաներին, մի կերպ հասնել Երևան, որտեղ հանգրվան են գտել Արամի կնոջ՝ Կատարինե Զալյանի օգնությամբ: Արամի քույրերի ու եղբայրների երեխաներից այժմ կենդանի է Կարապետի դուստրը, որը երկար տարիներ ապրում էր Բաքվում, 1988թ. հետո այստեղ ծավալված հակահայ դեպքերից հետո տեղափոխվել է Բելոռուսիա: Արամի դուստրը՝ Սեդա Մանուկյանը (ծնվել է 1918թ. Երևանում) մինչ 1976թ. ապրել է Երևանում, իսկ այդ թվականից մինչև մահը (2005թ.) Մոսկվայում: Սեդա Մանուկյանի ամուսինն է եղել Խանասորի Վարդանի որդին՝ Ռուբեն Սեհլաբյանը (1912-1980):

առաջատար ուժ ՀՅ դաշնակցությանը և իր ամբողջ կյանքն անմնացորդ նվիրեց հայ ժողովրդի ազատության վեհ գործին:

Արդեն թեմական դպրոցում ուսանելու տարիներին Արամն աչքի ընկավ կուսակցական մեծ ակտիվությամբ: Նա քարոզչական-կազմակերպչական աշխատանքներ ծավալեց և թեմականում, և քաղաքում ու գյուղերում: Նրա գործունեությունը նկատելի էր հատկապես թեմական դպրոցում: Այստեղ նա նախաձեռնեց աշակերտական հավաքներ, մի քանի ընկերների հետ հրատարակեց «Կոկոն» անունով ձեռագիր թերթիկը՝ քարոզելով հայրենասիրական-հեղափոխական գաղափարներ: Հեղափոխական գաղափարներ տարածելու համար Արամը և նրա մի շարք կուսակցական ընկերներ 1900-1901 ուստարվա վերջին հեռացվեցին Շուշիի թեմականից[29], որից հետո ուսումը շարունակեցին Երևանի թեմական դպրոցում: Այստեղ ևս եռում էր աշակերտական կյանքը. աշակերտությանը կրթական հարցերից բացի հուզում էին նաև ազգային-հասարակական խնդիրներ: Արամն անմասն չմնաց այդ շարժումից: Նա պատրաստում էր «դասախոսություններ, ռեֆերատներ, հրատարակում աշակերտական թերթ. կապ պահպանում ուրիշ քաղաքների աշակերտական միութիւնների հետ և մասնակցում կուսակցական ընդհանուր գործունէութեան»[30]:

Արամը բարեհաջող կերպով Երևանի թեմականն ավարտեց 1903թ. մայիսին[31]:

Դեռևս 1901 թվականից Արամը գտնվում էր ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի տրամադրության տակ, իսկ ուսումն ավարտելուց հետո նա հաստատվեց Բաքվում, որը 20-րդ դարասկզբին Անդրկովկասի հայ հասարակական-քաղաքական կյանքի խոշորագույն կենտրոններից էր: Այստեղ հայ քաղաքական ուժերը, առանձնապես ՀՅԴ-ն և հայ սոցիալ-դեմոկրատական խմբակները հայ բանվորության շրջանում ծավալել էին աշխատանքներ՝ ձգտելով իրենց շուրջը համախմբել նրանց: Քաղաքական հորձանուտ ներքաշված Արամը

---

[29] Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 563-568; Թաշճեան Վ., Իշխանը (Վանայ Իշխանի կյանքն ու գործունեությունը), Երևան, 1994, էջ 20:
[30] «Զանգ», Երևան, 1919, փետրվարի 9, N 16:
[31] Հ ԱԱ, ֆ. 8, ց. 1, գ. 59, թ. 52:

շուտով դարձավ Բաքվի կազմակերպության ճանաչված գործիչներից մեկը[32]: Նա մասնակցեց քաղաքական ցույցերին ու գործադուլներին, որպես Դաշնակցության ներկայացուցիչ 1903թ. ընտրվեց գործադուլային բյուրոյի անդամ[33]: Հատկանշական է այն, որ հավաքների ժամանակ Արամն արծարծում էր նաև արևմտահայությանն օգնելու խնդիրը:

Իբրև ՀՅԴ անդամ՝ Արամն ակտիվ մասնակցություն ունեցավ հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին ցարական հրամանագիրը չեղյալ համարելու համար մղվող պայքարին: Այնուհետև ՀՅԴ Բաքվի կ. կոմիտեի հրահանգով նա մի կարճ ժամանակով եղավ Գանձակում՝ տեղի ինքնապաշտպանական աշխատանքները կազմակերպելու նպատակով, ապա անցավ Կարս՝ փորձառություն ձեռք բերելուց հետո Սասուն անցնելու մտադրությամբ:

Կարսում, որը 20-րդ դարի սկզբին հանդիսանում էր Արևմտյան Հայաստանին օգնություն ապահովող առանցքային երկու հենակետերից մեկը (մյուսը ս. Թադեի գիծն էր Պարսկաստանում), ՀՅ դաշնակցությունը ստեղծել էր կուսակցական ամուր կառույց: Այստեղ Արամը կատարում էր Կարսի կ. կոմիտեի հրահանգները, ապահովում կապը ժողովրդի և կուսակցական օղակների միջև, զբաղվում ազատագրական շարժման խորացմանն ուղղված քարոզչական գործունեությամբ: Եռանդուն գործունեություն ծավալած Արամը կարճ ժամանակում ձեռք բերեց մեծ հեղինակություն: Նրանից մի փոքր ուշ Կարս անցած Ռուբենը նկատել է. «Երբ ես Կարս եկայ, որպէս փրոփականտի կեդրոնական դէմք մնացէր էր Սերգէյը (Արամը-Ա.Ա.), շրջապատուած ինձ պէսներով, որոնք թէեւ կը տեսնէին, կը հասկնային, բայց երբ գործը կու գար հասկցնելու դիմացինին, լեզունին փայտ կը կտրէր, կը ծանրանար: Ուստի լաւ էր որ մենք լռէինք եւ փրոփականտի գործը ձգէինք Սերգէյին»[34]: Ուղղամիտ, զրուցակիցների հետ անմիջական Արամը ժողովների ժամանակ խոր հավատով էր պաշտպանում իր ասածը և ոգևորում բոլորին: Ազատամարտի նվիրյալներ Մենակի և Իսաջան Առաքելյանի

---

[32] Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գ. I, Երևան, 2003, էջ 599:
[33] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, Պատրաստեց եւ խմբագրեց Տասնապետեան Հ., Բեյրութ, 1976, էջ 165:
[34] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Երևան, 1990, էջ 88:

նահատակության առիթով նա նշում էր. «սիրելիք, լացը, սուգը նրանց համար չէ. նրանք նահատակուեցին եւ անմահութիւնը վաստակեցին: Լացը, սուգը մեզի համար է, որ խօսում ենք նահատակութիւնից. բայց վախենում ենք վաստակել զայն...»: Ռուբենի արտահայտությամբ «Սերգէյը իր նպատակին հասած էր՝ պատրաստած էր բոլորը «մատաղ» ընելու»[35]: Արամի հաջողությունները քարոզչական բնագավառում այնքան ակնհայտ էին, որ Դաշնակցության Կարսի կազմակերպությունը նրան վստահեց քարոզչական գործի ղեկավարությունը, հակառակ իր անհամաձայնությանը, թե դա չէր Կարս անցնելու իր նպատակը:

Արդեն այս շրջանում Արամը հանդես էր գալիս որպես հասուն գործիչ: Նա գտնում էր, որ ազգային իրավունքները վերականգնելու համար պետք է ապավինել սեփական ուժերին[36]:

Արամն ակտիվորեն մասնակցեց Երկիր ուղարկվող զինատար խմբերի կազմակերպմանը, որոնց միջոցով ազգային-քաղաքական ուժերը հույս ունեին նոր թափ հաղորդել ազատագրական պայքարին: Արամը երիտասարդությանը հորդորում էր իր հետ Սասուն անցնել: Ավելին, 1903թ. սեպտեմբերին նա միացավ Խանի և Նեղուզի 150 հոգուց բաղկացած խմբին՝ Երկիր անցնելու մտադրությամբ, սակայն հիվանդության պատճառով կես ճանապարհից հետ վերադարձավ[37]: 1903-1904թթ. Երկիր ուղարկվեցին բազմաթիվ այլ խմբեր ևս, սակայն նրանք գրեթե բոլորն էլ ունեցան ողբերգական վախճան: Նահատակվեցին Արամի մերձավոր ընկերներից շատերը:

Այդ իրադարձություններից հետո՝ ազատամարտի մեջ առաջին քայլերը կատարող Արամը որոշեց անցնել Արևմտյան Հայաստան (Երկիր) և տեղում նպաստել ազգային-ազատագրական շարժման ծավալմանը:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905-1907ԹԹ.

Արամի նախնական մտադրությունն էր անցնել Սասուն, սակայն Սասունի ապստամբության պարտությունը, և հատկապես Պարսկաս-

---

[35] Նույն տեղում, էջ 45:
[36] Նույն տեղում, էջ 187-196:
[37] «Հայրենիք», Բոստոն, 1922. N 1. էջ 30:

տանից Վան անցնելու դյուրությունները փոխեցին նրա մտադրությունը: Կարսից Արամն անցավ Թիֆլիս, որտեղ ՀՅԴ Բյուրոյից ստացավ համապատասխան հրահանգներ, ինչպես նաև որպես կուսակցության Վանի ղեկավար մարմնի իրավահավասար անդամ գործելու լիազորություն, ապա 1904թ. աշնանը շարժվեց դեպի Պարսկաստան՝ թուրք-պարսկական սահմանին մերձակա ս. Թադեոս (Թադե) առաքյալ վանքի գծով Վան թափանցելու մտադրությամբ: 1904թ. հոկտեմբերին նա հաստատվեց ս. Թադեոս առաքյալի վանքում, որը հանդիսանում էր ՀՅԴ գլխավոր կայանը Պարսկաստանում: Հակառակ անմիջապես մեկնելու ցանկությանը՝ Արամը հարկադրված չորս ամիս մնաց վանքում: Այդ ընթացքում նա ծանոթացավ վանքի դերին, փոխադրության ձևերին, այստեղ գործող անձանց: Վանքում գործող գործիչներին տրված գնահատականներից պարզվում է, որ նրա համար մարդկանց մեջ կարևորը ընդհանուր գործին օգուտ բերելն էր ու ազնվությունը: Գովեստով խոսելով մի շարք գործիչների, հատկապես վանահայր Գևորգ վարդապետ Նալբանդյանի մասին, նրան ներկայացնելով որպես աշխատասեր և հայրենասեր մի անձնավորություն՝ Արամը պախարակում էր վանքում ՀՅԴ ներկայացուցիչ Արթուրին, նշելով, որ նա բիրտ և ապաշնորհ անձնավորություն էր[38]:

1905թ. հունվարին նա նամակներ ստացավ ՀՅԴ Վասպուրականի կազմակերպության ղեկավար Կոմսից և իր ընկեր Իշխանից: Վերջինս, մատնանշելով Երկրում գործելու դժվարին պայմանները, Արամին խորհուրդ էր տալիս «լաւ խորհել եւ ապա միայն Երկիր մտնել...»[39]: Սակայն, Արևմտյան Հայաստան անցնելու վճռականությամբ լի գործչին դա չէր հուզում: Հունվարի վերջին շարժվելով Թադեի վանքից, անցնելով մոտ 130-150 կմ ճանապարհ, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ (բավական է նշել, որ նա, թուրքերի ու քրդերի կողմից որպես դրսից եկվոր չճանաչվելու համար, իր ուսերին կրում էր յուղի տիկ, որը ծակվել էր և յուղը ներծծվում էր նրա շորերի ու մարմնի մեջ, իսկ նա չէր

---

[38] Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարան, Նորագույն ձեռագրերի հավաքածո, N 146, Մանուկյան Արամ, Վերյիշումներ դիւցազնական անցեալից, S. 1, էջ 29բ-30բ: Այսուհետև՝ Մատենադարան, ՆՁՀ, N 146, Արամ, Վերյիշումներ..., S.:

[39] «Արամը», էջ 194:

կարող դա հանել ուսերից) 1905թ. փետրվարի 6-ին Արամը ծպտյալ կերպով՝ հասարակ գյուղացու շորերով, մտավ Վան[40]:

Վանի նահանգը 20-րդ դարի սկզբին վերածվում էր Արևմտյան Հայաստանում ծավալվող ազգային-ազատագրական շարժման կենտրոնի: Տարոնի հետ միասին այն դիտվում էր Արևմտյան Հայաստանում իրականացվելիք ապստամբության երկրորդ օջախ:

Վանում Արամին դիմավորեց և գործերի վիճակին ծանոթացրեց ՀՅԴ Վանի կազմակերպության ղեկավար Կոմսը: Վերջինիս տպավորությունն այն էր, որ Արամը լուրջ, խելացի և ունակ գործիչ էր, և կարող էր նպաստել գործերի հաջողությանը[41]:

Արամի ժամանելուց կարճ ժամանակ անց Կոմսը վճռեց հեռանալ Վանից: Դա Արամին խոր անհանգստության մատնեց: Պատճառն այն էր, որ Կոմսը գործերին քաջատեղյակ, շրջահայաց, և որ չափազանց կարևոր էր՝ նաև տեղացի գործիչ էր ու ժողովրդի մոտ ուներ մեծ հեղինակություն: Իսկ տեղացի գործիչ լինելը շատ կարևոր հանգամանք էր Երկրում, մասնավորապես Վանում: Վանեցիներն այնքան էլ մեծ վստահություն չէին տածում «դրսեցիների» նկատմամբ, գտնելով, որ նրանց սիրտը չէր կարող ցավալ Վանի համար, որովհետև նրանք ժամանակավոր բնակիչներ էին տեղում, չունեին անգամ ընտանիք:

Կարճ ժամանակ անց՝ ստանձնելով ՀՅԴ Վանի կազմակերպության ղեկավարությունը, նա, ելնելով ազատագրական շարժման անցյալից, և հետամուտ լինելով իր կուսակցության կողմից որդեգրվող պայքարի նոր մարտավարությանը, եռանդուն գործունեություն ծավալեց ընդհանուր ապստամբության համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելու, առաջին հերթին Վան զենք-զինամթերք փոխադրելու ուղղությամբ[42]: Ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Սիմոնյանը՝ Արամը պաշտպանում էր «Հրայրի այն գաղափարը, որ եթե հայերը պետք է ապստամբություն բարձրացնեն, ապա դա պետք է լինի համաժողովրդական՝ նախապատրաստված բազմակողմանիորեն և հիմնավոր»[43]: Բռնի հեղա-

---

[40] Մատենադարան, ՆՁՀ, N 146, Արամ, Վերյիշումներ..., Տ. 1, էջ 60բ:
[41] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Ա, Պոսթըն, 1950, հ. Ա, էջ 350:
[42] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պատրաստեց Պատրաստեց եւ խմբագրեց Տասնապետեան Հ., հ. Գ, Բեյրութ, 1976, էջ 105:
[43] Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գ. I, էջ 628:

փոխությունը, այսինքն՝ զինված ապստամբությունը համարելով իրենց վերջնական նպատակը՝ Արամը գտնում էր, որ այն պետք է դնել նպաստավոր հողի վրա[44]: Հատկանշական է այն, որ լինելով դաշնակցական գործիչ, նա չէր խորշում օգտվել արմենականների փորձից, որոնք ունեին նախապատրաստական աշխատանքների հարուստ անցյալ:

Արամի ղեկավարության շրջանում ավարտվեց Վանի նահանգում ՀՅԴ ամբողջական հաստատման և զանգվածային կազմակերպության վերածման գործընթացը: Այդ առումով շատ կարևոր էր հիմնականում արմենականների հետ կապված տեղի մտավորականությանը ՀՅԴ կողմը ներգրավելու Արամի մոտեցումը: Նրա համոզմամբ առանց տեղական ուժերի հնարավոր չէր գործ կատարել[45]: Սակայն, դա այնքան էլ դյուրին գործ չէր: Բանն այն է, որ դեռևս Կոմսի ժամանակ կ. կոմիտեի տեղացի անդամներից Թեոսը և Ալեսը դեմ էին արտահայտվել նրանց ՀՅԴ մտնելուն, նշելով, թե քաղաքի զգալի մասն, ուսուցչությամբ հանդերձ, արմենական էր և թշնամի Դաշնակցությանը, մի մասը չեզոք կամ հակառակ էր հեղափոխությանը, իսկ մնացած մասը «կամ դաւաճան են եւ կամ կառավարութեան գործիք»[46]: Ըստ նրանց, զանգվածային կազմակերպության ստեղծումը կարող էր հանգեցնել նրա մեջ լրտեսների սողոսկմանը: Անշուշտ, իրերին այդ կերպ նայելը սխալ էր: Սակավաթիվ ու կղզիացած կազմակերպությունը չէր կարող հասնել իր նպատակների կենսագործմանը, նրա գոյությունը կդառնար սոսկ անվանական: Մինչդեռ Արամի մտադրության իրականացումը նշանակելու էր ՀՅԴ շարքերի խտացում և ամրապնդում: Ստանալով Ռուբենի և Իշխանի աջակցությունը՝ Արամը Արմենական կուսակցության գործիչներ Հ. Բաղեշցյանին ու Ղ. Մելոյանին հրավիրեց Դաշնակցություն, այն էլ միանգամից Վանի կ. կոմիտե[47]: Այդ աննախադեպ քայլն ինքնին վկայում է, թե ինչպիսի նշանակություն էր տրվում նշված գործիչների ներգրավմանը Դաշնակցության մեջ: Հիրավի, Վանում տիրապետող գավառական հայրենասիրության մթնոլորտում տեղական ուժերի ընդգրկումը Դաշ-

---

[44] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան..., հ. Գ, էջ 104:
[45] Նույն տեղում, էջ 102:
[46] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 2, Երևան, 1990, էջ 126:
[47] Մատենադարան, ՆՁՀ, N 146, Արամ, Վերյիշումներ..., Տ. 4, էջ 66բ-67բ:

նակցության մեջ կարևորագույն գործոն էր կուսակցության զարգացման և ազատագրական շարժման խորացման համար:

Ձեռնարկված քայլերի շնորհիվ ՀՅԴ շարքերը զգալիորեն ստվարացան: 1908թ. թուրքական սահմանադրության նախօրյակին Դաշնակցությունը Վանում ուներ մոտ 1000 անդամ, իսկ գյուղերի «մեծ մասը՝ քահանայով, ռէսով և գգիրով՝ դաշնակցական էին...»[48]: Թե՛ քաղաքում և թե գյուղերում կազմակերպված դաշնակցական խմբերը առաջ էին տանում զինման գործը, Վարագա լեռան վրա զբաղվում էին զինավարժությամբ, կազմակերպում էին գյուղերի ինքնապաշտպանությունը, նպաստում կրթական գործին և այլն:

ՀՅԴ գործունեության կարևորագույն կողմը երկրում մարտական-զինականն էր, առանձնապես հետագա պայքարի համար զենք կուտակելը: Այդ ուղղությամբ Արամի ղեկավարությամբ ՀՅԴ Վանի կազմակերպությունը ծավալեց նպատակամղված գործունեություն: Նահանգի հայկական գյուղերում ստեղծվել էին 7-15 հոգանոց մարտական խմբեր, որոնք հանդիսանում էին ՀՅԴ զինվորական ուժի միջուկը: Գյուղական խմբերի վրա այլևայլ խնդիրների հետ պարտականություն էր դրված պաշտպանել գյուղերը թուրք-քրդական ելուզակների ոտնձգություններից և կազմակերպել գյուղերի զինումը: Դա կատարվում էր հետևյալ կերպ. ունևոր գյուղացիներին պարտադրվում էր ունենալ անհատական զենք, իսկ մնացյալ գյուղացիներից, ըստ կարողության, պարտադիր կարգով հավաքվում էր բնամթերք և նրա վաճառքից գոյացած գումարը հատկացվում զենքի: ՀՅԴ IV ընդհանուր ժողովում Արամը նշում էր, որ 1906թ. ընթացքում կուսակցությունն ավելի շատ ռազմամթերք է փոխադրել Վասպուրական, քան նախկինում[49]: 1906թ. Վասպուրական էր փոխադրվել ավելի քան 400 հրացան: Այդ գործին ևս Արամն ունեցել էր անմիջական մասնակցություն: 1906թ. հոկտեմբերին, Վիեննա մեկնելուց առաջ, հաստատվելով սբ. Թադեում՝ նա երկիր էր առաքել մի քանի հարյուր հրացան, մոտ 100 հազար փամփուշտ և այլ ռազմամթերք[50]:

---

[48] «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, հունվարի 3, N 6, էջ 4:
[49] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան..., հ. Գ, էջ 105:
[50] Մատենադարան, ՆՁՀ, N 146, Արամ, Վերյիշումներ..., Տ. 6, էջ 22բ-23բ; «Արամը», էջ 373:

Ձեռնարկվեցին արդյունավետ քայլեր հայության ներքին կյանքին թուրքական կառավարության միջամտությունները կանխելու և քրդական շահատակություններին վերջ տալու ուղղությամբ: Թուրքական իշխանություններն առիթը բաց չէին թողնում միջամտելու հայերի ներքին կյանքին, որը թանկ էր նստում վերջիններիս վրա. նրանք ենթարկվում էին հավելյալ սոցիալ-տնտեսական, ֆիզիկական ճնշման և անձնական նվաստացման: Ժողովրդի գլխին պատուհաս էին նաև թուրքական դատարանները, որոնք տարիներով ձգձգում էին դատական գործերը և դրանք լուծում միայն կաշառքի, ծեծի ու կեղծիքի միջոցով: Կառավարական անտեղի միջամտությունների բացառմանը միտված առաջնակարգ քայլերից էր դատական գործի տնօրինումը ՀՅԴ Վանի կազմակերպության կողմից: Դաշնակցական դատարանները դատերը կատարում էին անվճար, առանց ձգձգումների, տեղական սովորույթների համաձայն:

Վանի հայտնի չեզոք գործիչ Հ. Երամյանը, որը տարբեր առիթներով քննադատել է Դաշնակցությանը, դրվատել է նրանց դատական գործունեությունը՝ գրելով. «Երեք շեֆերը՝ Կոմս, Արամն ու Իշխանը, ինչպես և իրենց գաւառական գործակալները քաղաքի և գաւառներու մէջ դատական կամ առնելիքի ու տալիքի խնդիրներ ևս կը վճռէին այնչափ արագ և ստէպ այնքան արդար, որ թուրքեր ու քիւրտեր անգամ անոնց գաղտնի դատարանները կը դիմէին՝ պետական ատեաններու ձգձգումներէն և ծսխսերէն խուսափելու համար»[51]:

Դատական գործունեությանը զուգահեռ Արամը և նրա կուսակիցները աշխատանքներ ծավալեցին նաև հայ հասարակական կարգն ամրապնդելու ուղղությամբ: Ազգաբնակչությանն արգելվեց թաղերում օղի վաճառելը, հարբելը, թղթախաղը: Այդ քայլի նպատակը անհարկի միջադեպերի բացառումն էր: Պատասխանատվություն սահմանվեց կեղծ դրամ հատելու, թուրքերին ու քրդերին զենք-զինամթերք վաճառելու, գողության, այդ թվում թուրքերից ու քրդերից կատարվող գողության համար: Այդ ամենը նպաստում էր հայկական կյանքի առողջացմանը, թուրքական իշխանությունների միջամտությունների նվազեցմանը:

---

[51] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Աղեքսանդրիա, 1929, էջ 70-71:

Ժողովրդի դրության բարելավման, ազատագրական շարժման հենարանն ամրացնելու տեսակետից առանձնակի նշանակություն ուներ պայքարը քրդերի բռնությունների դեմ: Բանն այն է, որ քրդական ցեղերը, թուրքական վարչակարգի հովանավորության պայմաններում, անպատիժ կերպով սպանում և թալանում էին արևմտահայությանը, ոտնահարում էին նրանց մարդկային, ազգային և կրոնական իրավունքները: Այդ գործողությունների հետևանքով ժողովուրդը մատնվում էր թշվառության, թողնում հայրենիքը, փոխում կրոնը: Դա նաև ծանր հարված էր հասցնում հայ ազատագրական ուժերի հեղինակությանը: Պայքարը տարվում էր տարբեր ձևերով: Արամը և նրա ընկերները ժողովրդին հորդորում էին քուրդ աղաներին հարկ ու «նվերներ» չտալ, ձրի պարհակներ չկատարել՝ սպառնալով, որ տվողները կենթարկվեին պատասխանատվության: Արգելվել էր նաև դատական հարցերով դիմել քուրդ աղային: Այդ քարոզչության հետևանքով աստիճանաբար վերացվեցին կողմնակի տուրքերն ու հարստահարությունները[52]: Հաճախ ժողովրդին ցուցաբերվում էր նաև զինական օգնություն: Այսպես, Վասպուրականին սահմանակից Բիթլիսի նահանգի Ոզմ գյուղը կուսակցության զինական աջակցությամբ մղած երկարամյա պայքարից հետո լիովին ազատագրվեց քրդական լծից[53]: Այդ առիթով Արամն արտահայտել է հետևյալ հատկանշական միտքը. «... քիւրտը ճանաչում է զէնքի ուժը. ով կռուող է, կտրիճ է, նա իրաւունք ունի աղա, մանաւանդ «աշիր» կոչուելու, այսինքն ազնուական դառնալու: Այսպէս է եղել միշտ եւ ամէն տեղ. զէնքն եւ ուժն են մարդկանց ազնուական դարձրել եւ ոչ թէ արիւնը»[54]:

Քրդական բռնությունների դեմ ուղղված պայքարի շնորհիվ 1906-1907թթ. հայկական գավառների մեծամասնությունն ազատվեց նրանց բռնություններից[55]:

Ելնելով ազատագրական շարժման անցյալից Արամը մի պահ հակվեց սուլթանական բռնապետության դեմ թուրք հակասուլթանական

---

[52] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան..., հ. Գ, էջ 18:
[53] Մատենադարան, ՆՁՀ, N 146, Արամ, Վերյիշումներ..., Տ. 5, էջ 19բ-20բ:
[54] Նույն տեղում, էջ 21բ; «Արամը», էջ 330:
[55] Նույն տեղում, էջ 21բ; «Վան-Տոսպ», 1916, հունվարի 17, N 8, էջ 4; Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), Երևան, 1999, էջ 312:

ուժերի հետ գործակցաբար պայքարելու օգտին: Նա և ՀՅԴ Վանի մյուս գործիչները գտնում էին, որ մեկուսի պայքարով հնարավոր չէր ապահովել հայ ազատագրական շարժման հաջողությունը, և անհրաժեշտ էին համարում զարկ տալ ընդհանուր նպատակներ հետապնդող հակապետական շարժմանը՝ հուսալով այդ ձևով փոփոխել իշխող վարչակարգը և հասնել հայ ժողովրդի դրության բարելավմանը[56]: Արամն արտահայտվեց նաև հայ-քրդական համերաշխության օգտին, ամենևին չակնկալելով, թե քրդերն իրենց հետ միասնաբար կապստամբեն սուլթանի դեմ: Նա ընդամենը ձգտում էր նրանց չեզոքությանը: Սակայն, այս ուղղությամբ գործադրված ջանքերն էական արդյունք չտվեցին, քանզի խիստ տարբեր էին մի կողմից հայ, մյուս կողմից՝ թուրք և քուրդ ժողովուրդների շահերն ու կենսակերպերը. թուրքը և քուրդը իշխող էին, վայելում էին ազգային, կրոնական ու տնտեսական արտոնություններ, ինչպես նաև վարչակարգի հովանավորությունը, ապրում էին հային անպատիժ հարստահարելով, կողոպտելով և շահագրգռված չէին բարեկամությամբ:

Արամի գործունեությունը մշտապես միտված էր ազգային խնդիրների լուծմանը: Նույնիսկ այն դեպքում, երբ նա քարոզչական աշխատանքների ժամանակ արծարծում էր նաև սոցիալիստական գաղափարներ, աճող սերնդի մեջ ներարկում պահպանողականության դեմ պայքարի ոգի, նրա գլխավոր մտահոգությունն արևմտահայության ազատագրությանը նպաստելն էր: Արամը փորձում էր ընդլայնել ազատագրական շարժման սոցիալական բազան, և այդ պատճառով որոշակիորեն նպաստեց «նոր սերնդական» շարժման առաջացմանը:

Կովկասյան հեղափոխական իրադարձությունների ազդեցության տակ գտնվող այդ շարժման առաջնորդները հանդես էին գալիս կրոնի, եկեղեցական կարգերի, պահպանողականության, ընտանեկան՝ հնուց եկող ավանդույթների, հարուստների դեմ, արտահայտվում էին անսահմանափակ ազատության օգտին, հասարակական կյանքի խթանիչ էին համարում սոցիալ-տնտեսական գործոնները, գտնում, որ հեղափոխական ձեռնարկները պետք է ծառայեն համամարդկային նպատակներին:

---

[56] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 4, Երևան, 1990, էջ 228-229, 308-310:

Արամը գտնում էր, որ հասարակական մեծ ակտիվություն դրսևորող, հեղափոխական գործին նվիրված «նոր-սերնդականների» ծայրահեղ հայացքները ժամանակի ընթացքում կհարթվեին և նրանք կդառնային հեղափոխությանը պիտանի տարրեր[57]: Եվ նա չսխալվեց: Այդ սերունդն ակտիվորեն մասնակցեց Վանի 1915թ. հերոսամարտին: Սակայն, ընդունելով հանդերձ «նոր-սերնդականներին» Արամը թույլ չտվեց, որ շարժումն ընդունի վտանգավոր չափեր, հատկապես որ շարժումը հարուցել էր վանեցիների դժգոհությունը: Արամը, մատնանշելով տեղական պայմանները, սոցիալիզմը արևմտահայ իրականության մեջ ամբողջովին ներդնել ձգտողներին զգուշացնում էր, որ դրա համար անհրաժեշտ է համապատասխան հող: Այդ իսկ պատճառով կարճ ժամանակ անց «նոր-սերնդական» շարժումը կասեցվեց:

Ինչ վերաբերում է Վասպուրականում իրականացվող քարոզչության բովանդակությանը, ապա պետք է ասել, որ շեշտը դրվում էր ինքնապաշտպանության վրա, ըստ որում, մոտակա նպատակ էր դիտվում կյանքի և գույքի ապահովությունը[58]:

Արամի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում գործող ազատագրական շարժման մյուս գործիչների գործունեությունն ընթանում էր ծանրագույն պայմաններում: Նրանց համար գոյություն չուներ ցերեկային կյանք, նրանք ենթակա էին ամենօրյա ծերբակալման և մահվան վտանգի: Նրանց համար երազ էր անկաշկանդ ծիծաղելը, առանց շորերի մաքուր անկողնում քնելը, մշտական կացարան ունենալը: Արամը, ինչպես իր նման շատերը, հարկադրված էր ամեն օր մութն ընկնելուն պես բազմաթիվ զրկանքներ կրելով փոխել պատսպարանը՝ թուրքական կառավարության հետապնդումներից խուսափելու և ընդհարումների տեղիք չտալու համար: Արամի գործունեությունն ավելի դժվարացավ 1906թ. սկզբին, երբ նա հիվանդացավ աչքացավով և ոսկրացավով՝ զրկվելով ինքնուրույն շարժվելու հնարավորությունից:

Արևմտյան Հայաստանում ծավալած գործունեության առաջին տարիներից Արամն իրեն դրսևորեց որպես հետևողական, կազմակերպչական մեծ ջիղ ունեցող գործիչ: Նրա ղեկավարության

---

[57] Փափազեան Վ., հ. Ա, էջ 487-489; Ռուբէն, հ. 5, էջ 248:
[58] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան..., հ. Գ, էջ 74-75:

շրջանում ՀՅԴ Վասպուրականի կառույցը դարձավ ամենամարտունակ ու հեղինակավոր կազմակերպությունը Արևմտյան Հայաստանում, իսկ ինքը կարճ ժամանակում ձեռք բերեց մեծ հեղինակություն և ժողովրդի կողմից արժանացավ «փաշա» տիտղոսի: Ասվածի վառ վկայություններից է այն հանգամանքը, որ 1906թ. Վանում գումարված ՀՅԴ Վասպուրականի շրջանային երրորդ և չորրորդ ժողովների կողմից Արամն ընտրվեց Վանի (Շամի) շրջանից կուսակցության IV ընդհանուր ժողովի պատգամավոր:

Իբրև ՀՅԴ Վանի կազմակերպության ներկայացուցիչ Արամը մասնակցեց 1907 թվականին Վիեննայում կայացած ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին: Նա այն պատգամավորների թվում էր, որոնք ըստ ամենայնի դնում էին ազատագրական պայքարի անցած տարիներին կուսակցության ծավալած գործունեության վերաքննման, սխալներն ընդունելու և դրանք չկրկնելու խնդիրը: Նա նշում էր. «Ներկայումս մենք ոչ թէ պիտի նոր ձեռնարկների մասին մտածենք, այլ պիտի աշխատենք մի նպատակայարմար տակտիկա ընդունել, որից կը բխեն նոր ձեռնարկները: Հին մեթոդը շարունակելով մենք նոյն հին սխալները կ'անենք»[59]: Բոլոր խնդիրներում նրա մեկնակետը ժողովրդին ջարդերից ու զրկանքներից հեռու պահելու մտահոգությունն էր: Արամը հանդես եկավ նաև իբրև կուսակցության միասնության սկզբունքի հետևողական պաշտպան: Չնայած իր երիտասարդ տարիքին, նա արդեն բավականին փորձառու քաղաքական գործչի տպավորություն էր թողնում, որը չէր ընդունում ծայրահեղ ծախակողմյան-անջատական տրամադրություններով տարված որոշ երիտասարդ գործիչների տեսակետները՝ Ղարաբաղի բարբառով նրանց տալով «խոխեք» փաղաքշական բնորոշումը:

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՀՅԴ Վանի կազմակերպության վերելքը շարունակվեց մինչև 1908թ. հունվարի 22-ը, երբ կուսակցության անդամ դիերցի Դավիթը (Դավոն) թուրքական իշխանություններին մատնեց ՀՅԴ զինապահեստներն ու բազում գաղտնիքներ՝ ծանր հարված հասցնելով հայ ազատագրական

[59] Նույն տեղում, էջ 110:

շարժմանն ու նահանգի հայությանը: Մատնության հետևանքներն ահավոր ծանր էին: Միայն առաջին օրերին իշխանությունները Վանի և սբ. Գրիգոր վանքի (Վանից 20 կմ հեռու) գաղտնարաններից հայերից առգրավեցին 300 հրացան, 300 հազար փամփուշտ և մեծաքանակ դինամիտ: Հետագայում բռնագրավվեց ևս 200 հրացան, բանտարկվեցին 200-ից ավելի հայեր և այլն:

ՀՅԴ Վասպուրականի մարմինը մահավճիռ կայացրեց Դավոյի նկատմամբ, որն ի կատար ածվեց 1908թ. մարտի 10 (23)-ին Տաճատ Թերլեմեզյանի կողմից:

Թուրքերի կարևոր խնդիրներից էր ազատագրական շարժման ղեկավարների, այդ թվում Արամի վերացումը, որի մասին կուսակալը նշել էր, թե Վանում «միայն մէկ թշնամի կայ, որ գիտէ թէ ինչ կ'ուզէ. ան արժանի է փաշա կոչուելու ...»[60]:

1908թ. մայիսին թուրքական իշխանությունները ձերբակալեցին Արամին ու նրա ընկերներին, որոնց մասին Դավոյի ձեռքով տարածել էին զանազան հերյուրանքներ: Ահա թե ինչպես է արտահայտվել այդ մասին թուրքական ոստիկանության ծառայող, մահմեդականացած հայ Մեհմեդ էֆենդին. «Եղած ամբաստանութիւնները (ոմանք Դաւոյի անունով ստորագրուած), բոլորն ալ խմբագրուած են ոստիկանութեան ձեռքով: Բայց Արամ բոլորիս համար կը մնայ յարգանքի եւ պատուի առարկայ»[61]: Իրոք, որքան էլ որ թուրքական իշխանությունները ջանացին հեղինակազրկել ՀՅԴ Վանի ղեկավար գործիչներին, այդ թվում և Արամին, և այդ ձևով գլխատել ազատագրական շարժումը, հաջողության չհասան: Ասվածը հաստատվում է այն իրողությամբ, որ հետագայում ևս Արամը վայելում էր ինչպես տեղացի դաշնակցական և ոչ դաշնակցական գործիչների, այնպես էլ ժողովրդական զանգվածների հարգանքը: Այդ հարգանքն, ինչպես կտեսնենք, իր շշմեցուցիչ դրսևորումն ունեցավ Արամի հուղարկավորության օրը: Բացի այդ, ՀՅԴ ղեկավարությունը երբեք նրան թույլ չէր տա շարունակել գործունեությունը Վանում, քանի որ կուսակցության հեղինակությունը կտրուկ կընկներ:

---

[60] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 5, Երևան, 1990, էջ 268:
[61] Նույն տեղում, էջ 268-269:

Անկասկած, ձերբակալված գործիչները ենթարկվելու էին մահապատժի, եթե քաղաքական իրադարձությունները Թուրքիայում այլ զարգացում չստանային:

1908թ. հուլիսին Թուրքիայում իրականացվեց երիտթուրքական հեղաշրջումը. տապալվեց սուլթանի միահեծան իշխանությունը, երկիրը հռչակվեց սահմանադրական միապետություն, հայտարարվեց պառլամենտի առաջիկա բացման մասին:

Ելնելով ազատագրական շարժման ընթացքից՝ հեղաշրջումից հետո բանտից ազատված Արամն արտահայտվեց երիտթուրքերի հետ գործակցելու իր կուսակցության քաղաքական գծի օգտին: Իսկ ՀՅԴ-ն փոխզիջման դիրք էր ընդունել և ձգտում էր արևմտահայության դրության բարելավմանը հասնել Օսմանյան կայսրության շրջանակում՝ խաղաղ ճանապարհով և առանց արտաքին միջամտության:

Արամը գտնում էր, որ չպետք է անտեսել հեղափոխության ընձեռած առավելությունները, գերագնահատել հայության ուժերն ու հետապնդել զուտ ազգային խնդիրներ[62]: Նա և ՀՅԴ Վասպուրականի մյուս գործիչները, դրական գնահատելով սահմանադրությունը և արտահայտվելով այլազգի հեղափոխական ուժերի հետ գործակցության օգտին, ձգտում էին լուծել հողային հարցը՝ չեղյալ դարձնել համիդյան վարչակարգի խրախուսած հողային բռնագրավումները հայերից, զինաթափել ավազակային տարրերին, հակառակ դեպքում՝ զինել նաև խաղաղ բնակչությանը, ազգային թվաքանակի համեմատ մասնակցել երկրի գործադիր և օրենսդիր մարմինների աշխատանքներին, հասնել ազգերի իրավահավասարության: Միաժամանակ, նրանք հարկ էին համարում ուժեղացնել կազմակերպությունը ներքնապես[63]: Կարծ, նրանց ձգտումն էր հասնել արևմտահայության անվտանգությանը, այլ ժողովուրդների հետ իրավունքների հավասարեցմանը:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո Թուրքիայում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: Առաջադրվեց նաև Արամի թեկնածությունը: Կոմսի հավաստմամբ Արամը դրա համար ուներ համապատասխան հատկանիշներ, համարձակ էր, հարմարվող և անկաշկանդ,

---

[62] Ռուբէն, հ. 5, էջ 245-247:
[63] Փափազեան Վ., հ. Բ, էջ 24-25:

ուներ թուրքերենի որոշ իմացություն[64]: Սակայն, նա նախընտրեց մնալ տեղում, հուսալով որ. «այդպես աւելի օգտակար կը լինէր ժողովուրդին...»[65]: Հիրավի, Արամը մնում էր ազգային-հասարակական կյանքի կենտրոնում և արագ ու անաչառ կերպով լուծում տալիս ժողովրդին հուզող տարբեր հարցերի: Նրա դրական կամ բացասական խոսքից հետո, Ե. Սարգսյանի հավաստմամբ, մարդիկ այլևս ուրիշի չէին դիմում[66]: 1909թ., երբ Արամն Իշխանի, Վան ժամանած Ռոստոմի և այլոց հետ մեկնեց Վարագ, նրան շրջապատեցին զանգվածները և ստիպեցին իրենց վեճերն ու գանգատները լսել[67]:

1909թ. ամռանն Արամը ժամանակավորապես հեռացավ Վանից: Այդ շրջանում Երկրից ժամանակավորապես հեռացան ազատագրական շարժման հեղինակավոր գործիչների մեծ մասը: Նոր պայմաններում ազատագրական շարժման առաջավոր գծում գտնվող և արևմտահայ ժողովրդի շրջանում մեծ հեղինակություն ունեցող գործիչների հեռացումը Երկրից ավելի նպատակահարմար էր, քան ներկայությունը՝ խաղաղ գործունեության անցնելու հետևանքով իրենց հեղափոխական հմայքը ժողովրդի շրջանում չկորցնելու տեսակետից: Արամը նախ անցավ Էրզրում, ապա սևծովյան ափամերձ քաղաք Օրդու և ստանձնեց տեղի հայկական դպրոցների տեսչությունը:

1911թ. Արամը բժիշկների խորհրդով անցավ ժնև բուժվելու, սակայն միջոցների սղության պատճառով չկարողացավ լիակատար բուժում ստանալ: Նա ժնևում մնաց մոտ մեկ տարի և, օգտվելով այդ պատեհությունից, 1912թ. «Դրօշակ»ում տպագրեց հոդվածների մի շարք՝ նվիրված հայ ազատամարտի մի խումբ նահատակների հիշատակին[68]: Արամի ցանկությունն էր հավերժացնել այդ գործիչների անունները, որոնք ունեցել էին գնահատելի մասնակցություն ազատագրական

---

[64] Նույն տեղում, էջ 40-41:
[65] Աստուածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1964, փետրվար, N 2, էջ 29:
[66] Սարգսեան Ե., Լեռնապարը 1908-1909 (Հայոց Ձոր, Գաւաշ, Կարճկան, Շատախ, Մոկս, Կարկառ), «Հայրենիք», 1955, նոյեմբեր, N 11, էջ 15:
[67] «Զանգ», 1919, փետրվարի 2, N 13:
[68] Արամ, Տիրան Մինասեան («Հայրիկ»), «Դրօշակ», 1912, մայիս, N 5, էջ 117-119; նույնի, Յակոբ Չիլինկարեան (Աշոտ Հայկունի), նույն տեղում, հունիս, N 6, էջ 149-152; նույնի, Դաւիթ Թումանեան (Ծուռ Դաւիթ), նույն տեղում, հուլիս-օգոստոս, N 7-8, էջ 179-181.

շարժմանը: Արամը հույս էր հայտնում, որ ապագայում հայ քանդակագործը կկերտի նրանց կոթողը հետևյալ մակագրությամբ. «Այստեղ կանգնի՛ր ու խոնարհի՛ր, ո՞վ անցորդ, որովհետև այստեղ են բոլոր նրանք, որ հիւսեցին ձեր սիրուն երազները»[69]:

1912թ. Արամը ժնևից կրկին անցավ Օրդու՝ ուսուցչության, ապա վերադարձավ Վան: Արամի և հայ ազատամարտի մյուս մեծանուն դեմքերի վերադարձն Արևմտյան Հայաստան թելադրված էր երիտթուրքերի հակահայկական քաղաքականության սաստկացմամբ, արևմտահայության նոր զանգվածային ջարդերի սպառնալիքով: Այստեղ նա ընտրվեց Ազգային երեսփոխանական ժողովի նախագահ[70]: «Ուր այնուհետեւ Արամը եղաւ Վասպուրականի Դաշնակցութեան ղեկավար ու մղիչ ոյժը Իշխանի, ապա Ա. Վռամեանի հետ: Ինչպէս Ռոստոմը բովանդակ Դաշնակցութեան մէջ, Արամը ամէն ինչ էր Վասպուրականում. դպրոց, ազգային հաստատութիւններ, մամուլ, ժողով ու հանդէս, երիտասարդական շրջաններ, գաւառ, Աղթամար, յարաբերութիւններ կառավարութեան հետ- ամէն բանի վրայ տիրական էր Արամի միտքն ու հոգին»[71]:

Արամն ամբողջովին նվիրվել էր Վանին: Նա համակված էր լավատեսությամբ Վանի ապագայով և ոգևորված էր նրա երիտասարդությամբ: Ս. Վրացյանին ուղղված նամակներից մեկում (այն անթվակիր է, բայց ամենայն հավանականությամբ գրվել է 1912-1913թթ.) նա գրում էր. «Խնդրում եմ լուրջ ուշադրութիւն դարձրու Վանին. հիանալի երիտասարդութիւն ունինք: Ես շատ եմ ոգեւորուած»: Քիչ անց նա գրում էր. «... ես աւելի վանեցի եմ զգում ինձ, քան թէ ղարաբաղցի: Եւ ի՞նչ ես կարծում. Վանի վերջալույսը տեսնողը ուրիշ տեղացի կ'ուզէ՞ լինել»[72]: Քիչ է ասել, թե ոգևորված էր: Նա շարունակ պահանջներ էր ներկայացնում դրսի ընկերներին տեղական խնդիրները լուծելու համար: Ս. Վրացյանն այդ կապակցությամբ գրել է. «Արամից, Վանից, յաճախ

---

[69] Արամ, Տիրան Մինասեան («Հայրիկ»), «Դրօշակ», 1912, մայիս, N 5, էջ 119:
[70] «Զանգ», 1919, փետրվարի 9, N 16:
[71] Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան. 1890-1950, Պատրաստեց Ս. Վրացեան, Բոստոն, 1950, էջ 466:
[72] Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 37:

նամակ էի ստանում եւ միշտ նրա կամ աղն էր պակաս, կամ մաղը»[73]: 1913թ. սեպտեմբերի 6-ին գրած նամակով Արամը Ս. Վրացյանին խնդրում էր աջակցել Ամերիկա անցած դոկտոր Ռեյնոլդսին՝ Վանում ամերիկյան քոլեջ բացելու նպատակով կատարվելիք հանգանակության գործում: Դա թելադրված էր ամերիկացիների հետ կրթական հարցերի շուրջն առկա համերաշխությամբ[74]:

Սակայն, Վանում հաստատված հարաբերական անդորրը երկար չտևեց: Ժողովրդավարական կարգախոսներով իշխանության անցած ե-րիտթուրքերը կարճ ժամանակ անց նոր թափով վերսկսեցին նախկին վարչակարգի հայաջինջ քաղաքականությունը: Ստեղծված իրավի-ճակում Արամը, որը երբեք չէր մտածել վերջ տալ ինքնուրույն ազգային-ազատագրական շարժմանը, դարձյալ հակվեց, այլևս անդառնալիորեն, ազգային ուժերով ազգային խնդիրները լուծելու գաղափարին:

[73] Նույն տեղում, էջ 36:
[74] Նույն տեղում:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, թուրքական իշխանությունների հետ բանակցությունների միջոցով Արամ Մանուկյանն ամեն կերպ փորձեց Վանի հայությանը փրկել զրկանքներից ու ջարդերից, իսկ երբ խաղաղ միջոցներով այլևս անհնար դարձավ կանխել հայոց մեծամասշտաբ ջարդերը, Արամը, որպես ՀՅԴ ներկայացուցիչ, քաղաքական այլ ուժերի հետ ձեռնարկեց 1915թ. ապրիլյան ինքնապաշտպանության կազմակերպմանը. «Մեր կացութիւնը յուսահատական էր այն ատեն,– նկատել է Արամը:– Ընտրելու մէկ բան միայն կը մնար մեզի համար. կամ անձնատուր ըլլալ եւ թողուլ որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնիլ զէն ի ձեռին կռուելով: Այս վերջինը նախընտրեցինք»[75]: Արամը քաջ գիտակցում էր, որ հայոց դարավոր թշնամուն միայն ազգային միասնության դեպքում կարելի է հակահարված հասցնել, և այդ իսկ պատճառով ամեն ինչ արեց այդ միասնությանը հասնելու համար: Ինքնապաշտպանության ընդհանուր գործի ղեկավարման մեջ ներգրավվեցին բոլոր հեղինակություն ունեցող գործիչները՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից: 1915թ. ապրիլի 5-ին Արամի նախաձեռնությամբ ստեղծվեց Վանի Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմինը, որում նրա առաջարկով ընդգրկվեցին փորձառու զինվորականներ՝ դաշնակցականներ Բուլղարացի Գրիգորը, Կայծակ Առաքելը, ռամկավար Արմենակ Եկարյանը, անկուսակցական Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ[76]: Որոշ ժամանակ անց Արամը նույնպես մտավ այդ մարմնի մեջ[77] և ղեկավարեց Վան-Այ-

---

[75] Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի: Հայաստանի ջարդերը, Թարգմանեց՝ Մ. Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 106:
[76] Հերոսապատում Մեծ Եղեռնի, Պէյրութ. 1978, էջ 59; Վան-Վասպուրականի հերոսամարտը-75 (կազմ. Հ. Փալտիազյան). Երևան, 1990, էջ 22:
[77] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 39:

գեստանի ինքնապաշտպանությունը[78]: Արամի գործուն մասնակցությամբ ստեղծվեցին Զինվորական մարմնին ենթակա մի շարք կառույցներ՝ Զինաբաշխ մարմինը, Տեղեկատու դիվանը, զինագործարանը, հիվանդանոցը և այլն: Զինվորական մարմնի քարտուղար Օ. Մխիթարյանի հավաստմամբ՝ «Զինվորական մարմնի և անոր յարակից օրգաններու, ինչպես նաև Վանի հերոսամարտի ամբողջ բարոյական ղեկավարությունը»[79] ընկել էր Արամի վրա:

Վանին 1915թ. հերոսամարտին անդրադարձած աղբյուրների գերակշռող մասը՝ օտար (նաև թուրքական) և հայրենի, դաշնակցական և ոչ դաշնակցական, ուղղակիորեն, թե անուղղակիորեն Արամին ճանաչել են ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար, կենտրոնական դեմք Վանում: Հայ ազատագրական շարժման մեծանուն գործիչներից մեկը՝ Գարեգին Նժդեհը բարեբախտություն է համարել վանեցիների գլխին կախված ճակատագրական այդ պահին Արամի ներկայությունը Վանում, որի իմաստությունը ժողովրդի հերոսականության հետ պիտի կասեցներ թշնամու առաջխաղացումը[80]:

20-րդ դարասկզբի քաղաքական գործիչ Հակոբ. Զավրյանը Վանի հայոց գլխավոր էր համարում դարձյալ Արամ Մանուկյանին: Նրան ներկայացնելով որպես բնակչության շրջանում մեծ հեղինակություն վայելող, «ուժեղ բնավորություն» ունեցող ժողովրդական գործիչ, Զավրյանն ավելացնում էր, որ ռազմական գործողությունների սկզբից Արամը դարձել էր քաղաքի պարետ և դրսևորել զարմանալի եռանդ ու խելամտություն քաղաքի պաշտպանության գործում: Ըստ նրա՝ բոլորն Արամին «ենթարկվում էին անառարկելիորեն և հավատում էին նրան»[81]:

Արամին, որպես Վանի հերոսամարտի կազմակերպիչներից մեկի, բարձր գնահատական է տվել նաև Զնդեթի ռազմական խորհրդական, գերմանացի սպա Ռաֆայել դը Նոգալեսը[82]:

---

[78] Այգեստանից մեկուսացված Քաղաքամեջում՝ Վան քաղաքի երկրորդ մասում, նաև հայերը դիմեցին ինքնապաշտպանության:
[79] Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 54:
[80] Նույն տեղում, էջ 4:
[81] Հ ԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 64, թ. 12-14:
[82] Սահակյան Ռ. Օ., Վասպուրականի հայության գոյամարտը 1915 թվականին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1995, N 1, էջ 23:

Երիտթուրքերի ղեկավարներից Նազըմը, խեղաթյուրելով իրականությունը, Վանի հերոսամարտը համարել է ապստամբություն, իսկ Արամին՝ «հայ ապստամբապետ»[83]:

Արամին Վանի հայերի ղեկավար է անվանել ինքնապաշտպանության ականատես, ամերիկացի միսիոներուհի Նեփը: Մեկ այլ ականատես, գերմանական որբանոցի տնօրեն Սփյորին Արամին անվանել է Վանի հայերի առաջնորդներից[84]:

Արամին ինքնապաշտպանների առաջնորդ է համարել Անդրանիկ Օզանյանը[85]:

Հարցին իրենց գնահատականներն են տվել նաև պատմաբանները: Ա. Համբարյանը գրում է. «Արամը թեև չէր մտնում Զինվորական մարմնի մեջ, բայց ղեկավարում էր նրա աշխատանքները»[86]: Հ. Սիմոնյանը նրան անվանում է «Վանի կռիվները ղեկավարող» գործիչ[87]:

Սփյուռքահայ պատմաբան Ռ. Հովհաննիսյանը նշելով, որ Զինվորական մարմինը գլխավորում էր Ա. Եկարյանը, ավելացնում է, որ ինքնապաշտպանության սիրտն ու հոգին Արամն էր, որը Վռամյանի և Իշխանի կորստից հետո ինքնահաստատվեց ոչ միայն որպես Դաշնակցության առաջնորդ, այլ նաև որպես ազգային առաջնորդ[88]:

Աղբյուրների համեմատական վերլուծությունից, հայ պատմագրության կարկառուն դեմքերի ապակուսակցական դիրքերից տված գնահատականներից, ինքնապաշտպանությանը Արամի ունեցած մասնակցության կոնկրետ փաստերի ուսումնասիրությունից հետևում է, որ ինքնապաշտպանության կազմակերպման և ղեկավարման գործում Արամն ունեցել է առաջնակարգ ղեկավար մասնակցություն: Ասվածից չի հետևում, թե նա միակ ղեկավար անձն էր: Ինքնապաշտպանության

---

[83] Ռիֆաթ Մեվլան Զատէ, Օսմանյան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, ֆաքս. հրատ., 1990, էջ 92:
[84] Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը, էջ 49; Ակունի Ս., Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1920, էջ 36-37:
[85] Նույն տեղում, ֆ. 370, ց. 2, գ. 152, թ. 1; Андраник Озанян, Документы и материалы, «Բաներ Հայաստանի արխիվների», 1991, N 1-2, էջ 165:
[86] Համբարյան Ա., Արևմտահայերի 1915թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Երևան, 1990, էջ 41-42:
[87] Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գ. Ա, էջ 451:
[88] Hovannisian R., Armenian Van/Vaspurakan, U.S.A. 2000, p. 226:

ղեկավարման գործում, հատկապես ռազմական մասով մեծ դեր են կատարել նաև Ա. Եկարյանը, Կայծակ Առաքելը, Գր. Բուլղարացին:

Կարծում ենք խնդրի առթիվ ընդունելի է Արմենակ Փոխարյանի հետևյալ բնորոշումը. «Զինվորական մարմնի մեջ Արամը, հենված իր ներկայացրած կուսակցության ուժին և իր հմայքին, այդ մարմնի կենտրոնական անձնավորությունն էր, և ամենքը՝ թե՛ ժողովրդական հիմնարկությունների ներկայացուցիչներ, թե՛ օտարներ և թե՛ ընկերներն առհասարակ նրանից խորհուրդ էին հարցնում որևէ գործի համար»[89]:

Զինվորական մարմինն անմիջապես ձեռնարկեց ինքնապաշտպանական մեծածավալ աշխատանքներ: Կազմվեց ինքնապաշտպանության հատակագիծ, Այգեստանը բաժանվեց պաշտպանական շրջանների: Ապրիլի 6-ի դրությամբ ստեղծվել էին պաշտպանական հինգ շրջաններ՝ իրենց շրջանապետերով, 50 դիրքեր՝ նույնքան խմբապետերով. զինվորների թիվը 800 էր, որից 400-ը հրացանակիր, 400-ը՝ ատրճանակով զինված[90]: Թուրքական կողմը հայոց դեմ կենտրոնացրել էր 6000-12000 կռվող և 12 թնդանոթ:

Վան-Այգեստանի ինքնապաշտպանությունը սկսվեց 1915 թ. ապրիլի 7-ին: Այդ օրը թուրքերը Սահակ բեյի փոսից, Հաջի Բեքիրի զորանոցից, Թոփրակ կալեի կողմից բացված հուժկու հրետակոծությունից հետո անցան լայնածավալ հարձակման. հայկական դիրքերի համար սպառնալի կացություն ստեղծվեց: Առանձնապես օրհասական էր դրությունը Սահակ բեյի դիրքում: Գիտակցելով պահի լրջությունը՝ Արամը, համապատասխան ցուցումներ տալով Զինվորական մարմնի անդամներին, իր թիկնապահների և մի խումբ ընկերների հետ անմիջապես շտապեց այնտեղ: Հայտնվելով հրացանային և թնդանոթային ուժգին կրակի տակ՝ նա առաջնորդին վայել իր պահվածքով (զինվորներից յուրաքանչյուրի հետ առանձին զրուցում էր, համբուրում նրանց, գոտեպնդում և խորհուրդներ տալիս) բարձրացրեց զինվորների մարտական ոգին[91]: Ռազմական տեսակետից կարևորելով հաղորդակցությունը դիրքերի միջև Արամը դիրքապահներին հանձնարարեց անցուղիներ փորել Սահակ բեյի դիրքից

---

[89] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 24:
[90] Մխիթարյան Օ., նշվ. աշխ., էջ 65:
[91] Նույն տեղում, էջ 74-75:

մինչև Թովմասյան դիրքը՝ խոստանալով ուղարկել օգնական բանվորական ուժ:

Արամը ծայրահեղ զգուշության կողմնակից էր և գտնում էր, որ ամեն վայրկյան պետք է պատրաստ լինել իրավիճակի բարդացմանը: Կռվի առաջին օրվա երեկոյան, երբ թշնամին ժամանակավորապես դադարեցրել էր հարձակումը, նա հայ ինքնապաշտպաններին կարգադրեց զգոն լինել՝ «առաջն առնելու համար ամեն տեսակ դավադրության»[92], և չսխալվեց: Շուտով թշնամին նոր ուժով վերսկսեց հարձակումը և դարձյալ հանդիպեց հայերի անկոտրում դիմադրությանը: Արամի, Զինվորական մարմնի անդամներ Ա. Եկարյանի, Գր. Բուլղարացու և Կայծակ Առաքելի ղեկավարությամբ հայերը ոչ միայն հուսալիորեն պաշտպանվում էին, այլև արժանի հակահարված հասցնում թշնամուն: Ապրիլի 8-ին և 9-ի լույս 10-ի գիշերը հայկական ուժերը, ցուցաբերելով արիություն ու հնարամտություն, գրավեցին թուրքական կարևորագույն հենակետերի վերածված անգլիական հյուպատոսարանի շենքը և Համուդ աղայի զորանոցը: Զորանոցի գրավմանն իր անմիջական մասնակցությունը բերեց նաև Արամը[93]:

Արամի գործունեությունը չէր սահմանափակվում միայն Վան-Այգեստանով: Դեռևս ապրիլի 14-ին, ընդունելով թուրքերի դեմ մաքառող շատախցիների պատվիրակությունը, նա Շատախի, Փեսանդաշտի և Քերծի ռազմիկներին հրահանգեց վարել բացառապես պաշտպանական մարտեր ու շարունակ լինել ժողովրդի հետ: Ելնելով քաղաքի պաշտպանների բարոյահոգեբանական, ռազմական ու պարենային կացությունը չծանրացնելու նկատառումներից՝ Արամն արգելեց Շուշանց-Վարագ գծում հավաքված 5000 գավառահայ փախստականների նահանջը Վան, և Զինվորական մարմնի մյուս անդամների հետ քայլեր ձեռնարկեց նրանց պաշտպանության համար: Ապրիլի 14-ին Արամի հրահանգով այնտեղ ուղարկվեցին Այգեստանում ապաստանած 15000 գաղթականներից առանձնացված սպառազեն գյուղացիները: Նույն օրը Շուշանց-Վարագ գծի հրամանատար նշանակվեց դաշնակցական գործիչ Շիրինը: Ձեռնարկված քայլերի շնորհիվ տեղի ազգաբնակչությունը մինչև ապրիլի 25-ը դիմադրեց թշնամուն և հետո միայն հարկադրաբար նահանջեց Այգեստան:

---

[92] Նույն տեղում, էջ 79:
[93] «Աշխատանք», Վան, 1915, հունիսի 17, N 25 (224):

Մարտական գործողությունները Վանում նոր թափ ստացան ապրիլի 19-ին: Իրենց հերոսությամբ աչքի ընկան Ա. Եկարյանն ու Կայծակ Առաքելը, որոնց միջամտության շնորհիվ կործանումից փրկվեց Թաղաքյահրեզի շրջանը: Այդ օրը թուրքերը տվեցին 40-ից ավելի զոհ[94]: Թուրքական հարձակումն իր գագաթնակետին հասավ ապրիլի 21-ին: Այգեստանի վրա արձակվեց 500 ռումբ: Արամն այդ օրը տարերքի մեջ էր. նա շարունակ դիրքից դիրք էր անցնում և ոգևորում հայ զինվորներին[95]: Ուժերի գերագույն լարմամբ հետ մղվեցին բոլոր գրոհները: Թշնամուն ոչ մի հաջողություն չբերեց նաև ապրիլի 28-ի հարձակումը, որն ուղեկցվում էր ուժգին ռմբակոծությամբ: Հայոց դիմադրությունն այնքան հերոսական ու կազմակերպված էր, որ թուրքական գրոհներից մեկն առաջնորդող գերմանացի մի սպա, կրած անհաջողությունից հուսահատված, հեռացավ Վանից խոստովանելով, թե այդպիսի դիմադրության չէր սպասում[96]:

Մայիսի 3-ին հայ ինքնապաշտպանները հետ մղեցին թուրքական վերջին գրոհը: Չկարողանալով կոտրել վանեցիների հերոսական դիմադրությունը և տեղեկանալով ռուսական բանակի առաջխաղացման մասին նահանգի կուսակալը դադարեցրեց քաղաքի պաշարումը և նահանջեց Բիթլիսի ուղղությամբ:

Վանի հերոսամարտը հաստատեց այն իրողությունը, որ միասնաբար գործելու և ճիշտ ղեկավարվելու դեպքում հայությանն անկարելի է հաղթել: Հերոսամարտի շնորհիվ ավելի քան 150 հազար վասպուրականցիներ փրկվեցին անխուսափելի կոտորածներից: Արևմտահայության գերակշռող մեծամասնությունը, ցավոք, զոհ գնաց թուրքերի կողմից իրականացված ցեղասպանությանը:

1915թ. մայիսի 5-6-ը Վան մտան Արարատյան կամավորական գունդը և ռուսական բանակի «Բայազետ»ի զորախումբը: Վերջինիս հրամանատար գեներալ Ա. Նիկոլաևին Արամը վանեցիների անունից հանձնեց քաղաքի բանալիները[97]: Ի պատասխան հերոսամարտի հաղթանակի առթիվ իր և ՀՅԴ հասցեին կատարած կամավորական գնդի

---

[94] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 76, թ. 5:
[95] Հերոսապատում Մեծ Եղեռնի, էջ 78:
[96] Բարբի Հ., Սարսափի երկրին մէջ: Նահատակ Հայաստան, Թարգմանեց Ս. Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 84:
[97] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 45, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 44, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 51:

հեծելազորի հրամանատար Խեչոյի գովասանքի՝ Արամն ազնվորեն նշեց, թե Վանում «կուսակցութիւնը չէ որ գործ տեսաւ, այլ ամբողջ ժողովուրդը»[98]: Հիրավի, թեև հերոսամարտում Դաշնակցության դերը վիթխարի էր, սակայն նրան մասնակցել էին նաև մյուս կուսակցությունները, ամբողջ ժողովուրդը:

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ

1915թ. մայիսի 7-ից 16-ը ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության հրամաններով Արամ Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ[99]: Այդ նշանակումը միանգամայն բնական էր: Վանում իր երկարամյա գործունեության ընթացքում, և հատկապես Ապրիլյան հերոսամարտի օրերին նա ծեռք էր բերել մեծ հեղինակություն: Նրա հեղինակությունն ընդունում էին բոլորը՝ և՛ դաշնակցականներն ու ոչ դաշնակցականները, և՛ օտար գործիչները, և՛ նույնիսկ թուրքերը:

Արամի գլխավորությամբ վասպուրականահայությունը ծեռնամուխ եղավ հայրենի նահանգի վերաշինմանը: Ձևավորվեցին նահանգի վարչական կառուցվածքը և կառավարման համակարգը, առանց որոնց խոսք չէր կարող գնալ 1915թ. ցեղասպանությունից մազապուրծ հայության առջև ծառացած բազմաբնույթ խնդիրների լուծման մասին: Հատկանշական է այն փաստը, որ Վանի կառավարությունը ձևավորելիս Արամը հերթական անգամ դրսևորեց ապակուսակցական մոտեցում՝ նրանում ընդգրկելով բոլոր կարող ուժերին, ինչ կուսակցության էլ նրանք պատկանեին: Այնուհետև նահանգապետությունը ծեռնամուխ եղավ նահանգի անվտանգության ապահովման, քայքայված տնտեսության վերականգնման, հատկապես գյուղատնտեսական աշխատանքների վերսկսման, գաղթականության խնամքի, օրինականության և կարգ ու կանոնի ապահովման աշխատանքներին, հայ բնակչության շահերը ռուս զինվորականների ոտնձգություններից պաշտպանելուն և այլ խնդիրների լուծմանը:

---

[98] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 233:
[99] Հ ԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4, գ. 19, թ. 44:

Պետական ավանդույթների բացակայության և պետական լծակների նոր ձևավորման պայմաններում Արամը հարկադրված էր մեծ ժամանակ հատկացնել նաև բնակչության շահերի պաշտպանությանը:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից էր ինքնապաշտպանության ապահովումն ու նահանգից հեռացած քրդերի վերադարձի կանխումը: Քրդական հարձակումներից պաշտպանվելու համար ստեղծվեցին ինքնապաշտպանական խմբեր, որոնք ընդհուպ մինչև հուլիսյան գաղթը հաջողությամբ կատարեցին իրենց վրա դրված խնդիրը: Այլևայլ, բայց հատկապես քրդերի վերադարձի առնչությամբ առկա էին լուրջ հակասություններ Արամի և զորահրամանատարության միջև: Եթե Արամը ձգտում էր խափանել հայոց ցեղասպանությանը մասնակցած քրդերի վերադարձը, ապա ռուսական կողմը նրանց հանդեպ ցուցաբերում էր կարեկցական մոտեցում: Այսպես, կովկասյան չորրորդ բանակային կորպուսի հրամանատարը 1915թ. հունիսին թույլատրել էր ռուսական հպատակությունն ընդունած քրդերի վերադարձն իրենց նախկին գյուղեր[100]: Անհանգստացած իր ժողովրդի ճակատագրով Արամը, դրսևորելով մեծ պատասխանատվություն իր ժողովրդի նկատմամբ, հունիսի 26-ին և 27-ին դիմեց ռուսական բանակի հրամանատարությանը փորձելով կանխել այդ որոշման կենսագործումը[101]: Մատնանշելով քրդերի ոճրագործությունները նահանգի հայկական բնակավայրերում և թուրքերի հետ համատեղ գործողությունները ռուսական զորքերի դեմ, քրդական հավատարմության դրսևորումը ռուսներին բացատրելով նրանց պարենային ծանր կացությամբ Արամը գտնում էր, որ նրանց հարկ է դիտել որպես ռազմագերիների դրանից բխող հետևանքով կամ էլ նրանց մեջ տեսնել սովորական հանցագործների և ի հարկին պատժել: Նա աշխատում էր հրամանատարությանը համոզել, որ քրդերի վերադարձով կխախտվի անդորրը Վանում այն պարզ պատճառով, որ ջարդված և կողոպտված հազարավոր հայերի հարազատները չէին կարողանա անտարբեր մնալ իրենց թշնամիների հանդեպ: Նա իրավացիորեն նշում էր, որ թույլատրել քրդերին վերադառնալ կնշանակի, թե կարելի է

---

[100] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42; ֆ. 503, ց. 1, գ. 62, թ. 6:
[101] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42-47:

անպատիժ կերպով կողոպտել և սպանել հայերին և վերջիններիս Թուրքիայում «ռուսական զենքի հաջողության միակ անկեղծ կողմնակիցների» մոտ կառաջացնի ծանր հիասթափություն Ռուսաստանի հանդեպ: Իր մտքերն ազդու դարձնելու նպատակով Արամը համարձակորեն նշում էր, որ որոշման գործադրման դեպքում ինքը չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել Վանի շրջանում հանդարտության և օրինակարգի պահպանության համար և հայտնում էր իր բողոք-նկատառումները. 1) չգործադրել հունիսի 22-ի հրամանը, 2) հայոց ջարդերի ու թալանի մասնակից հանձնված քրդերին ենթարկել պատասխանատվության, 3) զգուշացնել չգրավված տարածքների մահմեդականներին, որ հայերի նկատմամբ ոճրագործությունների մասնակիցները ենթակա են պատասխանատվության: Թեև նահանգապետի փաստարկները հիմնավոր էին, իսկ նշված հրամանը հակասում էր 1915թ. գարնանը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հրապարակած հռչակագրին, որով հայոց ջարդերի իրականացնողները համարվում էին պատասխանատու, Վանի կայազորի պետը, հասկանալի համարելով հանդերձ Արամի անհանգստությունը, մերժեց չեղյալ համարել հրամանը, գտնելով, թե իբր դա կնշանակեր արտոնել հայերին հարձակվել քրդերի վրա և կողոպտել նրանց[102]: Իրական պատճառն այլ էր. ռուսական հրամանատարությունը, ելնելով պատերազմական իրավիճակից, որոշակիորեն վարում էր քրդերին սիրաշահելու քաղաքականություն:

Արամի գլխավորությամբ արդյունավետ քայլեր կատարվեցին փախստական ժողովրդի պահպանության ուղղությամբ: Տասնյակ հազարների հասնող թշվառների միակ ապավենը հայկական կառավարությունն էր, որն ամեն ինչ արեց նրանց սովի և համաճարակի ճիրաններից փրկելու համար: Համաճարակներից օրական մահանում էր 30-40 մարդ: Շուրջ 15-25 հազար գաղթականների տեղավորելով հիմնականում Աղթամարում և Ոստանում, կառավարությունն այլ վայրերից սննդամթերք էր հասցնում նրանց համար: Նահանգապետության միջոցները սակավ էին, և Արամը օգնության խնդրանքով դիմեց նախ նահանգի ժողովրդին: Գտնելով, որ սովն ու հիվանդությունները կարող են ավելի մեծ

[102] Նույն տեղում, գ. 5, թ. 176; ֆ. 503, ց. 1, գ. 62, թ. 8:

ավերածություններ գործել, քան թուրքական բռնությունները, Արամը ձգտում էր արթնացնել ժողովրդի զգացմունքները և մղել նրան գործողության ի նպաստ սովյալների: Նա նշում էր. «Մի՛ մոռնաք որ փոխադարձ օգնութեամբ միայն կրնանք պահել մեր ազգային գոյութիւնը: Եթէ մէկը չ՚օգնէ միւսին, մենք կորած ենք. մէկը ամէնքին, ամէնքը մէկին, հոս է մեր փրկութեան խարիսխը»: Նահանգապետը ժողովրդին կոչ էր անում աջակցել գավառապետերին, որոնց ինքը հանձնարարել էր հանգանակություն ծավալել սովյալների օգտին[103]: 1915թ. հունիսի 23-ի դրությամբ տեղական միջոցներով հավաքվել էր 10000 փութ ցորեն, որի կեսը, ինչպես նաև 8000-10000 ոչխար, ավելի քան 2000 խոշոր անասուններ արդեն իսկ բաժանվել էր ժողովրդին: Սակայն ներքին ռեսուրսները բավարար չէին: Նահանգապետը և Վանի շրջանային վարչությունը դիմեցին նաև Կովկասի և գաղութների հայությանը՝ խնդրելով արագացնել բժիշկների, դեղորայքի, սննդի և երկրագործական մեքենաների առաքումը[104]: Արամը խնդրեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի աջակցությունը[105]: Օգնությունն անհրաժեշտ էր ոչ միայն տվյալ պահի, այլ նաև ձմռան պահուստ կուտակելու համար: Օգնությունը դրսից առաքվեց ժամանակին:

Արամի մտածված, հետևողական միջոցառումների շնորհիվ Վանի հայկական նահանգապետությունը օր-օրի ոտքի էր կանգնում. կյանքը Վան-Վասպուրականում զարթոնք էր ապրում: Ապագայի հանդեպ լավագույն հույսերով տոգորված ժողովուրդը վերականգնում էր ավերված օջախները, կառուցում նորերը, մշակում դաշտերն ու այգիները, վերաբացում արհեստանոցներն ու խանութները, փռերը, շուկան, աշխուժացնում առևտուրն ու կրթական կյանքը:

Բազմադարյան պետականազրկությունից հետո Արամի գլխավորությամբ իրականացված քայլերը Վանի հայկական նահանգապետության ստեղծման ու ամրապնդման ուղղությամբ, այն է՝ նահանգի վարչական կառուցվածքի ձևավորում, ազգային գործիչներով համալրված

---

[103] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 43, թ. 1, գ. 68, թ. 1:
[104] «Մշակ», 1915, հուլիսի 9, N 147:
[105] Ավետիսյան Մ., Փաստաթղթեր Արամ Մանուկյանի պետական գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, N 2, էջ 137-138:

վարչական ապարատի ստեղծում, նահանգի հայության ու կառավարության առջև կանգնած խնդիրների լուծում ազգային շահերին համապատասխան ոգով, իրենց մեջ պարունակում էին պետականությանը բնորոշ քայլեր: Առանց չափազանցության Վանի նահանգապետությունը կարելի է համարել հայոց նորագույն պետականության նախատիպ:

Դժբախտաբար, Վանի հայկական նահանգապետությունը երկար կյանք չունեցավ: Ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատից ռուսական Կովկասյան բանակի IV կորպուսի զորամասերի նահանջի օրերին՝ զորահրամանատարության հրամանով Վան-Վասպուրականի հայությունը հուլիսի 18-ին բռնեց հարկադիր գաղթի ուղին: Նահանգապետ Արամը հանդես բերելով ազգային-պետական մտածողություն, հայրենասիրություն, պատասխանատվության և պարտքի բարձր զգացում իր ժողովրդի նկատմամբ, վճռականապես դեմ արտահայտվեց գաղթին, այն համարելով կործանարար հայության համար և ընտրեց դիմակայության կազմակերպման դժվարին ուղին: Սակայն գաղթի կասեցումը նրա և հայրենանվեր մյուս ուժերի կամքից վեր գործ էր:

ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1916-1917ԹԹ.

Հարկադրաբար հեռանալով Վանից, Արամ Մանուկյանը մինչև 1917թ. դեկտեմբերը հաստատվեց Թիֆլիսում և ակտիվորեն մասնակցեց Անդրկովկասում ու նրա սահմաններից դուրս եռացող ազգային-քաղաքական կյանքին, որի առանցքը ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ փախստականների ճակատագիրն էր: 1916թ. մարտի 2-ին Արամը մասնակցեց Բաքվի Հայոց Ազգային բյուրոյի նիստին և հաղորդեց արևմտահայությանը պատուհասած արհավիրքի մասին[106]: 1916թ. մայիսին Արամը մասնակցեց Պետրոգրադում գումարված հայ փախստականների առաջին համագումարին[107], որտեղ քննության դրվեցին արևմտահայ փախստականներին նյութական օժանդակություն ցուցաբերելու,

---

[106] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 111, թ. 63:
[107] «Աշխատանք», 1916, մայիսի 4, N 1; Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 211:

նրանց բժշկական, կրթական և այլ կարիքները բավարարելու հարցերը (ցարական աստիճանավորներն արգելել էին քաղաքական հարցերի քննարկումը): Բնականաբար, այդ խնդիրները հաջողությամբ իրականացնելու համար հարկավոր էր ստեղծել փախստականների գործերը տնօրինող կենտրոնական մարմին, որը կկոորդինացներ մնացյալ բոլոր մարմինների աշխատանքը: Մի շարք պատգամավորներ, այդ թվում Մ. Պապաջանյանը և Արամը գտնում էին, որ նոր կառույցի նստավայրը պետք է գտնվեր ժողովրդին հնարավորին չափ մոտ, քանզի այդ ժամանակ այն ավելի լավ կտեսներ նրա կարիքները և, բնականաբար, կգործեր առավել արդյունավետ: Այդ տեսակետն ընդունվեց ժողովականների կողմից: Համագումարը ցանկալի արդյունքը չտվեց, այդ իսկ պատճառով նոր հավաք գումարելու կարիք առաջացավ: 1916թ. դեկտեմբերին Արամը, ֆիդայապետ Անդրանիկը և ռամկավար գործիչ Ա. Դարբինյանը հանդես եկան արևմտահայերի համագումար հրավիրելու նախաձեռնությամբ, սակայն ցարական իշխանություններն արգելեցին:

Արամ Մանուկյանի և ազգային-քաղաքական մյուս գործիչների և ուժերի գործունեությունն ավելի ակտիվացավ և, որ կարևոր է, արգասաբեր եղավ 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսաստանում մտցվեցին քաղաքական-դեմոկրատական ազատություններ: Արամը, ֆիդայապետ Անդրանիկը և Ա. Դարբինյանը երկրորդ անգամ ձեռնամուխ եղան արևմտահայերի համագումար հրավիրելու աշխատանքներին, և այս անգամ հասան հաջողության: 1917թ. մայիսի 2-11-ը Երևանում գումարվեց արևմտահայերի առաջին համագումարը, որն ընդունեց կարևորագույն որոշումներ միտված արևմտահայության գոյության ապահովմանը, Արևմտյան Հայաստանի վերաշինմանը, ստեղծեց արևմտահայության կյանքը ղեկավարող մարմիններ և այլն:

Մինչև համագումարի բացումը, մայիսի 1-ին տեղի ունեցավ հիշարժան իրադարձություն Արամ Մանուկյանի կյանքում: Այդ օրը Երևանում նա ամուսնացավ Կատարինե Զալյանի Ղուրդուղուլիի (Արմավիր) մանկական որբանոցի գլխավոր բժշկուհու հետ: Այդ ամուսնությունից 1918թ. հոկտեմբերին ծնվեց Արամի միակ ժառանգը Սեդա Մանուկյանը (1918-2005)[108]:

---

[108] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը..., էջ 16, 147:

Արամը ղեկավար մասնակցություն ունեցավ 1917թ. մայիսի 10-ին Երևանում գումարված թուրքահայ դաշնակցականների շրջանային ժողովին, որտեղ քննվեցին փախստականության կրթության, որբանոցների վիճակի բարելավման, տեղերում ժողովրդի կողմից ընտրովի վարչության ձևավորման և այլ հարցեր[109]:

Նա իր անմիջական մասնակցությունը բերեց արևմտահայկական նահանգների վերաշինությանը՝ հանդիսանալով ժամանակավոր կառավարության կողմից նշանակված Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարի քաղաքացիական մասի օգնական Հ. Ջավրյանի «աջ բազուկը»[110]: Նրա միջոցով 1917թ. ամռանը երկրագործական գործիքներ էին ուղարկվում Արևմտյան Հայաստան: Կառավարության աջակցությամբ ծավալված եռանդուն քայլերի շնորհիվ 1917թ. ամռանը Արևմտյան Հայաստան էին վերադարձել մոտ 150 հազար փախստականներ, արագորեն վերականգնվում էին ավերված օջախները և մշակվում պապենական հողերը:

Արամն ակտիվորեն մասնակցեց նաև 1917թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում գումարված Հայոց Ազգային համախորհրդակցության աշխատանքներին[111], որի քննարկմանն էին ներկայացվել փետրվարյան հեղափոխությունից հետո հրատապ դարձած Կովկասյան ռազմաճակատի և վտանգված հայկական շրջանների ապահովության, արևմտահայ փախստականության, Անդրկովկասում ազգամիջյան հարաբերությունների և հայ ժողովրդի համար կենսական այլ հարցեր: Ս. Վրացյանի հաղորդման համաձայն՝ Արամն ընտրվեց արևելահայության կյանքը ղեկավարելու նպատակով ստեղծված Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային խորհրդի անդամ[112]: Առաջին հայացքից վերջինիս հաղորդումն անընդունելի է, քանզի ըստ արխիվային տվյալների նա չի եղել Ազգային խորհրդի առաջին կազմում: Սակայն, եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ կուսակցություններն իրավասու

---

[109] «Աշխատանք», 1917, մայիսի 20, N 6:
[110] Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան. 1890-1950, էջ 467:
[111] Հայոց ազգային համախորհրդակցությունը. Թիֆլիս, 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբեր: Փաստաթղթեր ու նյութեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, N 1-2, էջ 106:
[112] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 51:

էին Ազգային խորհրդի իրենց անդամներին փոխարինել, և այն, որ հետագայում կատարվեցին փոփոխություններ, կարելի է ընդունել, որ Արամը որոշ ժամանակ եղել է Ազգային խորհրդի անդամ:

1917թ. հոկտեմբերի 21-ից (մինչև 1918թ. ապրիլի 14-ը) Արամը Երևանի «Աշխատանք» թերթի խմբագիրն էր: Նրա օրոք թերթը, շարունակելով դրական ավանդույթները, արծագանքում էր հայ իրականությանը հուզող խնդիրներին: 1917թ. նոյեմբերի 18-ի խմբագրականը, աչքի առաջ ունենալով ռազմաճակատի քայքայումը, նշում էր, որ Թուրքիան երբեք չի հրաժարվի Անդրկովկասը նվաճելու մտքից և, եթե թուրքական բանակի ճանապարհին ուժեղ պատվար չլինի, նա անպայման կձգտի իրականացնել իր պլանները: Այն հույս էր հայտնում, որ մոտ օրերը գումարվելիք Հայ զինվորական միության համագումարը կկարողանա ամբողջական կազմակերպություն ստեղծել, որ հայ զինվորը կկանգնի հայրենիքի պաշտպանության դիրքերում[113]: Նույն թվականի դեկտեմբերի 16-ին թերթը միանգամայն ճիշտ կերպով նկատում էր, որ թուրքական հարձակման դեպքում միակ խոչընդոտը նրա առջև, ինչպես նաև միակ տուժողը լինելու է հայությունը: Անդրկովկասյան հարևանների մասին թերթը զարմանալի հեռատեսությամբ գրում էր. «մեր դրացիները եթէ չօժանդակեն, գոնէ չը պիտի փորձեն ամենափոքրիկ ընդդիմութիւն մը իսկ ցուցնելու թշնամիին»[114]: Թերթն անդրադառնում էր նաև ժամանակի ամենահրատապ խնդիրներից մեկին՝ դասալքությանը, առաջարկելով Հայկական կորպուսը ծնավորելու, դասալիքներին հավաքելու համար չսահմանափակվել միայն գաղափարական կոչերով, այլ այն զուգակցել տարաբնույթ հարկադիր քայլերի հետ[115]:

1917թ. վերջին ռուսական Կովկասյան ռազմաճակատի քայքայումը, որը սկսվել էր փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին և խորացել հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, թուրքական ներխուժման վտանգի տակ դրեց ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանը: Ցեղասպանության սարսափները տեսած հայությունը տագնապի մեջ էր,

---

[113] «Աշխատանք», 1917, նոյեմբերի 18, N 56:
[114] Նույն տեղում, 1917, դեկտեմբերի 16, N 64:
[115] Նույն տեղում, 1917, դեկտեմբերի 9, N 62:

քանզի թուրքերի կողմից Արևմտահայաստանի վերագրավումը և ներխուժումը Արևելյան Հայաստան հղի էր հայ ժողովրդի ամբողջական ոչնչացման վտանգով: Անհրաժեշտ էր արագացնել հայկական զորամիավորումների ստեղծումը, որոնք կվոխարինեին հեռացող ռուսական զորքերին: Դրությունը բարդանում էր նրանով, որ ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանի նշանակալի մասն ընդգրկող Երևանի նահանգում առկա էր իշխանության վակուում: 1917թ. նոյեմբերի 15-ին ստեղծված Անդրկովկասի գործադիր իշխանության նոր բարձրագույն մարմինը՝ Անդրկովկասի կոմիսարիատը՝ բաղկացած հայերի, վրացիների և կովկասյան թաթարների (ներկայումս՝ ադրբեջանցիներ) ներկայացուցիչներից, չդարձավ գործող իշխանություն: Այն ավելի շատ զբաղված էր մութ խաղերով, ավելի շատ հետևում էր օրեցօր բարդացող կացությանը, քան ընթացք տալիս նրան: Այն անտարբեր էր հատկապես պատերազմական նախապատրաստությունների հարցում:

Անդրկոմիսարիատի անգործության պայմաններում երկրամասի ժողովուրդները հայացքները սևեռել էին իրենց ազգային խորհուրդներին, որոնք էլ փաստորեն դարձել էին տեղական իշխանություններ ազգային սահմաններում: Երևանի նահանգում հայությունը հայացքն ուղղել էր դեպի տեղի Հայոց Ազգային խորհուրդը, որը կազմվել էր Թիֆլիսի Ազգային խորհրդի օրինակով: Սակայն, նա՝ թեև ընբռնում էր դրության ծանրությունը և իրադարձությունների հավանական ողբերգական ընթացքը, իր անելիքի մասին հստակ պատկերացում չուներ: Ս. Վրացյանը նկատել է, որ սկզբնապես այն «անգույն և անջիղ մի մարմին էր, որ գնում էր դեպքերի հոսանքի հետևից»[116]: Այն սպասում էր հրահանգների Թիֆլիսից, որի հետ կապն անկայուն էր:

Այդ իրավիճակում՝ 1917թ. դեկտեմբերին Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային և Հայ զինվորական խորհուրդները Արամ Մանուկյանին արտակարգ լիազորություններով գործուղեցին Երևանի նահանգ:

---

[116] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 125:

ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԴԵՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1917թ. դեկտեմբերի 18-ին[117] Հայոց Կենտրոնական Ազգային և Հայ զինվորական խորհուրդների լիազոր-ներկայացուցչի կարգավիճակով Արամը ժամանեց Երևան: Ինչպես նշում է Հ. Կոսոյանը, 1918թ. հունվարից Արամը նաև Արևմտահայ Ապահովության խորհրդի լիազորն էր Երևանում[118]: Ա. Աստվածատրյանն իրավացիորեն մատնանշել է այդ քայլի դրդապատճառներից թերևս ամենակարևորը: Նա գրում է. «Ազգ. Խորհուրդը 1917թուին հեռատեսութիւն ունեցաւ և Երեւան ուղարկեց շատ պատասխանատու գործով Արամին՝ աչքի առաջ ունենալով նրա գործ կազմակերպելու եւ այն վարելու բացառիկ կարողութիւնները՝ բացառիկ ծանր պայմաններում»[119]: Արամի ընտրությունը պայմանավորված էր մեկ կարևոր հանգամանքով ևս: Լինելով ՀՅ դաշնակցության ղեկավար դեմքերից՝ նա կարողացել էր ազգային խնդիրների լուծման ժամանակ դրսևորել ապակուսակցական մոտեցում և առավել կայուն հող ստեղծել հաջողության հասնելու համար:

Հաստատվելով Երևանում՝ Արամը, օժտված ազատագրական պայքարի, Վանի 1915թ. հերոսամարտի, այնուհետև՝ համանուն նահանգի քաղաքացիական-պետական կյանքի կազմակերպման հարուստ փորձով, գերմարդկային ճիգեր գործադրեց հայությանը սպառնացող նոր ողբերգությունը կանխելու համար:

---

[117] Զոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ., Երևան, 2000, էջ 25:
[118] Կոսոյեան Հ., Հայկական Թերմոպիլէ, «Դրօշակ», 1928, մայիս, N 5, էջ 138:
[119] Աստուածատրեան Ա., Սարդարապատի պատմաշինութիւնը: 3. Թուրշեանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքին առթիւ, Պէյրութ, 1966, էջ 137:

Նա առաջադրեց հայ ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված հստակ և իրատեսական ուղեգիծ: Նույն օրը Արամը հանգամանալից զեկույցով հանդես եկավ Երևանի Հայոց Ազգային խորհրդի նիստում և ներկաներին ծանոթացրեց Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի գործունեությանը, տարածաշրջանում տիրող ընդհանուր իրավիճակին՝ կարևոր տեղ հատկացնելով թուրքական վտանգի հանդեպ հայ ժողովրդի անդրկովկասյան գլխավոր հարևանների դիրքորոշմանը: Նա զգուշացնում էր, որ «...ադրբէջանցիք անհամբեր սպասում են թիւրքերին, իսկ վրացիները թէեւ այդքան հեռու չեն գնում, բայց գաղտնի յարաբերութեան մէջ են թիւրքերի հետ՝ իրենց կաշին փրկելու համար...»[120]: Իր զեկույցը Արամն ավարտեց մտքերով, որոնք, փաստորեն, ուղենշային դարձան նրա երևանյան գործունեության համար: Ահա դրանք. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա լոկ խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ոչ ոք չի հետաքրքրւում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք եւ պէտք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու եւ թէ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[121]:

Գիտակցելով տարածաշրջանում զարգացող ռազմաքաղաքական անցքերի հնարավոր վտանգավոր հետևանքները՝ Արամը հանուն հայ ժողովրդի փրկության գերագույն նպատակի ցուցաբերեց նախանձելի համառություն ու հետևողականություն հասարակական գիտակցությունը փոխելու, նրանում սեփական ուժերին ապավինելու գաղափարն ամրապնդելու և համազգային շարժում կազմակերպելու համար:

Երևանի Հայոց Ազգային խորհուրդը, որում ներկայացուցիչներ կային ՀՅ դաշնակցությունից, Հայ ժողովրդական կուսակցությունից, էսեռներից, Հայ զինվորական խորհրդից, անկուսակցականներից և բոլշևիկներից, Արամի առաջարկությամբ ստեղծեց իշխանության նոր,

---

[120] Աստուածատրեան Ա., Սարդարապատի պատմաշինութիւնը, էջ 41:
[121] Աստուածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1964, ապրիլ, N 4, էջ 70:

դյուրաշարժ մարմին՝ Հատուկ կոմիտե՝ նրան օժտելով իրեն համահավասար իրավասություններով: Հատուկ կոմիտեի նախագահ ընտրվեց ժողովրդի մեջ մեծ հարգանք վայելող Մ. Մուսինյանը: Սակայն, ինչպես Հատուկ կոմիտեի, այնպես էլ Ազգային խորհրդի, ընդհանուր գործի, Երևանի նահանգի փաստացի ղեկավարն ու ոգին դարձավ Արամը:

Սահմանվեցին Հատուկ կոմիտեի առջև ծառացած կարևորագույն խնդիրները: Դրանք էին հայկական զորքի կազմակերպում և օգնություն ռազմաճակատին, նահանգում ծավալվող մահմեդական խռովությունների սանձահարում, խաթարված օրինականության վերականգնում, պարենավորման և այլ կնճիռների լուծում:

Արամը սեղմ ժամկետում քաղաքում ստեղծեց աշխատանքով հագեցած մթնոլորտ: Աշխատանքի լծվեցին ամենքը՝ անկախ կուսակցական հանգամանքից և սոցիալական դիրքից: Արամի շունչն զգացվում էր ամենուր. նա «ամէն տեղ էր՝ իր խորհուրդներով, ցուցմունքներով, հրահանգներով ու հրամանով»[122]:

Արամ Մանուկյանի առաջադրած՝ սեփական ուժերին ապավինելու քաղաքական գիծն ամրագրվեց կոնկրետ քայլերով: Առաջնահերթ լուծում պահանջող հայկական զորքի ստեղծումը թելադրում էր առաջին հերթին կատարել կազմակերպված զորահավաք: Արամի գլխավորությամբ ազգային մարմիններն ու գործիչները հայ ազգաբնակչության շրջանում ծավալեցին քարոզչական լայն աշխատանք նրան սպառնացող վտանգի դեմ վճռական պայքարի կազմակերպման անհրաժեշտությունը բացատրելու, ոգևորելու և, բնականաբար, գործողության մղելու նպատակադրմամբ:

Արդեն 1917թ. դեկտեմբերի 21-ին հայկական առաջին գունդը ռազմաճակատ ճանապարհելու առիթով ելույթ ունենալով ներկաների առջև՝ Արամն արժանին մատուցեց ճակատ մեկնող զինվորներին և հանդիմանեց մնացողներին՝ նրանց զգացմունքներին դիպչելու մտադրությամբ: Նա նշում էր. «Ես սարսափով դիտում եմ, որ ռազմի դաշտ մեկնողներու շարքերը այսքան ցանցառ են և նօսր, իսկ այստեղ մնացողների թիւը այսքան շատ. ես իմ խօսքը ձեզ եմ ուղղում, ձեզ, քաղաքացիներ, որովհետև հայ մարտիկները քաջալերանքի պէտք չունին-

---

[122] Նույն տեղում, էջ 74:

ամօ՞թ ձեզ, ամօ՞թ մեզ, որ տակաւին անտարբեր մնում ենք. անէ՛ծք և նախատի՛նք անոնց, որոնք պարտքի գիտակցութիւն չունին, երդուեցէք որ հայ մարտիկները ռազմաճակատի վրայ մենակ չեն մնալու. ուխտենք որ մեկնողների ետևից շարք-շարք, տասնեակ հազարաւորներով օգնութեան պիտի փութանք»[123]: Նմանատիպ ելույթներով Արամը ոգևորում և գործողության էր մղում ժողովրդական զանգվածներին:

1917թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց Արամի հեղինակած[124] «Կոչ հայ զինուորներին» շրջաբերականը՝ հայ ժողովրդին ահազանգելով իրեն սպառնացող մահացու վտանգի մասին: Այն շեշտում էր, որ ժողովրդի հավաքական կամքը և պատմական պահը յուրաքանչյուրից պահանջում է լցվել պարտականության գիտակցությամբ և կանգնել իր դիրքում: Արտահայտելով իր վճռականությունը զինվորների հավաքագրման և Հայկական կորպուսի կազմավորման հարցում՝ Հատուկ կոմիտեն նախատեսում էր հավաքագրել Երևան քաղաքի ու նահանգի գավառների, ինչպես նաև Զանգեզուրի 20-32 տարեկան բոլոր հայ զինապարտներին, ներառյալ «զանազան արտօնութիւններով ու պատրուակներով տանը նստածները»: Հստակորեն սահմանվում էին այն վայրերը, ուր պետք է ներկայանային զորակոչվողները: Ծրագրվում էր հատուկ ուշադրություն դարձնել զինվորների ընտանիքների նյութական ապահովությանը[125]: Այդ կերպ զորակոչվողները կազատվեին այն ծանր մտատանջությունից, որ աշխատուժից զրկվող իրենց ընտանիքները չեն մատնվի սովի և այլ զրկանքների: Այս միջոցառումներն, անշուշտ, նպաստելու էին հաջող զորահավաքի իրականացմանը և մարտունակ բանակի ստեղծմանը:

Հատուկ կոմիտեն հայտարարեց 20-32 տարեկանների զորակոչ: Զորակոչիկները պարտավոր էին անհապաղ՝ իրենց զինվորական հագուստով, սննդի երեք օրվա պաշարով ներկայանալ նշանակման վայրեր: Որպեսզի գործն ինքնահոսի չմատնվեր, գյուղերի կոմիսարների վրա պարտականություն դրվեց հրամանը ստանալուն պես հավաքել բոլոր զինակոչիկներին և միլիցիայի հետ անվտանգ տեղ հասցնել: Միաժա-

---

[123] «Աշխատանք», 1917, դեկտեմբերի 23, N 66:
[124] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 126:
[125] Հ ԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 2, թ. 5:

մանակ, նրանցից ու միլիցիայի պետերից պահանջվում էր անմիջապես ձերբակալել դասալիքներին և ուղարկել սահմանված վայրեր[126]:

Չբավարարվելով պարտադիր զորակոչի հրամանով՝ Հատուկ կոմիտեն ժողովրդի տարբեր խավերին՝ փորձված մարտիկներին, մտավորականությանը, ուսանողությանն ու աշակերտությանը ուղղված առանձին կոչով հորդորում էր կամավոր զինվորագրվել ազատության գործին[127]: Ժողովուրդը հավատով արձագանքում էր իրեն ուղղված կոչերին: Հ. Մելիքյանի հաղորդմամբ՝ շրջաններից խմբերով Երևան էին գալիս զինվորներ «ազգային երգեր երգելով ու դրոշակներով՝ վրան մակագրուած «Մահ կամ Ազատութիւն»[128]: Ժողովրդի ակտիվությունն ուրախացնում և, միաժամանակ, մտահոգություն էր պատճառում Արամին: Նա ժողովրդի արձագանքը համարում էր գիտակցության նշան և ավելացնում, որ այդ պայմաններում կարելի էր հրաշքներ գործել: Մյուս կողմից, նա մտահոգություն էր արտահայտում գործը պատշաճ ձևով կազմակերպելու վերաբերյալ: Նա նշում էր. «...վախենում եմ՝ մենք սեւերես դուրս գանք մեր ժողովրդի առջեւ, չկարողանանք կազմակերպել գործը եւ կորցնենք նրա հաւատն ու վստահութիւնը...»[129]: Ժողովրդի արձագանքը զորակոչին և Արամի վերոհիշյալ վերաբերմունքը խոսում են այն մասին, որ մի կողմից՝ ժողովուրդն իր զգալի մասով գիտակցում էր պահի լրջությունը և պատրաստ էր զոհողության, իսկ մյուս կողմից՝ Արամը ձգտելու էր արդարացնել նրա ակնկալիքները:

Հայկական զորամասերի ձևավորման, առավել ևս դրանցից կազմակերպված, մարտունակ և հայրենասեր բանակ ստեղծելու համար անհրաժեշտ էր զորակոչել բոլորին, բացառել խուսափողների թիվը: Հակառակ դեպքում գործը կձախողվեր, այն պարզ պատճառով, որ յուրաքանչյուր զորակոչվող տեսնելով, որ իր դրացին այս կամ այն կերպ խուսափում է ծառայությունից, ինքը ևս կփորձեր խույս տալ դժվարություններից: Դեռևս 1917թ վերջին օրերին արձակված հրամանով

---

[126] Նույն տեղում, ֆ. 289, ց. 1, գ. 4, թ. 1; ֆ. 4047, ց. 1, գ. 110, թ. 1:
[127] Նույն տեղում, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 18:
[128] Բժ. Յովակիմ Մելիքեան, Արեան ճանապարհով, «Հայրենիք», 1924, դեկտեմբեր, N 2, էջ 94:
[129] Աստուածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1964, ապրիլ, N 4, էջ 72; «Արամը», էջ 92:

տանտերերին հանձնարարվել էր հետևել, որ 20-32 տարեկանները մինչև տարեվերջ զինվորագրվելու համար ներկայանան սահմանված վայրեր: Նրանք պարտավոր էին խուսափողների մասին անհապաղ տեղեկացնել Հատուկ կոմիտեին, այլապես խստորեն կպատժվեին[130]: Առանձին հրամաններով զորամասերից ժամանակավորապես արձակված զինվորներին կարգադրվում էր 1918թ. հունվարի 10-ին ներկայանալ Երևանում տեղակայված պահեստի գումարտակ[131]:

Հատուկ կոմիտեն վճռականորեն պայքարում էր դասալիքների, զորակոչից խուսափողների, զենք-զինամթերք, պետական գույք հափշտակողների դեմ: 1918թ. փետրվարի վերջերին հրապարակված հրամանով նախատեսվում էր Զինվորական դատարանի առաջ կանգնեցնել բոլոր այդպիսի տարրերին[132]: Դրանք զուտ խոսքեր չէին: 1918թ. մարտի 2-ին որպես հայրենիքի դավաճաններ Ալեքսանդրապոլում գնդակահարվեցին երեք զինվորներ՝ երկուսը դասալքության, մեկը՝ բանակից ձի գողանալու համար[133]:

Դասալիքներին ու զորակոչից խուսափողներին հայտնաբերելու, ինչպես նաև մահմեդական խռովությունները ճնշելու նպատակով Արամը և Դրոն անհրաժեշտ գտան ստեղծել մի կարգապահ ու մարտունակ զորամաս[134]: Կարճ ժամանակամիջոցում Դրոյի ղեկավարությամբ ստեղծվեց 1200 հետևակային և 200 հեծյալ ընդգրկող հատուկ զորամիավորում:

Նկատենք, որ 1918թ. սկզբին տհաճ միջադեպ էր եղել Արամի և Դրոյի միջև: Վերջինս հանդիմանել էր Արամին այն բանի համար, որ նա արդարացրել էր ավտոտնտեսության պատասխանատու Խաչիկ Ստեփանյանի վարմունքը, որը կատարելով Հատուկ կոմիտեի հրահանգը, այն է՝ առանց իր արտոնության ոչ ոքի չտրամադրել մեքենա, հրաժարվել էր առանց նրա արտոնության մեքենա հատկացնել նաև Դրոյին[135]: Թեև դրանից հետո Արամի և Դրոյի հարաբերությունները փոքր

---

[130] Հ ԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 4, թ. 2; ֆ. 4047, ց. 1, գ. 110, թ. 2:
[131] Նույն տեղում, ֆ. 289, ց. 1, գ. 4, թ. 3, 4; ֆ. 4047, ց. 1, գ. 110, թ. 3:
[132] Նույն տեղում, ֆ. 4047, ց. 1, գ. 110, թ. 5:
[133] Նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 177, թ. 1:
[134] Ter Minassian A., La Re'publique d'Arme'nie (1918-1920). La memoire du siecle, Bruxelles, 1989, p. 76:
[135] «Արամը», էջ 116-117:

ինչ սառել էին, այնուամենայնիվ նրանք շարունակում էին համագործակցել ի շահ հայրենիքի անվտանգության:

Հայկական զինուժի ձևավորման գործն արդյունավորելու նպատակով Հատուկ կոմիտեն, հավատարիմ իր խոստմանը, քայլեր ձեռնարկեց զորակոչվողների ընտանիքների կարիքները հոգալու ուղղությամբ: 1918թ. հունվարի 12-ին Հատուկ կոմիտեն որոշեց մինչև ազգային ու պետական միջոցների գոյացումը նշված գործը կազմակերպել գյուղական համայնքների հաշվին: Պարտավորություններից խուսափող գյուղերն ու անձինք ենթակա էին պատասխանատվության և վճարելու էին կրկնակի չափերով: Նույն խնդրին էր ուղղված նաև Ազգային խորհրդի 1918թ. փետրվարի 16-ի շրջաբերականը, որում զորակոչից խուսափելը որակվում էր դավաճանություն և ավելացվում, որ սպառնացող վտանգի պայմաններում «ամբողջ ազգը պետք է մտածէ իր պաշտպանութեան մասին. զինուորացուները-կռուի դաշտում, իսկ մնացածները-հոգալով զինուորների թողած ընտանիքի մասին»[136]: Մեկ առ մեկ սահմանվում էին գյուղերի պարտականությունները համագյուղացի զինվորների ընտանիքների նկատմամբ նրանց նյութական կացության վատթարացումը կանխելու համար:

Ֆինանսական միջոցների սղությունը իշխանություններին դրդեց ներմուծել ազգային տուրքի գաղափարը: Դա նշանակում էր, որ յուրաքանչյուր ընտանիք համաձայն իր կարողության կամ եկամտի չափի, պարտադիր կերպով տարեկան որոշակի տուրք պետք է մուծեր ազգային բյուջե: 1918թ. մարտի 7-ին Հատուկ կոմիտեն հայ ազգաբնակչությունից պահանջում էր անհապաղ վճարել տուրքը և նախազգուշացնում, որ թերացողները կենթարկվեն խիստ պաստիժների[137]: Ընդհանուր առմամբ, Երևանի Ազգային խորհրդին 1918թ. փետրվար-հուլիս ամիսներին ազգային տուրք էին մուծել Երևանի 1443 բնակիչներ[138]:

Քայլեր էին ձեռնարկվում ձևավորվող զորամասերը սպառազինելու ուղղությամբ: Այդ նպատակով Երևանի Ազգային խորհրդի կողմից փոքրիկ զորամասեր ուղարկվեցին Ջուլֆա, Շահթախթ, Նախիջևան,

---

[136] Հ ԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 6, թ. 1:
[137] Նույն տեղում, գ. 4, թ. 9; ֆ. 4047, ց. 1, գ. 110, թ. 7:
[138] Նույն տեղում, ֆ. 289, ց. 1, գ. 1, թ. 1-74:

Շարափխանե, որոնք որոշ քանակությամբ ռազմամթերք տեղափոխեցին Երևան[139]: Օգտագործվում էին նաև նահանգի ռեսուրսները: Արամի կարգադրությամբ ստեղծվել էր մի հանձնաժողով[140], որը պետք է հավաքեր նահանջող ռուսական զորքի կողմից ճակատից բերվող զենք-զինամթերքը, մեքենաները, ձիերը և դրանք հատկացներ հայկական զորամասերին: Զորքին ոչ պիտանի ձիերը նրա կարգադրությամբ բաժանվում էին ժողովրդին:

Արամի գլխավորությամբ, որին գործակցում էին 1918թ. հունվարին Երևանում հաստատված գեներալ Մովսես Սիլիկյանը, Հայկական կորպուսի կոմիսար Դրոն, գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանը և իրատես ու տաղանդավոր այլ զինվորականներ, կատարված աշխատանքների շնորհիվ ձևավորվում էր հայկական կանոնավոր զինուժը: 1918թ. մարտի սկզբի դրությամբ Հայկական կորպուսի երկրորդ դիվիզիան, այլ կերպ՝ Երևանյան զորաջոկատը, որի հրամանատարն էր գեներալ Մ. Սիլիկյանը, հիմնականում կազմավորվել էր:

Հայկական զորամասերի ձևավորման, ռազմաճակատի ամրապնդման խնդիրն անխզելիորեն կապված էր Երևանի նահանգում իրադրության կայունացման հետ, ինչն առաջին հերթին թելադրում էր սանձահարել հսկայական չափեր ընդունած մահմեդականության հակահայկական խռովությունները, որոնք կազմակերպվում և ուղղորդվում էին թուրքական հրամանատարության կողմից:

Մահմեդական ավազակախմբերը հարձակվում էին հայկական բնակավայրերի, հաղորդակցության ճանապարհների վրա, ավերում երկաթգծերն ու երկաթուղային կայարանները, կամուրջները, խորտակում գնացքները, թալանում դրանք և մորթում դրանցում գտնվող հայերին: Այդ շարժումները ոչ միայն խափանում էին զորամասերի փոխադրումը ռազմաճակատ, այլև պատճառ էին դառնում, որ ռազմունակ հայերն իրենց հարազատներին պաշտպանելու համար գամված մնան սեփական բնակավայրերում, կամ այդ նպատակով լքեն ռազմաճակատը:

---

[139] «Լրատու» Երևանի Հայոց Ազգային Խորհրդի, Երևան, 1918, հուլիսի 23, N 6:
[140] Բժ. Յովակիմ Մելիքեան, նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1924, դեկտեմբեր, N 2, էջ 95:

Թաթարների ըմբոստությունների սպառնալից բնույթի վերաբերյալ Երևանից հաղորդում էին Թիֆլիս՝ Անդրկովկասյան Կոմիսարիատին, որը չէր կարողանում շտկել կացությունը: Այնինչ դրությունը թեժանում էր: 1918թ. փետրվարի 20-ին հայ-թաթարական ընդհարումներ տեղի ունեցան անգամ Երևան քաղաքում: Դրանք դադարեցին միայն Արամի, Դրոյի, Շահխաթունու միջամտության շնորհիվ[141]:

Կոմիսարիատի անկարողությունն ու չկամությունը նահանգի իշխանություններին՝ ի դեմս Արամի և Դրոյի, ի վերջո դրդեց սեփական ուժերով հանգուցալուծել խնդիրը: Վճռական գործողությունների անցնելուց առաջ հայկական կողմը փորձեց մահմեդական գործիչների հետ բանակցելով հասնել հարցի խաղաղ լուծմանը, սակայն ապարդյուն:

Փետրվարի 22-ին հայկական զորամասերը Դրոյի գլխավորությամբ գրավեցին ու հրկիզեցին Ուլուխանլուն, որը հարկադրված հնազանդություն հայտնեց: Այդ վճռական քայլով բացվեց երկաթուղային կապը Երևան-Ղամարլու(Արտաշատ)-Ալեքսանդրապոլ գծում: Սանձահարվեցին նաև Սուրմալուի, Իգդիրի, Կողբի, Ղամարլուի, Նոր Բայազետի շրջանների թուրքերը: Համառ կռիվների արդյունքում հայկական ուժերը ջարդեցին Դավալուն (Արարատ) շրջապատած 3000-ոց թաթարական խուժանին, որը շաբաթներ շարունակ փորձում էր տիրանալ նրան: Դա մեծ իրարանցում առաջացրեց Թիֆլիսում: Փետրվարի 25-ին Երևան ժամանեց Անդրկովկասի օրենսդիր մարմնի պատվիրակությունը, սակայն անօգուտ: Վերջինս չուներ ոչ ուժ և ոչ էլ ցանկություն իրավիճակը Երևանում կայունացնելու համար:

Թուրք-քրդական ավազակախմբերի դեմ պայքարի ընթացքում հայկական զորամասերը 1918թ. առաջին եռամսյակում հնազանդեցրին 50-ից ավելի թաթարական գյուղեր[142]: Այդ պայքարը շարունակվեց նաև հետագայում:

Արամի գործունեությունը չէր սահմանափակվում միայն թաթարական գյուղերի հնազանդեցմամբ: Նա որոշակիորեն վարում էր երկիրն այդ թշնամական տարրից մաքրագործելու քաղաքականություն: 1918թ. գարնանն Ալագյազի շրջանը թաթարներից ազատագրած խմբապետ Մուշեղը

---

[141] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 141:
[142] Հ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5:

Հանրապետության ստեղծումից հետո Ռուբենին հայտնել է, որ «պապենական այդ հողերը վերագրաւելու» գործում ունեցել են Արամի օժանդակությունը[143]: Այդ կերպ ոչ միայն ինչ-որ չափով լուծվում էր գաղթականության հարցը և հայացվում երկիրը, այլև ստրատեգիական կարևորության տարածքներն ազատվում էին թշնամական տարրերից: Շնորհիվ Արամի և Դրոյի շրջահայաց գործելակերպի՝ հաջողվեց միառժամանակ սանձահարել թաթարների ու քրդերի հակահայկական ելույթները:

Օգտվելով երկրում ստեղծված ծանրագույն իրավիճակից՝ ակտիվացել էին նաև հայ անիշխանական տարրերը: Սկզբնավորվել էր մի շարժում, որը հայտնի է մաուզերիզմ անունով: Մաուզերիստների գործողությունների հետևանքով նահանգում ծաղկում էր թալանչիությունը, վտանգվում կյանքի և գույքի ապահովությունը, ընկնում էր տեղական իշխանության հեղինակությունը ժողովրդի շրջանում: Երևանում հաստատվելու պահից Արամը պայքարում էր նմանօրինակ դրսևորումների դեմ: ՀՅ դաշնակցության հայտնի խմբապետերից Դալի Ղազարի խմբի տղաների մի մասը «մաուզերիստներ» էին և վնասակար գործունեություն էին ծավալել երկրում: Իր մոտ կանչելով Դալի Ղազարին՝ Արամը նրան կարգադրեց հավաքել իր խումբը և մեկնել ճակատ[144]: Նրա նախազգուշացումից հետո, 1918թ. մարտի 2-ին Դալի Ղազարը հայտարարեց առաջավոր գիծ մեկնելու մասին[145]: Այդ հայտարարությունից հետո պարզվեց, որ խմբին պատկանելու անվան տակ քրեական գործունեություն էին ծավալել նաև խմբի հետ կապ չունեցող անձինք: Իր չարագործություններով բնակչության վրա ճնշող ազդեցություն էր ունենում հատկապես մաուզերիստների պարագլուխներից Չոլախ Գևորգը՝ Դալի Ղազարի նախկին մարտիկներից մեկը: Բազմաթիվ նախազգուշացումներից հետո նա ոչ միայն չուղղվեց, այլ ընդհակառակը՝ ըմբոստացավ իշխանությունների դեմ: Անհանդուրժելի գտնելով Չոլախ Գևորգի գործունեությունը՝ Արամը կարգադրեց գնդակահարել նրան[146]:

---

[143] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1990, էջ 109:
[144] Բժ. Յովակիմ Մելիքեան, նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1925, փետրվար, N 4, էջ 85:
[145] Հ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 178, թ. 1:
[146] Բժ. Յովակիմ Մելիքեան, նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1925, փետրվար, N 4, էջ 85; «Արամը», էջ 112-114:

Արամը, որպես հայրենասեր ու հեռատես քաղաքական գործիչ, դարավոր թշնամուց հայ ժողովրդի փրկության ճանապարհին երկրորդական համարելով գաղափարական-քաղաքական տարաձայնությունները, ՀՅԴ մի շարք այլ գործիչների հետ համախորհուրդ, փորձեց դաշնակից ձեռք բերել՝ ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի: Այդ նպատակով նա հարաբերությունների մեջ մտավ Երևանի բոլշևիկներ Պ. Մակինցյանի և Արշ. Մելիքյանի հետ: Նրա կողմից բոլշևիկների հետ բանակցելու նպատակով Մոսկվա ուղարկվեց Երևանի Հայոց Ազգային խորհրդի անդամ Պ. Մակինցյանը, որը խոստացել էր աշխատել հայոց օգտին: Թիֆլիսում գտնվող Ռուբենին ուղղված Արամի գրությունը թույլ է տալիս ընկալել այն կարևորությունը, որ տալիս էր վերջինս այդ գործուղմանը: Արամը Ռուբենին գրում էր. «Ապահով անցկացրէք: Անհրաժեշտ է: Պէտք է մենք ամէն կերպ միանանք Ռոստոմին (Բագուին): Քու էշը քշիր: Մեր մէջքը թէ ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիւը»[147]: Ակնհայտ է, որ Արամի մտահոգությունն ազգային նոր աղետի կանխումն էր: Սակայն, մինչև Հայաստանի խորհրդայնացումը Պ. Մակինցյանից որևէ լուր չստացվեց Երևանում: Արամը հեռակա կարգով մասնակցեց Թիֆլիսում Ռուբենի և ՀՅԴ այլ գործիչների կողմից Անդրկովկասի բոլշևիկյան ղեկավարների հետ տարվող բանակցություններին: Այդ ընթացքում ՀՅԴ գործիչների և Կովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ստ. Շահումյանի ջանքերով ընդունվեց համագործակցության գաղտնի ծրագիր, որի առանցքը հայ-բոլշևիկյան ճակատի ձևավորումն էր թուրքերի դեմ՝ Կովկասի խորհրդայնացման պայմանով (Արևմտահայաստանը լինելու էր անկախ)[148]: Հայ գործիչների ջանքերը հաջողություն չբերեցին: Ստ. Շահումյանը չկարողացավ կատարել իր խոստումը՝ ռուսական զորամասեր պահել ռազմաճակատում, իսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ու թուրքական սրընթաց առաջխաղացումը ջնջեցին հետագա գործակցության հնարավորությունները:

Մինչ Երևանում և այլուր հայկական շրջանակները ջանքեր էին թափում ազգային փրկության համար, տարածաշրջանում և միջազգային

---

[147] Ռուբէն, հ. 7, էջ 143:
[148] Նույն տեղում, էջ 142-143:

հարաբերություններում կատարվեցին անցքեր, որոնք էլ ավելի ծանրացրին հայ ժողովրդի կացությունը:

1918թ. հունվարի 30-ին (փետրվարին 12-ին) թուրքական 50000-ոց բանակը՝ խախտելով Երզնկայի զինադադարը, անցել էր հարձակման և, հաղթահարելով հայկական փոքրաթիվ ուժերի հերոսական դիմադրությունը, մինչև մարտ ամսվա վերջը գրավել Արևմտյան Հայաստանը՝ նոր ոճիրներ գործելով հեռանալ չհասցրած հայ բնակչության նկատմամբ: Այնուհետև, հետապնդելով նահանջող փոքրաքանակ հայկական զորամասերին՝ թշնամին շարժվեց դեպի Արևելյան Հայաստան:

Միջազգային հարաբերություններում ևս գործընթացները զարգանում էին ի վնաս հայ ժողովրդի շահերի: Երկարատև բանակցություններից հետո, 1918թ. փետրվարի 18-ին (մարտի 3-ին) Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային զիջեց Արևմտյան Հայաստանը, Կարսի և Բաթումի մարզերն ու Արդահանի օկրուգը[149]: Ոչ մի լավ հեռանկար չէին խոստանում նաև Թուրքիայի և Անդրկովկասի ներկայացուցիչների միջև մարտի 1(14)-ին Տրապիզոնում սկսված բանակցությունները, որոնք ձգձգումներով շարունակվեցին շուրջ մեկ ամիս[150]: Թուրքական կողմը կտրականապես մերժելով անդրկովկասյան պատվիրակների բոլոր առաջարկները՝ պահանջեց անվերապահորեն ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանները և հռչակել Անդրկովկասի անկախությունը: Հետևանքը եղավ այն, որ մարտի 31-ին Անդրկովկասյան Սեյմը որոշեց իր պատվիրակներին հետ կանչել Թիֆլիս և շարունակել պատերազմը Թուրքիայի դեմ: Սակայն, վրացիների ոգևորությունը շուտով չքացավ, և հայերը դարձյալ մնացին մենակ թուրքերի դիմաց:

ԱՐԱՄ ՍԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԴԻԿՏԱՏՈՐ

1918թ. մարտի 23-ին (ապրիլի 5-ին), տասնօրյա մարտերից հետո, հայկական զորքերը հեռացան նաև Սարիղամիշից: Սարիղամիշի անկման

---

[149] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 101-102:
[150] Նույն տեղում, էջ 113-138:

լուրը ցնցեց հայ ժողովրդին, հատկապես Երևանի ազգաբնակչությանն ու զորամասերին: Երևանն աննախադեպ իրարանցման մեջ էր: Հասարակության տարբեր խավերի մասնակցությամբ տեղի էին ունենում խորհրդակցություններ, ժողովներ, որոնց միակ նպատակն էր ելք գտնել ստեղծված կացությունից, որպիսին նկատվեց նահանգում արագ ու վճռական գործող ուժեղ իշխանության ստեղծումը՝ ի դեմս դիկտատորության: Դիկտատորի ընտրության համար առաջադրվեցին գեներալ Մ. Սիլիկյանի, Դանիել Բեկ Փիրումյանի, Արամի և ուրիշների թեկնածությունները: Արամի թեկնածությունն առաջադրած Երևանի պարետ Շահխաթունին գտնում էր, որ նրա վրա պետք է դնել դիկտատորի ծանր պարտականությունը, քանի որ նա ընբռնում էր երկրի կացությունը, ուներ «լայն ժողովրդականութիւն, ուժեղ կամք, վճռականութիւն»[151]: 1918թ. մարտի 24-ին Երևանի բնակչությունը, զորքը և Հայոց ազգային խորհուրդը Արամին ընտրեցին Երևանի նահանգի «դիկտատոր»՝ նրան օժտելով անսահմանափակ լիազորություններով: Պատմության մեջ, թերևս, եզակի դեպքերից էր, երբ ժողովուրդը կամովին ընտրեց դիկտատոր, որն իր անսահմանափակ իշխանությունը մինչև վերջ օգտագործեց բացառապես հօգուտ համազգային շահերի, երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային ու զինվորական կառույցներից: Անշուշտ, իրավացի է Հայաստանի Հանրապետության ներկայիս վարչապետ Տիգրան Սարգսյանը. «...Սա այն բացառիկ դեպքերից է, երբ ասում ես դիկտատոր, եւ որեւէ բացասական էմոցիա մեջդ չի առաջանում»[152]:

Դիկտատոր ընտրվելու կապակցությամբ ժողովրդի առջև ունեցած ելույթում Արամը պատրաստակամություն հայտնեց ուժերի ներածին չափով ծառայել հայրենիքին և շարունակել անզիջում պայքարը հայրենիքի հանդեպ իրենց պարտքը թերացողների դեմ: Անդրադառնալով Չոլախ Գևորգի գնդակահարությանը՝ նա անվարան հայտարարեց, որ այդպես է վարվելու բոլոր նրանց նկատմամբ, ովքեր կխանգարեն ընդհանուր գործին ու կխաթարեն հասարակական անդորրը[153]:

---

[151] Բժ. Յովակիմ Սելիքեան, նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1925, փետրվար, N 4, էջ 87:
[152] «Երկիր», Երևան, 2009, հունվարի 30, N 3, էջ 3:
[153] Բժ. Յովակիմ Սելիքեան, նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1925, փետրվար, N 4, էջ 87-88:

Արամը լավ էր հասկանում, որ միայնակ ոչնչի հասնել հնարավոր չէ, որ հայրենիքի փրկությունը կախված է ժողովրդի հավաքական կամքից ու կարևորում էր վերջինիս պատրաստակամությունը նվիրաբերվելու ընդհանուր գործին, ուստի անընդհատ փորձում էր բարձրացնել նրա խանդավառությունը: Նա նշում էր. «...դուք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է և եթէ ժողովուրդը պատրաստակամութիւն ունի... աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի»[154]:

ՀՅԴ նշանավոր գործիչներից Ս. Օհանջանյանը, որն Արամին ճանաչում էր 1904թ., ըստ արժանվույն գնահատելով նրա դերը հայ ժողովրդի համար այդ ծանր ժամանակաշրջանում, նշել է. «...Արամն է, որ լուսաւորում է բոլորիս ճամբան, եւ քանի նա կայ, կասկած չունեմ, որ յաջողելու ենք եւ լոյս աշխարհ ենք դուրս գալու այս...խոր վիրապից»[155]: Այս խոսքերը, ինչպես նաև ժողովրդական խանդավառության պայմաններում Արամի դիկտատոր ընտրվելու փաստը նրա անձի նկատմամբ տածվող անսահման հավատի վկայություններն են:

Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյան), որը 1918թ. Ալեքսանդրապոլի Հայոց Ազգային խորհրդի նախագահն էր, նշելով, որ Երևանի Ազգային խորհուրդն Արամին օժտեց դիկտատորական իրավունքներով «երկիրը կառաւարելու և գլխաւորապէս պատերազմը տաճիկների դէմ կազմակերպելու և վարելու գործում», նկատել է, որ «շնորհիւ իր բարձր հեղինակութեան՝ Արամի առաջնորդութեամբ հայ ժողովուրդը, մի մարդու նման ուտքի ելաւ ու ծառացաւ հզօր թշնամու դէմ իր ինքնապաշտպանութեան անհաւասար կռիւը հերոսաբար կերտելու համար»[156]:

Դիկտատորի պաշտոնը ստանձնելուց քիչ անց, 1918թ. մարտի 28-ին Արամը ժողովրդին դիմեց մի կոչով, որը միաժամանակ գործունեության համապարփակ ծրագիր էր՝ միտված ռազմաճակատի ամրապնդմանը, նահանգում ամուր իշխանության և կարգ ու կանոնի հաստատմանը: Գո-

---

[154] «Զանգ», 1918, մարտի 27, N 24:
[155] Աստուածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1964, հուլիս, N 7, էջ 75:
[156] Իրազեկ Յ., Մոտիկ անցեալից (Պատմական դէպքեր եւ ապրումներ.1917-1922), Պէյրութ, 1956, էջ 27:

տեպնդված իր հանդեպ ցուցաբերված բացառիկ վստահությունից, մեկ անգամ ևս հայտարարելով, որ քաղաքացիական ու զինվորական մարմինները պահպանելու են իրենց դերը, իսկ իր անելիքը լինելու է դրանց համակարգումն ու աշխատանքների արագացումը, Արամը հստակորեն սահմանեց նրանց անելիքները: Համոզված լինելով, որ հայ ժողովրդի փրկությունը մեծապես պայմանավորված է նրա հավաքական կամքով, Արամը հերթական անգամ փորձում էր ազդել հասարակության յուրաքանչյուր անդամի, առաջին հերթին զինվորականության գիտակցության և ինքնասիրության վրա: Նա շեշտում էր. «Հայրենակիցներ! Հասարակական շարժման յաջողութիւնը գերազանցապէս կախուած է զոհաբերութիւնից և կարգապահութիւնից: Զոհեցէք ձեր անհատականը, ձեր ոյժերի և ստացուածքի մաքսիմումը, քանի դեռ հնարաւորութիւն կայ փրկելու ընդհանուրը. այլապէս դուք և ձեր կարողութիւնը, ձեր կայքերն ու դրամը, ձեր կանայքն ու երեխաները կըտրուեն ներս խուժող թշնամու ձիերի սմբակների տակ... Հայ զինուորներ, նամանաւանդ հայ սպաներ, վերջին խօսքս ձեզ եմ ուղղում. տոգորուեցէք վայրկեանի գերագոյն ոգով: Հայրենիքի փրկութիւնը ձեր ձեռքին է: Դուք, սպաներ ու զինուորներ, կամ պէտք է մեր սիրուն հայրենիքի փրկիչները լինէք, կամ նրա գերեզմանափորները: Գործի դիմենք, վերջ տանք սին խօսքին ու ժողովներին: Թշնամին՝ հրէշային ախորժակներով, առաջանում է. հուժկու գրոհով պէտք է քշենք նրան հայրենի սահմաններից»: Արամը կոչն ավարտում էր բավական ազդու տոնով. «Ցոյց տանք աշխարհին, որ Հայը ազատ անկախ ապրելու իրաւունք ունի: Այժմ կամ երբէք»[157]: Նկատելի է, որ Արամը ոչ միայն պարզորոշ ըմբռնում էր վտանգի ահռելիությունը, այլև առաջադրում դրա հաղթահարմանն ուղղված որոշակի և իրատեսական ծրագիր:

Գործակցելով զորահրամանատարության, պետական, հասարակական-քաղաքական կառույցների հետ՝ Արամը հաջողությամբ շարունակեց նահանգի ռազմաքաղաքական իրավիճակի կայունացման գործը:

Դեռևս 1918թ. մարտի 21-ին ստորագրած հրամանով Արամը թաղային մարմիններին հրահանգեց ցուցակագրել 18-ից բարձր բոլոր

---

[157] Հ ԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 9, թ. 1; Սարդարյան Կ., Պատմություն և իրականություն, Երևան, 1991, էջ 15-16:

տղամարդկանց, իրենց տներում գիշերող զինվորներին և մինչև մարտի 27-ը ցուցակները ներկայացնել իրեն[158]: Երևանի Հայոց Ազգային խորհրդի կողմից ստեղծվեցին արտակարգ հանձնաժողովներ՝ զորահավաքի գործն արագացնելու նպատակով: 1918թ. մարտի 31-ի հրամանով Ազգային խորհուրդը Նոր Բայազետի շրջանի հայ գյուղացիությանը տեղեկացնում էր իրենց շրջան 12 հոգանոց պատվիրակություն ուղարկելու մասին, որի խնդիրն էր լինելու տեղական Ազգային խորհրդի և իր լիազորների հետ կատարել 19-32 տարեկանների զորահավաք: Սահմանվում էր, որ զորահավաք կատարող մարմնին անսացողները «ԱՆԽՆԱՅ ԿՌՄԲԱԿՈՇԻԵՆ ու Կ՚ԳՆՏԱԿԱՀԱՐԻԵՆ»[159]:

Ձեռնարկված արտակարգ և հետևողական միջոցառումների շնորհիվ ստեղծվեցին 10-12 հազարանոց զինուժ, որին հիմնականում հաջողվեց ճնշել թուրքական հակապետական շարժումները նահանգի զգալի մասում, բացել ռազմաճակատի և հայկական բնակավայրերի հետ կապող հիմնական մայրուղիները: Հաջողվեց մեղմել պարենային խնդիրը, զսպել դասալքությունն ու ավազակաբարո մյուս տարրերին:

Այս ժամանակաշրջանում շարունակում էր բարդանալ իրավիճակը Կովկասի քաղաքական կենտրոնում և ռազմաճակատում: Ապրիլի 1-ին Բաքումի անկումից հետո վրացիները թաթարների հետ վճռեցին վերջ տալ պատերազմին, ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և Անդրկովկասը անկախ հայտարարելու Թուրքիայի պահանջը: 1918թ. ապրիլի 9(22)-ին Անդրկովկասյան Սեյմը հռչակեց Անդրկովկասի անկախությունը:

Իրադարձությունների այդօրինակ զարգացումից ակնկալիքներ ունեցող վրացական շրջանակները փորձեցին իրենց շահերը պաշտպանել հայության դեմ ուղղված խարդավանքների միջոցով: Ապրիլի 11(24)-ին Անդրկովկասի նորընտիր վարչապետ Չխենկելին և զինվորական նախարարի պաշտոնակատար Օդիշելիձեն, առանց տեղեկացնելու Թիֆլիսի հայ ղեկավար շրջաններին, Հայկական կորպուսի հրամանատար գեն. Թ. Նազարբեկյանից պահանջեցին Կարսը հանձնել թուրքերին ու զորքերը հետ քաշել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահ-

---

[158] Հ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 180, թ. 1; «Ձանգ», 1918, մարտի 27, N 24:
[159] Հ ԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ. 2:

մանված նոր սահմանագիծ: Վրաց գործիչների խարդավանքների հետևանքով ապրիլի 12(25)-ին Կարսը հանձնվեց թուրքերին: Այդ կերպ վրացիները, Հ. Սիմոնյանի իրավացի բնորոշմամբ, փորձեցին «իրենց երկիրը փրկել Հայաստանի՝ թեկուզ կործանման հաշվին»[160]:

Արամի գործունեությունը լիովին ընկալելու և ճիշտ գնահատելու համար թեթևակի անդրադառնանք Կարսի անկման պատճառներին: Մեր կարծիքով Կարսի անփառունակ անկման մեջ իրենց մեղքի որոշակի բաժինն ունեին նաև Թիֆլիսի հայ քաղաքական ղեկավար շրջանակները: Եթե նրանք ցուցաբերեին նախաձեռնողականություն և աշխատեին ընթացք տալ ռազմաքաղաքական անցքերին, այլ ոչ թե հետևեին դրանց զարգացմանը, ապա նման տխուր փաստի առաջ, ամենայն հավանականությամբ, չէին կանգնի: Նրանք պարտավոր էին վաղօրոք, մինչև ապրիլի 10-12-ը, երբ գործվեց դավը, որի ընթացքում կտրված էր հեռագրական կապը Թիֆլիսի և Կարսի հայ հրամանատարության միջև, որոշել իրենց վերաբերմունքը դեպի Կարսի հետագա ճակատագիրը: Ասվածի համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ հայ գործիչները տեղյակ էին Տրապիզոնի բանակցությունների ընթացքին, որում առաջարկվել էր Կարսը զիջել թուրքերին: Ավելին, Հայկական կորպուսի հրամանատար զոր. Նազարբեկյանը Հայոց Կ. Ազգային խորհրդի նախագահին հղած մարտի 30-ի հեռագրում, որը տպագրվել էր նաև «Հորիզոն»ում, հերքել էր Ա. Չխենկելու հայտարարությունն այն մասին, թե Արդահանը վերցված է, իսկ Կարսի բախտը կվճռվի մոտակա օրերում: Բողոքելով Չխենկելու անհիմն հայտարարության դեմ՝ հայ զորավարը վստահությամբ հայտնել էր, որ «Կարսի բաղդը ոչ մի՛այն չի վճռվի այս օրերում, այլև թիւրքերին հեշտ չի լինի վերցնել այդ ամրութիւնը, որի պաշտպանութեան համար բերդապետը ձեռք է առել բոլոր անհրաժեշտ միջոցները...»[161]:

Այս հանգամանքը լրացուցիչ անգամ փաստում է, թե որքան վճռորոշ էր Արամի նման հեռատես, նախաձեռնող ու կազմակերպչական ջիղ ունեցող գործչի ներկայությունը Երևանի նահանգում:

---

[160] Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գ. Բ, Երևան, 1996, էջ 110:
[161] «Հորիզոն», 1918, ապրիլի 14(1), N 69:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Շարունակելով հարձակումը՝ թուրքական զորքերը դիրքավորվեցին Արփաչայի աջ ափին՝ ավարտելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով իրենց տրված տարածքների զավթումը: Սակայն թշնամին այդքանով չբավարարվեց: 1918թ. մայիսի 11-ին, Բաթումում սկսված հաշտության բանակցություններում թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյը Անդրկովկասի պատվիրակներին ներկայացրեց պայմանագրի նոր նախագիծ, որով պահանջվում էր իրենց հանձնել Երևանի նահանգի զգալի մասը, Ախալքալաքի, Ախալցխայի գավառները և հայերի համար կենսական նշանակություն ունեցող Ալեքսանդրապոլ-Կարս, Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղագծերը:

1918թ. մայիսի 15-ին թուրքական բանակը գրավեց Ալեքսանդրապոլը և երկու ուղղություններով՝ Համամլու-Բաշ-Ապարան և Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգծի ուղղությամբ, շարժվեց դեպի Երևան[162]: Մայիսի 20-ին թշնամին գրավեց Երևանից 40 կմ հեռու գտնվող Արաքս կայարանը, իսկ հաջորդ օրը՝ Երևանից 30 կմ հեռու գտնվող Սարդարապատ կայարանն ու գյուղը: Թուրքական ներխուժման վտանգն անմիջականորեն կախվեց Էջմիածնի և Երևանի վրա: Ամբողջ սրությամբ դրվեց հայության լինել-չլինելու խնդիրը: Այդ իրողությունը մատնանշել են անգամ Թուրքիայի դաշնակցի՝ Գերմանիայի՝ իրադարձությունների ժամանակակից գործիչները: Մասնավորապես, իր կառավարությանն ուղղած 1918թ. մայիսի 23-ի հեռագրում Բաթումում գերմանական պատվիրակության ղեկավար Ֆոն Լոսովը նկատել է. «Թուրքական քաղաքականության նպատակն է, ինչպես ես միշտ կրկնում եմ, մշտապես գրավել հայկական շրջանները և բնաջնջել հայերին: Թալեաթի և Էնվերի դրան հակառակ խոսքերն անարժեք են»[163]:

---

[162] Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 174-175; Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան. Մայիս 1918), Երևան, 1991, էջ 33-34:

[163] Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 80:

Թշնամու առաջխաղացումը տեղիք տվեց մեծ իրարանցման և ուղեկցվեց բազմահազար հայ ազգաբնակչության նոր գաղթով դեպի Երևան: Հոսքն այնքան մեծ էր, որ ծանրաբեռնվել էին Երևան տանող բոլոր ճանապարհները: Էջմիածնի մոտ ծովածավալ բազմության կուտակման հետևանքով փակվել էին ելքի և մուտքի ճանապարհները: Երևանի նահանգում առկա էր պարենի, դեղորայքի, վառելիքի, մարդկային տարրական գոյության համար ամեն ինչի սուր պակաս: Երկիրը շրջապատված էր թշնամական օղակով. մի կողմից թուրքական բանակն էր, մյուս կողմից ցանկացած պահի նրան աջակցելու պատրաստ թաթարները: Դեպքերի ժամանակակից Ա. Աստվածատրյանն այսպես է նկարագրել այդ օրերի դժխեմ իրավիճակը. «Ըստ ամենայնի բնական պետք է համարուէր, եթէ Երեւանի, Արարատեան դաշտի հայութիւնը պարտուէր Սարդարապատի տակ...բոլոր պայմանները դասաւորուել էին յօգուտ տաճիկների եւ ի վնաս հայերի: Անգամ այսօր, տասնեակ տարիներ յետոյ, մարդ առանց ներքին դողի անկարող է յիշել նոյն օրերի յուսահատական պայմանները: Աշխարհից կտրուած, շրջապատուած անտուն ու անտեղ հարազատներով ու գաղթականներով, պարենավորման անմխիթար կացութիւն, հաղորդակցութեան ողբալի միջոցներ. ոչ մի տեղից ոչ մի մխիթարական, յուսատու ձայն...»[164]:

Չկար ամենից կարևորը՝ հավատը սեփական ուժերի և հաջողության նկատմամբ: Շարունակական պարտություններն ու հայրենիքի մեծագույն մասի կորուստը բարոյալքել էր հայկական զորքին: Անգամ գեն. Մ. Սիլիկյանը մի պահ ընկճվել էր. նրա հաղորդագրությունները կրում էին հուսահատական բնույթ: Հայկական կորպուսի շտաբի մայիսի 20-ի գրառումներում կարդում ենք. «Գեն. Սիլիկյանը հաղորդում է Երևանյան ջոկատի ողբերգական վիճակի մասին. զորքերի հետագա կառավարելը դառնում է անհնարին»[165]: Գեն. Նազարբեկյանն Ազգային խորհրդին հաղորդում էր անհապաղ վերջնական հաշտություն կնքելու անհրաժեշտության մասին: Ս. Վրացյանն այդ օրերի մասին գրել է. «Դիմադրությունը շատերին թվում էր անհնար և անիմաստ: Հաղթության

---

[164] Աստուածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1964, հուլիս, N 7, էջ 77; «Արամը», էջ 129:
[165] Հ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 98, թ. 18:

վստահություն չէին ներշնչում և մինչև այդ բանակից հասնող տեղեկությունները. զոր. Սիլիկյանի հաղորդագրությունները մռայլ գույներով էին ներկայացնում զորամասերի դիմադրական կարողությունը: Բնակչությունը պատրաստվում էր փախուստի»[166]:

Հայոց մեջ իշխող պարտվողական տրամադրությունները, որոնք հանգում էին նույնիսկ Երևանից նահանջելու անհեթեթ մտքին, անխուսափելիորեն նրան տանելու էին դեպի կործանում, եթե չձեռնարկվեին արմատական հակամիջոցներ:

Այդ բախտորոշ օրերին Արամը դրսևորեց թշնամուն հակահարված հասցնելու աներեր կամք և մեծագույն եռանդ: Ս. Աֆանասյանի դիպուկ ձևակերպմամբ՝ «Արամը, ինչպես Վարդանը Ավարայրում, ի հայտ բերեց այդ հիշարժան հերոսապատմանը վայել քաջություն»[167]:

Դեռևս Ալեքսանդրապոլի անկումից առաջ Արամը, կանխատեսելով, որ թուրքերը չեն բավարարվելու ծեռք բերածով, նախանշել էր իրենց բռնելիք դիրքը: 1918թ. մայիսի կեսերին Երևանում գումարված արտակարգ ժողովում նա նշել էր. «Ես չեմ հաւատար, որ թիւրք բանակը կանգուն պիտի մնայ Ախուրեանի ափին» և իրեն բնորոշ հաստատակամությամբ ավելացրեց, որ «եթէ երբէք մեր ճակատի վրա թիւրքերը սկսեցին յառաջխաղացումը, մենք անպայման պէտք է դիմադրենք զէնքով, թնդանօթով, ոչ թէ ստրկօրէն անձնատուր ըլլանք և կոտորւինք»[168]:

1918թ. մայիսի 19-ի առավոտյան, երբ թշնամին նոր էր ներխուժել Արարատյան դաշտավայր, Արամ Մանուկյանը զորավար Սիլիկյանի հետ ունեցած հեռախոսազրույցում, անկարելի համարելով զորքերի հետագա նահանջը և Երևանն էլ ավելի մեծ վտանգի ենթարկելը, վերջինիս հանձնարարեց վերջ տալ հետագա նահանջին, պահպանել դիրքերը և Արարատյան դաշտավայրում թշնամուն հակահարված հասցնելու վերաբերյալ նախօրոք դրված խնդիրն իրագործելու համար վստահեցրեց, որ երկու օրվա ընթացքում զորավարին կտրամադրվի այդ

---

[166] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 145:
[167] Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան. Մայիս 1918). Երևան, 1991, էջ 41:
[168] Կոսոյեան Հ., նշվ. հոդվածը, «Դրօշակ», 1928, մայիս, N 5, էջ 137:

բանի համար անհրաժեշտ ամեն ինչ՝ մարդկային ուժ, զենք-զինամթերք և թիկունքի ոգևորությունը[169]:

Թշնամուն վճռական հակահարված հասցնելու վերաբերյալ որոշումն ընդունվել էր այդ օրերին զորահրամանատարության մասնակցությամբ Երևանում կայացած գաղտնի խորհրդակցության ժամանակ, այն բանից հետո, երբ Արամը վճռականորեն հայտնել էր բանակի կարիքները կատարելապես բավարարելու պատրաստակամության մասին[170]:

Մ. Սիլիկյանի հետ խոսակցությունից անմիջապես հետո Արամը հրավիրեց բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների ժողով՝ նրանց պարզելով իրողությունը: Մինչ ժողովականները կորոշեին հարցի քննարկումը թողնել երեկոյան գումարվելիք նոր ժողովին, Արամը՝ գիտակից պահի ճակատագրականությանը, լծվեց անդուլ աշխատանքի: Հայ ժողովրդի համար ծայրահեղ բարդ իրավիճակում նա ի հայտ բերեց իր ողջ ներուժը՝ անկոտրում կամքը, հեղինակությունը, կազմակերպչական տաղանդն ու եռանդը՝ արդարացնելու համար մի կողմից՝ իր վրա դրված հույսերը, մյուս կողմից՝ ամիսներ առաջ որդեգրված ուղու ճշմարտացիությունը: Անելիքը շատ էր, ժամանակը՝ սուղ: Նա իր գործակիցներին հրահանգեց անհապաղ՝ մինչև երեկո, առանց տարիքի ու դիրքի խտրության ռազմաճակատ ուղարկել բոլոր զինապարտներին: Խստագույնս արգելվեց քաղաքից հեռանալը: Կանայք պետք է տներից փամփուշտ հավաքեին և ջուր հասցնեին ճակատում գտնվող զինվորներին: Արամը, որը սիրում էր ամեն ինչին անձամբ հետևել, կրկնապատկել էր եռանդը. նա «իբրեւ շարժական ոգի, ամեն տեղ էր՝ հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում եւ կ՝ոգեւորեր իր խօսքերով ու կը ներշնչէր ամէնքին»[171]: Նա կարևորում էր ամենքին՝ հոգևորականությանը, բանվորությանը, պատանիներին ու կանանց, և ամենքին էլ գործի լծում:

---

[169] Շահխաթունի Ա., Արամը. յիշողութիւններ, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, հունվարի 30, N 670 . 249:
[170] Շահխաթունի Ա., Հանդիպում սպարապետ Նազարբէկեանի հետ(Իմ յուշերից), «Հայրենիք», 1959, հունիս, N 6, էջ 98:
[171] «Ճակատամարտ», 1921, հունվարի 30, N 670 . 249; Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, էջ 63:

Մայիսի 19-ի երեկոյան գումարված Ազգային խորհրդի նիստում հարց բարձրացվեց Երևանը թշնամուն հանձնելու, Նոր Բայազետի լեռները նահանջելու և այնտեղից դիմադրական մարտեր մղելու մասին: Հերթական անգամ Արամն ամենայն վճռականությամբ բացառեց անձնատվությունը՝ նշելով. «... ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակե խաչ քաշել մեր ամբողջ գործունեության եւ մեր ապագա քաղաքական մուրազներուն վրա, բոլորդ պիտի մնաք եւ մեռնիք»[172]: Այդ առիթով Ա. Ահարոնյանը գրել է, թե Արամն ուժգնորեն հարվածեց սեղանին և նշեց. «Երեւանը չենք դատարկի, եւ պէտք է կռուենք, դիմադրենք թշնամուն մինչեւ վերջին մեր կաթիլ արիւնը, մինչեւ վերջին գնդակը»[173]: Արամի վճռական կեցվածքն Ազգային խորհրդի անբեկանելի վճիռն էր: Ազգային խորհրդի որոշումը՝ թշնամուն Սարդարապատում և Բաշ-Ապարանում ճակատամարտ տալու մասին, հանձնվեց զորահրամանատարությանն ի կատար ածելու:

Վերջ տրվեց նաև ազգաբնակչության շրջանում տիրող խուճապին: Այդ առումով հիշատակելի է հատկապես մայիսի 21-ը: Այդ օրը երեկոյան Երևանի քաղաքային ժողովարանի ամառային շենքի հրապարակում (Սկետինգրինգում) կայացած հանրահավաքում, որում սկզբնապես տիրում էր հուսահատության և անորոշության մթնոլորտ, Արամը հանդես եկավ հակիրճ, բայց զանգվածի զգայուն թելերին դիպչող ելույթով: Նա նշեց. «Կրկնութիւններ անելու այժմ տրամադիր չեմ և ժամանակ էլ չկայ ճառերով զբաղուելու: Ես եկել եմ յայտնելու ձեզ, որ թշնամին գրաւել է Սարդարաբադը և շարժւում է դէպի էջմիածին: Մեզ մնում է մի բան, կամ զէնք վերցնել ու դուրս գալ թշնամու առաջ և կամ կոտորուել ոչխարի պես... Ով ուզում է ապրել, առանց որպէ կորցնելու, թող վերցնի զէնքը, վերցնի նաև երեք օրւայ պաշար ու իսկոյն և եթ դիմէ ուսուցչական սեմինարիայի շէնքը՝ ցուցակագրուելու և այնտեղից էլ ճակատ ուղարկուելու համար: Ես իմ ասելիքս վերջացրի, այժմ ձեզ է մնում անելիքը»[174]: Ժողովուրդը համակվեց ոգևորությամբ և մարտական տրամադրությամբ: Սարդարապատի հերոսամարտի մասնակից Մ. Մանասիր-

---

[172] «Ճակատամարտ», 1921, հունվարի 30, N 670 . 249:
[173] Ահարոնյան Ա., Ավարայրի ոգեկոչումը, Անդրանիկ, Երևան, 1991, էջ 9:
[174] «Հորիզոն», 1918, սեպտեմբերի 6, N 178:

յանն այդ հավաքի կապակցությամբ 1968թ. վերհիշել է, որ Արամը, գրող Դ. Դեմիրճյանը և այլոք ոգեշնչում էին ժողովրդին և կոչ անում անկախ տարիքային ու սոցիալական խտրության, քաղաքական համոզմունքների զենք ստանալ ու մեկնել ճակատ, իսկ վերջինս՝ արձագանքելով իրեն ուղղված հորդորներին, բացականչում էր, թե ավելի լավ է ճակատում զոհվել, քան սեփական օջախներում մորթոտվել[175]:

Հայրենիքի համար այդ ծանր պահին անգամ կային ուժեր, որոնք ըմբոստանում էին իշխանությունների դեմ: Սարդարապատի մոտ հայկական զորքի թեթևակի նահանջից հետո մայիսի 21-ին, Երևանում ծագել էր խռովություն, որի մասնակիցների անթաքույց ձգտումն էր հաշվեհարդարի ենթարկել Արամին և հանձնվել թշնամուն[176]: Ծայրաստիճան վտանգավոր դրությունը հարթվեց Արամի վճռականության շնորհիվ: Ազգային խորհրդում նա նշեց. «Այս միջոցին, երբ Սարդարաբադի մէջ հայոց համար կեանքի եւ մահուան հարց է դրուած, ուր հայ արիւնը հոսում է, անթոյլատրելի է, որ մի դասալիք խայտառակութիւններ անի: Ես սպառնալիքից չեմ վախենում: Բայց երբ հայ ժողովրդի ճակատագրի մասին է հարցը, ես պահանջում եմ ամենախիստ պատիժը»[177]: Նրա հրամանով խռովարարների պարագլուխները գնդակահարվեցին, որից հետո ամբոխը հնազանդվեց իշխանություններին, իսկ դասալիքներն ուղարկվեցին ռազմաճակատ:

Այդ օրերին Երևանում տիրում էր նախադեպը չունեցող աշխատանքային մթնոլորտ: Աշխատանքի էին լծվել ամենքը. «Խրամատներ կը փորէին և՛ շրջանային դատարանի նախագահը, և՛ դպրոցական երեխան, և՛ երիտասարդ գեղեցկուհի Երեւանցին, և՛ 60 տարեկան Վանուհին...»[178]: Ոչինչ չէր խնայվում ռազմաճակատում գտնվող բանակի համար: Բոլորը դարձել էին մի սիրտ, մի հոգի: Ժամանակակիցների վկայությամբ Արամը ոգի էր ու եռանդ: Ա. Աստվածատրյանը նկատում է, որ Արամը «շարունակ

---

[175] ՀՀ ՊՊԹ, Նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, Մանասիրյան Մ., Հիշողություններ Սարդարապատի հերոսամարտից, բ. մ. 960, մ. մ. 12441, թ. 6:
[176] Շահխաթունի Ա., Սարդարապատի հերոսամարտը եւ մահափորձը Արամ փաշայի դէմ (Իմ յուշերից), «Հայրենիք», 1959, օգոստոս, N 8, էջ 27-30:
[177] Շահխաթունի Ա., ...մահափորձը Արամ փաշայի դէմ, «Հայրենիք», 1959, օգոստոս, N 8, էջ 28; «Արամը», էջ 519:
[178] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, էջ 63:

ոտքի վրայ էր: Հանգիստն ինչ է՝ մոռացել էր: Ռազմաճակատը նրա մտահոգության միակ առարկան էր... Անընդհատ յարաբերութեան մէջ էր գլխաւոր շտաբի հետ, որ նստած էր Վաղարշապատում: Արամը իր շնչով վարակում էր ամէնքին: Ո՛չ ոք չէր խնայում հնարաւորը»[179]:

Մեկ այլ ժամանակակցի բնորոշմամբ՝ Արամը «կը մղէր, ընթացք կուտար, թէ քաղաքի ներքին ինքնապաշտպանութեան, թէ՝ ճակատներ կամաւորներու առաքման, մէկ խօսքով, բոլոր կենսական հարցերն ու խնդիրները նրա դատողութեան և կամքի բովէն կանցնէին: Ֆիզիքապէս, անոր ներկայութեան մէջ, կը տեսնուէր յոյսի և անակնկալ յաղթանակներու արշալոյսը»[180]:

Արամի ու նրա գործակիցների եռանդուն և, որ չափազանց կարևոր էր, հետևողական քայլերը տվեցին ցանկալի արդյունք. մարտական ոգին, գիտակցական կարգապահությունը ձևավորված էր: Ոգևորությամբ համակված ժողովրդական զանգվածները թե՛ Երևանից և թե՛ գավառներից, կամավորական խմբեր կազմած, մեկնում էին ռազմաճակատ: Ջեռնարկված արդյունավետ քայլերի առթիվ զորավար Սիլիկյանն իր գոհունակությունը և, միաժամանակ, հարձակման անցնելու մտադրությունը հայտնեց Արամին: Թշնամուն վճռական հակահարված հասցնելը դժվարին գործ էր: Տարբեր տվյալներով 5500-7000 զինվորներ ունեցող հայկական զորքը Սարդարապատում պետք է հաղթահարեր 6000-9000 կանոնավոր զինվորներ և 1500-3000 քուրդ հեծյալներ հաշվվող և լավ սպառազինված հակառակորդի դիմակայությունը[181]: Թուրքերն ունեին ռազմամթերքի պաշարներ, օգնական ուժեր ստանալու հնարավորություններ, գումարած թաթարների աջակցությունը: Հայկական զորքը զուրկ էր օգնության որևէ հույսից:

1918 թ. մայիսի 22-29-ին, զորավար Սիլիկյանի և փոխգնդապետ Ա. Վեքիլյանի մշակած պլանի համաձայն, հայկական զորքը գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանի անմիջական հրամանատարությամբ Սարդարապատի ճակատում հակահարձակման անցավ թուրքական գերակշիռ ու-

---

[179] «Արամը», էջ 129-130:
[180] Կոսոյեան Հ., նշվ. հոդվածը, «Դրօշակ», 1928, մայիս, N 5, էջ 138:
[181] Աֆանասյան Ս., նշվ. աշխ., էջ 37-38; Փափազեան Վ., Սարդարապատի հերոսամարտը, Դրօշակ, Աթենք, 1988, 25 մայիս-8 հունիս, N 3-4, էջ 51; Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 144:

ժերի դեմ և ծանր մարտերից հետո թշնամուց ազատագրեց Արարատյան դաշտավայրի և հարակից շրջանների տասնյակ բնակավայրեր[182]: Ջախջախված թուրքերը (նրանց միայն զոհերի թիվը հասնում էր 3.500-ի) նահանջեցին Ալեքսանդրապոլի ուղղությամբ[183]:

Սարդարապատի հաղթանակից ոգևորված Բաշ-Ապարանի ճակատում գործող Դրոյի զորամասերը մայիսի 28-ին անցան հակահարձակման և թեժ մարտերի ընթացքում ջարդելով թուրքերին ազատագրեցին Ալի-Քուչակն ու Բաշ-Ապարանը: Մայիսի 29-ին թուրքերը հեռացան Համամլուից:

Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հաղթություններն աննախադեպ ոգևորություն առաջացրին և՛ թիկունքում, և՛ ռազմաճակատում: Այն իր արտահայտությունն է գտել մայիսի 29-ին զորավար Սիլիկյանին ուղարկված Արամի հեռագրում: Ոգևորված Արամը նշում էր. «Ո՛րախ եմ Ձեզ հաղորդել, որ Ձեզ վստահված բանակի տարած հաղթանակը Սարդարապատի մոտ առողջարար ներգործություն ունեցավ մեր ժողովրդի վրա: Ոտքի վրա է ոչ միայն Երևանի նահանգը, այլև Ղազախն ու Դիլիջանը...: Բոլորը զենքերը ձեռքերին շտապում են Ղարաքիլիսա...»[184]: Այս հեռագիրը փաստում է, որ Արամը գիտեր նաև գնահատել ու մեծարել արժանավոր մարդկանց:

Տիրող հոգեվիճակի լավագույն արտահայտությունն էր այն հանգամանքը, որ զորավար Սիլիկյանը մայիսի 29-ին պատրաստվում էր ազատագրել Ալեքսանդրապոլը: Մայիսյան հերոսամարտերի բաղկացուցիչն էր նաև Ղարաքիլիսայի ճակատամարտը: Մայիսի 24-28-ը զորավար Նազարբեկյանի ընդհանուր հրամանատարության ներքո գործող մոտ 7000-ոց հայկական բանակային և աշխարհազորային ջոկատները ծանր հարված հասցրին թուրքական 10000-ոց բանակին՝ նրանց վրա գործելով մեծ ու զսպիչ ազդեցություն[185]:

---

[182] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5; գ. 82, թ. 5; գ. 82, թ. 16-17; Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը..., էջ 95-96:
[183] Հ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 19:
[184] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Պատ. խմբագիրներ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000, էջ 34:
[185] Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918), Երևան, 1964, էջ 450:

Նշված ժամանակաշրջանում իրենց տրամաբանական վախճանին հասան նաև տարածաշրջանում զարգացող քաղաքական անցքերը: 1918թ. մայիսի 26-ին Բաքումում թուրքական կողմը նոր վերջնագիր ներկայացրեց անդրկովկասյան պատվիրակությանը: Նրանով, ի հավելումն մայիսի 11-ի վերջնագրի, թուրքերը պահանջում էին լրացուցիչ տարածքներ ի հաշիվ Երևանի նահանգի, ինչպես նաև Անդրկովկասի երկաթուղիների տրամադրումը իրենց զորքերին: Վերջնագիրն ավելի սրեց հայերի, վրացիների և թաթարների ներկայացուցիչների միջև առկա հակասությունները: Այդ առիթով Ե. Սարգսյանը նկատել է. «Մուսավաթականները գտնում էին, որ պետք է այն անհապաղ ընդունել, դաշնակները լրիվ մերժում էին թուրքական պահանջները, իսկ վրացական մենշևիկները ձգտում էին Թուրքիայի հետ իրենց ձեռնտու հաշտության պայմանների հասնել հայկական տերիտորիաների հաշվին»[186]:

Գերմանական հովանավորությունն ապահոված վրաց գործիչների և կովկասյան թաթարների ներկայացուցիչների ջանքերով մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմը լուծարվեց: Անդրկովկասյան հանրապետությունը դադարեց գոյություն ունենալ: Նույն օրը վրաց քաղաքական գործիչները, որոնք պահը հարմար էին նկատել զատվելու խեղդվող հայերից[187], հռչակեցին Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը կովկասյան թաթարների ներկայացուցիչները հայտարարեցին իրենց պետության ստեղծման մասին՝ նրան տալով Ադրբեջան անունը:

Մայիսյան ճակատագրական օրերին քաղաքական ճանապարհով հայ ժողովրդի փրկությանը ձգտող Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը կանգնած էր երկընտրանքի առջև՝ կամ մերժել թուրքական վերջնագիրը և արդեն պաշտոնապես միայնակ շարունակել անհավասար պատերազմը, կամ էլ՝ ընդունել ծանր պայմաններ պարտադրող թուրքական վերջնագիրը և կնքել հաշտություն, ինչը ենթադրում էր նաև հռչակել Հայաստանի անկախությունը: Կար մի էական հանգամանք ևս. անկա-

---

[186] Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը..., էջ 374:
[187] Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 82:

խություն չհռչակելու դեպքում Արևելյան Հայաստանի տարածքը կարող էր բաժանվել Վրաստանի և Ադրբեջանի միջև: Այդ ժամանակվանից նրանց որդեգրած ռազմաքաղաքական ուղեգիծը միանշանակորեն վկայում է, որ նրանք առանց երկմտելու փորձելու էին Հայաստանի պատմական տարածքները բաժանել իրար միջև:

Ի վերջո, երկար քննարկումներից հետո Հայոց Կ. Ազգային խորհուրդը մայիսի 28-ին որոշեց հաշտարար պատվիրակություն ուղարկել Բաքում, որը պետք է անկախ Հայաստանի անունից հաշտություն կնքեր Թուրքիայի հետ[188]: Իսկ Հայաստանի անկախությունը, ավելի ճիշտ՝ հայկական գավառների նկատմամբ Հայոց Կ. Ազգային խորհրդի գերագույն և միակ իշխանությունը հռչակվեց մայիսի 30-ին: Ահա այն. «Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ազրբէյջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ, Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է Հայկական գաւառների Գերագոյն ու Միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերը՝ կազմել Հայոց Ազգային Կառավարութիւն, Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար»[189]:

1918թ. հունիսի 4-ին Բաքումում Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Այն անչափ ծանր էր հայ ժողովրդի համար, նրան թողնվում էր ընդամենը 11 հազար քառ. կմ տարածք և մի քանի կմ երկաթուղագիծ: Այդուհանդերձ, իրականանում էր անկախ պետականության վերականգնման հայոց բազմադարյան ձգտումը, որն ինքնին մեծ նվաճում էր դարավոր թշնամու դեմ երկարատև պայքար մղող հայության համար:

Բաքումում թուրքական վերջնագիրն ընդունելուց հետո Ա. Ահարոնյանը Երևանի Հայոց Ազգային խորհրդին հաղորդում էր. «... թեև փոքրիկ և աղքատ բայց Ազատ Հայաստանի համար մենք պարտական ենք մեր զորքերի անձնազոհությանը: Որքան մեզ հայտնի է, գեր-

---

[188] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, էջ 245-258:
[189] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Դեպքեր: Դէմքեր: Ապրումներ, հ. Դ, Պէյրութ, 1965, էջ 120:

մանացիները և թուրքերը Կովկասը բաժանում էին Վրաստանի և Ադրբեջանի, հայերին ապահովելով միայն ֆիզիկական գոյություն: Պետք է ենթադրել, որ մեր զորքի դիմադրությունը նրանց հարկադրեց ճանաչել և Հայաստանը»[190]: Հայոց դիմադրությանն ականատես Վեհիբը հաստատում էր այն փաստը, որ հայ ժողովրդի դիմադրությունը հարկադրեց իրենց հաշվի նստել նրա հետ: Մատնանշելով հայոց հուժկու կռիվները, նա Բաքումում Խալիլ բեյին հորդորում էր արագացնել հաշտության կնքումը հայերի հետ[191]:

Այսպիսով, մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպմանը Արամ Մանուկյանն ունեցավ առաջնակարգ ղեկավար մասնակցություն, բացառիկ նշանակություն ունեցան հայության համար: Փրկելով հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից, բարձրացնելով նրա բարոյական ու մարտական կորովը, հերթական անգամ հաստատելով, որ միասնական պայքարի դեպքում անկարելի է ընկճել նրան, հերոսամարտերը հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը:

Մինչև մայիսյան հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի[192]:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման, ապա նաև նրա հիմքերի ամրապնդման գործում ունեցած առաջնակարգ և վիթխարի ներդրման համար Արամ Մանուկյանն արժանացավ Հանրապետության հիմնադրի պատվանվանը:

Արամի գործունեությանը բարձր գնահատական են տվել արդեն նրա ժամանակակիցները, իսկ ավելի ուշ՝ նաև պատմագրության ներկայացուցիչները:

Գնդապետ Արարատյանը, տալով 1918թ. սկզբից Երևանի նահանգում կատարված ռազմաքաղաքական իրադարձությունների, այդ թվում՝ Երևանյան զորամասի կազմավորման, մայիսյան հերոսամարտերի

---

[190] Հ ԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 10; գ. 11, թ. 5; «Զանգ», 1918, հունիսի 11, N 41:

[191] Աւետեան Մ., Յուշամատեան եւ զօր Անդրանիկ (Հայ ազատագրական ազգային յիսնամեայ. 1870-1920), Փարիզ, 1954, էջ 193:

[192] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний В. Микаелян, Ереван, 1995, с. 508:

նկարագիրը, 1919թ. փետրվարին գրել է. «Երևանի շրջանում այն ժամանակ ամբողջ իշխանությունը հաստատուն կերպով գտնվում էր Արամի ձեռքում, որը լիակատար համերաշխությամբ գործում էր գեներալ Սիլիկովի և, զորքին ու ժողովրդին ոգևորող, Դրոյի հետ: Երևանի շրջանի ռազմական հզորության, տնտեսական և մնացյալ կարգի կազմակերպման Արամի փայլուն ընդունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքներին պահպանել փոքրիկ հողակտորը, միակ քաղաք Երևանը և Սուրբ էջմիածնի եկեղեցին և, եթե հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ և հաշվի են նստում այժմ, ապա դա կարող եմ վերագրել բացառապես երեք անձանց Արամին, գեներալ Սիլիկովին և Դրոյին»[193]:

Սիմոն Վրացյանը մայիսյան հերոսամարտերից տասնամյակներ անց նկատել է. «Յիշենք միշտ, որ եթէ այսօր Հայաստանը Հայաստան է իր ազգագրական կազմով եւ ազգային պետական կառոյցով, հայութիւնը այդ բանի համար երախտագէտ պէտք է լինի առաւելապէս Արամին եւ Դրոյին եւ, ի հարկէ, Արարատեան Աշխարհի հայ ժողովրդին ու գործիչներին»[194]:

Արամին մեծարել կամ ուղղակիորեն անկախ Հայաստանի հիմնադիր են անվանել Ն. Աղբալյանը՝ ՀՅ Դաշնակցության Արևելյան բյուրոյի անունից նրան ձոնած դամբանականում, Ա. Շահխաթունին, Օ. Մխիթարյանը, Գ. Լազյանը, Ս. Վրացյանը, հայրենական և սփյուռքի պատմաբաններ Հր. Սիմոնյանը, Գ. Գալոյանը, Ա. Հակոբյանը, Ա. Մելքոնյանը, Ռ. Հովհաննիսյանը, Անահիտ Տեր-Մինասյանը և շատ ուրիշներ[195]:

---

[193] Հ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 6; Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, էջ 224:

[194] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով: հ. Դ, էջ 182:

[195] «Աշխատանք»ի բացառիկ, 1919, փետրվարի 12; «Ճակատամարտ», 1921, հունվարի 30; «Հայրենիք», 1923, հունիս, N 8; էջ 38, 42; Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 184; Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր (Մտաւորականներ եւ հայդուկներ), Գահիրէ, 1945, էջ 201; Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, Երևան, 1996, էջ 127; Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 26-27, 36; Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն (1918-1920թթ.), Երևան, 1992, էջ 6; Մելքոնյան Ա., Հայոց պատմություն: Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998, էջ 197: Hovannisian R., The Republic of Armenia, vol. I, The First Year, 1918-1919, Berkeley-Los Angeles-London, 1974, p. 147; Ter Minassian A., La Republique d'Armenie (1918-1920), p. 74:

Խորհրդահայ պատմագրությունը խորհրդային վարչակարգի հարուցած քաղաքական-գաղափարական պարտադրանքի պայմաններում չկարողացավ ի հարկին գնահատել Արամի դերը հերոսամարտերում, բայց և զերծ մնաց նրան փնովելուց[196]: Ավելին, որոշ ներկայացուցիչներ, օրինակ Սարդարապատի հերոսամարտին առաջին հատուկ ուսումնասիրությունը նվիրած Հ. Թուրշյանի մոտ ակնհայտ էր Արամին դրական ներկայացնելու, նրա վճռական դերակատարումը գոնե քողարկված ձևով ընդունելու ձգտումը: Կարծում ենք այն ժամանակ տիրող պայմաններում հրապարակայնորեն ավելին ասել հնարավոր չէր: Դա է փաստում Հ. Թուրշյանի կողմից Սարդարապատում Արամի ունեցած դերին տրված միանշանակ բարձր գնահատականը 1964թ. գրած իր անտիպ հոդվածում, որը եզրափակվում է հետևյալ խոսքերով. «Արամ Մանուկյանը հայ ժողովրդի բովանդակ պատմության այն սակավաթիվ իրատես դեմքերից մեկն է, որոնց մեծությունը ճիշտ տեսնելու և ճիշտ գնահատելու համար հարկավոր է ժամանակի հեռավորություն: Քանի գոյատևի և հարատևի մեր ժողովուրդը, նա այնքան ավելի հստակորեն կտեսնի ու այնքան ավելի բարձր կգնահատի Սարդարապատի հերոսամարտը, որտեղ մենք, վերջապես, բռնեցինք անկախության իրավունքի քննությունը, և այդ հերոսամարտի հաղթանակի ապահովման հետ սերտորեն միաձուլված Արամ Մանուկյանին»[197]:

Հայոց նորանկախ պետությունը գտնվում էր չափազանց ծանր կացության մեջ: Բարեբեր տարածքներից զրկված փոքրիկ երկիրը շրջապատված էր թշնամական օղակով, զուրկ էր արտաքին աշխարհի հետ կանոնավոր հաղորդակցության ճանապարհներից, իր ներսում ուներ մոտ 400 հազար անօթևան և ապրուստի տարրական միջոցներից զուրկ

---

[196] Թուրշյան Հ., նշվ. աշխ.; Արզումանյան Ս., նշվ. աշխ.; Աղայան Ծ.Պ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982; Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, և այլն:

[197] Թուրշյան Հ., Հուշեր նվիրված Վանի 1915թ. ինքնապաշտպանության հերոս Արամ Մանուկյանին, ՀՀ ՊՊԹ Նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, բ.մ. 941,մ.մ. 11844, թ. 39:

հայ փախստականներ: Զգացվում էր բնակարանների, պարենամթերքի և դեղորայքի սուր պակաս, գլուխ էին բարձրացնում համաճարակային հիվանդությունները՝ օրական խլելով տասնյակ կյանքեր և այլն:

Որքան էլ որ երկրի դրությունը ծանր էր, Արամը երբեք չհուսահատվեց: Քաղաքից հեռանալու մասին իրեն ուղղված առաջարկություններին նա պատասխանում էր, որ ոչ թե քաղաքից հեռանալու մասին պետք է մտածել, այլ այն փրկելու[198]: Իսկ ստեղծված ծանրագույն իրավիճակը թելադրում էր անհապաղ ստեղծել Հայաստանի պետական իշխանություն և տեր կանգնել երկրի ու ժողովրդի ճակատագրին:

Մինչ Հայոց Կենտրոնական Ազգային խորհուրդը և նրա հանձնարարությամբ Հովհաննես Քաջազնունու կողմից ձևավորվող ՀՀ անդրանիկ կառավարությունը կտեղափոխվեին Երևան՝ Արամ Մանուկյանի նախաձեռնությամբ 1918թ. հունիսի կեսերին ստեղծվեց անկախ Հայաստանի նախակառավարության դեր կատարող Երևանի Ազգային խորհրդի Վարչությունը: Այն պետք է կառավարեր երկիրը մինչև ՀՀ անդրանիկ կառավարության Երևան ժամանելը[199]: Նրան պետք է ենթարկվեին երկրի պետական և հասարակական բոլոր հիմնարկությունները:

Երևանի Հայոց Ազգային խորհրդի Վարչության նախագահը և զինվորական բաժնի վարիչը Արամ Մանուկյանն էր[200]: Հայաստանի Առաջին Հանրապետության պետական գործիչներից Ա. Բաբալյանը նկատել է. «Արամն էր, որ փաստօրէն կառավարում էր երկիրը: Իբրեւ լիազօր Ազգային Խորհրդի, նա կազմակերպել էր վարչութիւնները եւ սպասում էր նորընտիր կառավարութեան եւ Ազգային Խորհրդի Երեւան տեղափոխուելուն»[201]:

Վարչության ձևավորման ընթացքում մեկ անգամ ևս ընդգծվեց Արամի ուրույն դերն այդ բախտորոշ ժամանակաշրջանում: Ստանձնելով Վարչության նախագահի պաշտոնը Արամը սկզբնապես հրաժարվեց իրեն

---

[198] Աստուածատրեան Ա., Արամ, «Հայրենիք», 1964, օգոստոս, N 8, էջ 35:
[199] «Լրատու» Երևանի Հայոց Ազգային խորհրդի, 1918, հուլիսի 9, N 2; հուլիսի 23, N 6:
[200] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը..., էջ 211:
[201] Բաբալեան Ա., էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 8:

առաջարկվող զինվորական վարիչի պաշտոնից հօգուտ զինվորական գործչի՝ դա պատճառաբանելով մի կողմից զբաղվածությամբ, մյուս կողմից՝ զինվորականության զգացմունքներին չդիպչելու և դժգոհությունների տեղիք չտալու ցանկությամբ: Նրա առաջարկությունը մերժվեց, իսկ կանխատեսումն արդարացավ: Այդ իսկ պատճառով Արամն առաջարկեց այդ պաշտոնը հանձնել զոր. Սիլիկյանին: Վերջինս այդ կապակցությամբ տվեց հետևյալ պատասխանը. «Դժգոհները չեն ճանաչում Արամին: Երբ ճանաչեն կը համոզուեն, որ ներկայումս նա միակ կարող մարդն է այդ պաշտօնի համար: Ես ինչու՞ եմ հրաժարուում. որովհետեւ մէկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու: Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու ոչ մի կարեւոր քայլ չեմ անում, իսկ վարիչի պաշտօնը յանձն առնելու պարագային, գրասենեակս տեղափոխելու եմ նրա մօտ: Ո՛չ մի զինուորական վերարկու ոչ ոքի չի տայ այն, ինչ որ ունի Արամը: Նրանից յարմար վարիչ մեզ համար չէք գտնի»[202]: Այս խոսքերն անչափ կարևոր են, որովհետև պատկանում են մի ջերմ հայրենասերի, որի գլխավորությամբ մշակվեց և իրականացվեց Սարդարապատի հաղթական օպերացիան:

Վարչությունն ուներ զինվորական, ներքին գործերի, պարենավորման, ֆինանսների և այլ բաժիններ: Նրանց ձևավորման ժամանակ հերթական անգամ Արամը դրսևորեց անխտրական, ապակուսակցական մոտեցում: Լինելով ՀՅ դաշնակցության ղեկավար գործիչներից՝ նա գործի մեջ ներգրավեց բոլոր կարող ուժերին՝ անկախ կուսակցական պատկանելությունից:

Արամը հաջողությամբ և յուրահատուկ ձևով, առանց ընդունված օրենքների մեխանիկական կիրառման, մղում տվեց Երևանի Վարչության աշխատանքներին: Նրա գլխավորությամբ Երևանի Վարչությունը ձեռնամուխ եղավ ռազմական, վարչական, սոցիալ-տնտեսական և այլ հրատապ խնդիրների լուծմանը:

Բնականաբար, Վարչության և անձամբ Արամի գլխավոր մտահոգությունը երկիրը թուրքական ոտնձգություններից պաշտպանելն էր: Երևանում քաջ գիտակցում էին, որ քաղաքից յոթ կմ հեռու կանգնած

---

[202] Աստուածատրեան Ա., Արամ, «Հայրենիք», 1964, հուլիս, N 7, էջ 74; «Արամը», էջ 125:

թուրքերը ցանկացած պահի կարող էին խախտել Բաթումի պայմանագիրը և անցնել հարձակման: Հունիսի 3-ին Ազգային խորհուրդը հայությանը կոչ էր անում ամուր պահել ռազմաճակատը՝ ընդգծելով, որ վերջնական հաշտությունը կախված է հայոց ռազմական ուժից, թիկունքի և ճակատի անձնազոհությունից[203]: Հունիսի 5ին Երևանի Հայոց Ազգային խորհուրդը վճռեց «ձեռնարկել ժողովրդի ռազմական ուժերի կազմակերպման ապագա անակնկալների դեմ...»[204]: Հուլիսի սկզբներին Ազգային խորհուրդը 19-32 տարեկան տղամարդկանց հրահանգում էր մտնել զորքի շարքերը, առավել տարիքավորներին՝ կազմել կամավորական խմբեր ու ներկայանալ հրամանատարությանը, իսկ նրանց ովքեր անկարող էին կռվել՝ հրահանգում էր իրենց զենք-զինամթերքը և զինվորական հանդերձանքը հանձնել զինվորական իշխանությանը:

Ռազմական գործի կազմակերպմանն Արամն ունեցավ այնքան կարևոր մասնակցություն, որ տասնամյակներ անց Ռուբեն Տեր-Մինասյանը, տալով ՀՀ զինվորական նախարարության (1918-1920) գործունեության համեմատական նկարագիրը և այդ համապատկերում անդրադառնալով Արամի զինվորական ձեռնարկներին, նկատել է, որ նրա կողմից «կիրառուած ժողովրդական-զինուորական ձեւերի շնորհիւ, առանց նիւթական եւ դրամական միջոցների, մի պատկառելի զինուորական ոյժ էր կազմակերպուած թուրքերի դիմաց, որից կ՝ակնածէին նոքա»[205]:

Ռազմական պատրաստություններին զուգընթաց Երևանի Հայոց Ազգային խորհուրդը, նրա Վարչությունը և անձամբ Արամը բանակցություններ էին վարում թուրքերի հետ՝ փորձելով հասնել նրանց կողմից Բաթումում ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև Անդրկովկասյան մյուս հանրապետությունների հետ Հայաստանի սահմանների ճշգրտմանը: Ա. Մանուկյանը գեներալ Նազարբեկյանի և գնդապետ Բաղդասարյանի հետ հունիսի 12-ին Դիլիջանում արտահայտվեց այն բանի օգտին, որ

---

[203] Հ ԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 4, թ. 14:
[204] «Զանգ», 1918, հունիսի 7, N 40:
[205] Ռուբէն, հ. 7, էջ 330-331:

հայկական ուժերը հետ քաշվեն Բաթումի պայմանագրով գծված նոր սահմանագիծ, իսկ թուրքերն իրենց ուժերը հետ քաշեն Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ուղղություններում[206]: Հունիսի 17-ին Վեհիբ փաշան զոր. Նազարբեկյանին առաջարկեց մինչև հայ-վրացական սահմանի որոշումը թուրքական զորքերը թողնել Ալեքսանդրապոլ-Սադախլու երկաթգծի ուղղությամբ: Արամը դեմ արտահայտվեց այդ մտքին՝ գտնելով, որ թուրքերին հարկավոր է հեռացնել Ղարաքիլիսայի գծից և Վրաստանի հետ սահմանը պահպանել հայկական զորքերով[207]: Թշնամու ճնշման տակ հայկական զորամասերը նահանջեցին նոր սահմանագիծ, իսկ թուրքական զորքերի հեռացման հարցը մնաց առկախ մինչև 1918թ. աշուն, երբ Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան պարտադրված իր ուժերը հեռացրեց Կովկասից:

Երևանի Վարչության առջև ծառացած դժվարին խնդիրներից մյուսը պարենային ճգնաժամի մեղմումն էր: Այդ նպատակով Ազգային խորհուրդը 1918թ. հուլիսի 9-ին երկրում սահմանեց հացի պետական մոնոպոլիա՝ հսկողության տակ վերցնելով հացահատիկի բերքը: Հրապարակված հրահանգ-օրենքը հստակորեն սահմանում էր հացահատիկի հավաքման, հսկողության կարգը, պետականացված բերքի գինը և այլ հանգամանքներ: Օրենքը խախտող անձինք և գյուղերը ենթակա էին խստագույն պատժի[208]: Գյուղացիների դժգոհությունը մեղմելու նպատակով նրանց էր թողնվում իրենց ընտանիքներին հարկավոր չափաբաժինը, իսկ մնացածը համապատասխան գնով, որից չպետք է տուժեին ո՛չ գյուղացին և ո՛չ էլ քաղաքացին, վերցնում էր պետությունը՝ բնակչության մնացած մասին ու զորքին հատկացնելու համար[209]:

Իրականացվում էին քայլեր նորանկախ երկրի ճակատագրի և իրենց զբաղեցրած դիրքի նկատմամբ պաշտոնյաների պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ: Մասնավորապես, Ներքին գործերի բաժնի վարիչ Ս. Թորոսյանը Երևանի գավառի Ղամարլուի (Արտաշատ) տեղամասի կոմիսարին աշխատանքից ազատել էր այն

---

[206] Հ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 175, թ. 34:
[207] Նույն տեղում, գ. 98, թ. 25:
[208] «Լրատու» Երևանի Հայոց Ազգային Խորհրդի, 1918, հուլիսի 9, N 2; «Հորիզոն», 1918, օգոստոսի 21, N 165:
[209] «Լրատու» Երևանի Հայոց Ազգային Խորհրդի, 1918, հուլիսի 12, N 3:

բանի համար, որ նա 1918թ. հունիսին Ղամարլուի շրջանի էվակուացիայի ժամանակ առաջինն էր լքել շրջանը, որի պատճառով գրասենյակը կողոպտվել էր[210]:

Ընդունելով լրատվության կարևորությունն այդ բարդ և խառնակ ժամանակաշրջանում Վարչությունը հունիսի 23-ին որոշեց հիմնել սեփական թերթ, որը ստացավ «Երևանի Ազգային խորհրդի լրատու» անունը[211]: Արագ և ստույգ լրատվություն ապահովելու նպատակով Արամը պետական մարմինների ղեկավարներին խնդրում էր հրապարակման ենթակա տեղեկություններն ամեն օր ուղարկել թերթին: Ավելին, մամուլի գործունեությունը ինքնահոսի չմատնելու նպատակով նույն օրը ստեղծվեց պատերազմական ժամանակի մամուլի վերաբերյալ հրահանգ մշակող չորս հոգանոց հանձնաժողով: Մշակվելիք հրահանգը պետք է ներկայացվեր Երևանի Ազգային խորհրդի հաստատմանը[212]:

Արամի կառավարությունը որոշակի հսկողություն սահմանեց հրապարակային ելույթների վրա, անշուշտ, ելնելով այն հայեցակետից, որ երկրում իրականացվելիք ծեռնարկների հաջողությունն ամենից առաջ պայմանավորված էր հասարակական կայունությամբ: Ոմանք, անտեսելով այն հանգամանքը, որ այդ քայլը թելադրված էր երկրի ճգնաժամային իրավիճակով, իշխանություններին մեղադրում էին խոսքի ազատությունը սահմանափակելու մեջ: Սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանը Երևանի և Թիֆլիսի Ազգային խորհուրդներին գանգատվում էր, որ ինքը ցանկացել է դասախոսություն կարդալ, սակայն տպարանները մերժել են առանց միլիցիայի պետի թույլտվության տպել ազդագրերը և ավելացնում, որ «դա խոսքի ազատութեան բռնադատումն է, որը պէտք է այսօր և եթ վերացւի»: Իրավիճակին խորամուխ Արամն այդ առիթով նշում էր, որ «իւրաքանչիւր դասախօս պարտաւոր է յայտնել միլիցիապետին թէ որտեղ, որ ժամին և ինչի մասին պիտի խօսի»[213]: Կարծում ենք նրա կեցվածքը տվյալ պահին արդարացված էր, քանզի ավելորդ ժողովրդավարությունը կարող էր վնասել երկրի կայունացմանը:

---

[210] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 1, թ.1, 2:
[211] Նույն տեղում, ֆ. 206, ց. 1, գ. 7, թ. 5:
[212] Նույն տեղում, գ. 6, թ. 9:
[213] «Լրատու» Երևանի Հայոց Ազգային Խորհրդի, 1918, հուլիսի 23, N 6:

Արդյունավետ քայլեր կատարվեցին երկրի վարչական ապարատն ամրապնդելու, պետական հաստատությունների գործունեությունը կանոնավորելու, տնտեսությունը հսկողության տակ պահելու և ֆինանսական սուղ միջոցները լրացնելու ուղղություններով և այլն:

Հայրենանվեր աշխատանքի շնորհիվ՝ Արամի գլխավորությամբ, Երևանի կառավարությունը ապահովեց հանրապետության կյանքի տարբեր ոլորտների կենսագործունեությունը, նրա համեմատական կայունությունը և, միաժամանակ, որոշակի հիմքեր ստեղծեց պետական շինարարության համար, որին ձեռնամուխ էր լինելու Երևան ժամանող ՀՀ առաջին կառավարությունը:

1918թ. հուլիսի 19-ին Երևանի Վարչության նախագահ Ա. Մանուկյանը և իշխանության մյուս գործիչները հանդիսավորությամբ դիմավորեցին հայրենիք ժամանող Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային խորհրդին և Հ. Քաջազնունու գլխավորած ՀՀ առաջին կառավարության անդամներին: Հուլիսի 20-ին Երևանի և Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդների համատեղ նիստում Ա. Մանուկյանը հայտնեց իշխանությունը ՀՀ «օրինաւոր կառավարությանը» հանձնելու մասին և իր ու իր գործակիցների անունից պատրաստակամություն հայտնեց աջակցել նրան՝ «երկրում կարգ ու կանոն և տանելի կեանք ստեղծելու գործում»[214]: Այն փաստը, որ Ազգային խորհրդի գործունեության մասին զեկուցեց Արամը և ոչ թե նրա նախագահ Խորեն եպ. Մուրադբեկյանը[215], լրացուցիչ անգամ փաստում է, որ նա Ազգային խորհրդի և նրա մարմինների անվիճելի առաջնորդն էր, Երևանի փաստացի ղեկավարը:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Հուլիսի 20-ին և 22-ին Երևանում գումարված տեղի և Թիֆլիսի Ազգային խորհուրդների համատեղ նիստեր համատեղ նիստերում

---

[214] Նույն տեղում:
[215] Նույն տեղում: Ազգային խորհրդի նախագահի պաշտոնում Խորեն եպ. Մուրադբեկյանին նախորդել էր Մկրտիչ Մուսինյանը:

վերջնական տեսքի բերվեցին Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները:

1918թ հուլիսի 24-ին հրապարակվեց ՀՀ անդրանիկ կառավարության կազմը, որն ուներ հետևյալ պատկերը. վարչապետ՝ Հովհաննես Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեն. Հ. Հախվերդյան[216]: Կարճ ժամանակ անց արդարադատության նախարար նշանակվեց Երևանի գործիչներից Գ. Պետրոսյանը:

Կարծում ենք ավելի ճիշտ կլիներ, եթե Արամը նշանակվեր վարչապետ, քանզի նա վեց ամսից ավելի հանդիսանում էր Երևանի նահանգի փաստացի ղեկավարը, ուներ կազմակերպչական բացառիկ ձիրք, լայն ժողովրդականություն, երկաթյա կամք և ամբողջական պատկերացում երկրում տիրող իրադրության մասին: Հ. Թուրշյանն իրավացիորեն նկատել է, որ Արամը «իրերի բերումով, պատմության ընթացքով արդեն գտնվում էր այդ պոստում»[217]: Ա. Աստվածատրյանը, որը ողջունում էր 1917թ. դեկտեմբերին Արամ Մանուկյանի գործուղումը Երևան և նշում, որ այդ գործում Հ. Քաջազնունին չէր կարող համեմատվել նրա հետ, այժմ հայտնում էր, որ «վարչապետութեան համար այլ շնորհք էր հարկաւոր, որպիսի տեսակէտով Քաջազնունին Արամից բարձր էր»[218]: Վերջին միտքը, որին չեն հետևում հիմնավորումներ, համոզիչ չէ: Իսկ ինչու՞ Արամը չընտրվեց վարչապետ: Թերևս տրամաբանական է թվում հետևյալ պատճառը: Կարծում ենք, և դա մատնանշել են նաև ժամանակի որոշ գործիչներ, որ հարկավոր էր այդ պաշտոնում ընտրել մեկին, որը չէր հարուցի թուրքերի հատուկ վրդովմունքը: Իսկ Արամն այն գործիչն էր, որն իր ամբողջ գործունեությամբ մեծապես վնասել էր թուրքական պլանների կենսագործմանը թե՛ Արևմտյան Հայաստանում և թե՛ Արևելյան Հայաստանում:

---

[216] Հ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2: Արամը ՆԳ նախարարի պաշտոնը զբաղեցրեց նաև 1918թ. նոյեմբերի 4-ին ձևավորված ՀՀ երկրորդ կոալիցիոն կառավարության մեջ_տես Հ ԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 1, թ. 151; ֆ. 206, ց. 1, գ. 3, թ. 1:
[217] Թուրշյան Հ., նշվ. աշխ., էջ 230-231:
[218] Աստուածատրեան Ա., Սարդարապատի պատմաշինութիւնը, էջ 137:

Ինչևէ, 1918թ. հուլիսի 26-ին Արամը ստանձնեց ՆԳ նախարարի պաշտոնը[219]:

ՀՀ կառավարության մեջ Արամն ուներ բացառիկ դիրք: Դա հետևանք էր մի կողմից նրա կամային որակների, մյուս կողմից՝ այն հանգամանքի, որ նրա ենթակայության ներքո էին կենտրոնացվել նաև լուսավորության, հաղորդակցության, պարենավորման, խնամատարության, մեր օրերի լեզվով ասած՝ տարածքային կառավարման նախարարի լիազորությունները: Այս հանգամանքը մեզ հիմք է տալիս համաձայնվել Ռուբենի այն մտքին, թե «1918ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան Քաջազնունու դահլիճն էր կազմուած, փաստօրէն կառավարութիւնը մնում էր Արամը...»[220]:

Արամին ՆԳ նախարար նշանակելու առիթով Ս. Վրացյանը, միանգամայն իրավացիորեն, նկատել է, որ նա միակն էր, որ «այդ խառնակ օրերին ընդունակ էր կարգ ու անդորրութիւն պահել երկրում եւ պետական» շինարարություն սկսել[221]: Ավելին, Հայաստանի Հանրապետության երկրորդ՝ կոալիցիոն կառավարության ձևավորման ժամանակ ՀՅԴ-ն՝ մերժելով Արամին կառավարության մեջ չընդգրկելու ժողովրդականների պահանջը, հայտարարեց, որ միայն Արամ Մանուկյանը կարող է կարգ պահել երկրում[222]:

1918թ. օգոստոսի 1-ին աշխատանքը սկսեց Հայաստանի անդրանիկ օրենսդիր մարմինը՝ Խորհուրդը: Խորհրդի երկրորդ նիստում՝ օգոստոսի 3-ին, Հ. Քաջազնունին հրապարակեց կառավարության ծրագիրը, որը ներքին քաղաքականության ոլորտում նախատեսում էր. երկրում իրավակարգի, կյանքի և գույքի ապահովության հաստատում, հաղորդակցության ճանապարհների բացում, պարենային ծգնաժամի հաղթահարում, հոգածություն փախստականության ու գաղթականության նկատմամբ, ներքին ու արտաքին փոստ-հեռագրական կապի

---

[219] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 10, թ. 2:
[220] Ռուբէն, հ. 7, էջ 312:
[221] Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան, էջ 467:
[222] Բաբաջանյան Վ., Կուսակցությունները Հայաստանի առաջին Հանրապետության կոալիցիոն կառավարությունում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, N 2, էջ 180:

վերահաստատում, բանակի վերակազմավորում, տնտեսության վերականգնում և այլն:

Նկատենք, որ առաջին իսկ օրերին Հայաստանի Խորհուրդը պետական դրոշ ընդունեց եռագույնը (կարմիր, երկնագույն, նարնջագույն), որն Արամի սեպտեմբերի 13-ի հրահանգով պետք է բարձրացվեր պետական-կառավարական հիմնարկների վրա[223]:

Նոր պաշտոնում ու նոր պայմաններում Արամի ազգային-պետական մտածողությունն ու գործելակերպը նոր շունչ և որակական նոր դրսևորումներ ստացան: Նա միշտ հանդես եկավ նախաձեռնողի, իրադարձություններին ընթացք տվողի դերում, որպիսիք կարևորագույն գծեր են յուրաքանչյուր բարձրաստիճան պաշտոնյայի համար, հատկապես այն օրերի նման բախտորոշ ժամանակաշրջանում:

Արամը մեծագույն եռանդով մասնակցեց կառավարության հետապնդած ծրագրի իրականացմանը:

ՀՀ իշխանությունների, հատկապես ՆԳ նախարարության առաջնակարգ խնդիրներից մեկը երկրում կյանքի և գույքի ապահովության, իրավակարգի, ամուր իշխանության հաստատումն էր: Անկախության սկզբնական շրջանում երկրում դեռևս շարունակվում էին հանցագործությունները, այդ թվում և սպանությունները. սպանում էին անգամ մեկ պարկ ալյուրի համար: Ահավոր չափեր էր ընդունել մաուզերիզմը: Մաուզերիստների խժդժությունների զոհ էին դառնում բազմաթիվ քաղաքացիներ: Իրավիճակը մտահոգիչ էր նաև այն առումով, որ մի շարք գյուղերում բնակչությունը խուսափում էր հարկերի վճարումից և իշխանության ներկայացուցիչներին դիմավորում էր զենքով[224]:

Առաջադրված խնդրի հաջող իրագործման նպատակով Արամ Մանուկյանն առաջ քաշեց մասնավոր զենք-զինամթերքի պետականացման խնդիրը: Խորհրդարանում հիմնավորելով հարցը՝ Արամը իրավացիորեն նշում էր, որ երկրում ոչ մի իշխանություն չի կարելի հաստատել, քանի որ կառավարության կարգադրությունները չեն կատարվում, իսկ հարկադրանքի դեպքում հանդիպում են զինված

---

[223] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., (Քաղաքական պատմություն), էջ 62:
[224] «Զանգ», 1918, օգոստոսի 17, N 46:

դիմադրության: Նա իրավացիորեն գտնում էր, որ եթե ժամանակին ժողովրդին զինելն անհրաժեշտություն էր և ուներ ինքնապաշտպանական նպատակներ, ապա տվյալ պահին անձի անձեռնմխելիությունը, ունեցվածքի և այլ իրավունքների պաշտպանությունը պետական իշխանության պարտականությունն է: 1918թ. օգոստոսի 29-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց Արամի ներկայացրած «Մասնավոր սեփականություն կազմող զենքերի և զինամթերքների պետականացման մասին» օրենքը[225]: Այն նախատեսում էր պետականացնել մասնավոր զենք-զինամթերքը, բացի որսորդական և անպահունակավոր տեսակներից: Զենքը կամովին չհանձնելու դեպքում այն գրավվելու էր հարկադրաբար, իսկ օրինազանցները ՆԳ նախարարի որոշմամբ ենթարկվելու էին պատժի: Վտանգված գյուղերի ինքնապաշտպանությանը չվնասելու նպատակով նախատեսվում էր այդ գյուղերից գրավված զենքի մի մասը թողնել տեղում՝ հատուկ մարդկանց պահպանության ներքո:

Դեռևս օգոստոսի 27-ին Արամը Երևանի միլիցիապետին հրահանգել էր ձեռնարկել եռանդուն քայլեր՝ քաղաքում հրածգությունը դադարեցնելու և ապօրինի հրազեն կրող քաղաքացիների զենքերն առգրավելու ուղղությամբ: Նա նաև խստագույնս պատվիրել էր օրինախախտներին պատասխանատվության ենթարկելիս կազմել արձանագրություններ, իսկ առգրաված զենքի քանակի մասին զեկուցել իրեն[226]:

Զենք-զինամթերքի առգրավման ընթացքում թյուրիմացություններից խուսափելու համար սեպտեմբերի 27-ին Արամը զինագրավող հանձնաժողովին կարգադրեց խուզարկություններ կատարել միայն տվյալների առկայության դեպքում և հարգալից վերաբերվել բնակչությանը, բնակարանատիրոջը ներկայացնել իր ստորագրությամբ լիազորագիրը՝ խուզարկություն կատարելու մասին: Նա նաև հանձնաժողովին պարտավորեցնում էր զենք-զինամթերք գտնելու

---

[225] Հ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 1; Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Պատասխանատու խմբագիրներ՝ Միրզոյան Ս., Մամիկոնյան Ֆ., Երևան, 1998, էջ 2-3:
[226] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 52:

դեպքում կազմել առանձին արձանագրություն, որը պետք է ստորագրվեր հանձնաժողովի անդամների, բնակարանատիրոջ և վկաների կողմից:

Ծավալվեց հետևողական պայքար օրինազանցությունների դեմ: 1918թ. հոկտեմբերի 8-ին, ընթացք տալով Երևանի գավառային կոմիսարի դիմումին, Արամը երեք ամսով կալանքի ենթարկեց զինագրավման մասին օրենքը խախտած Գ. Ավանեսովին և Հ. Օրդուևին[227]: Հոկտեմբերի 28-ին Արամի հրամանով մեկ ամսով կալանվեց Սարդարապատի բնակիչ Գ. Հակոբյանը՝ իշխանության ներկայացուցչի պահանջին չենթարկվելու և նրան ծեծելու համար[228]: Սեպտեմբերի 30-ին ձերբակալվեցին Երևանի գավառի Ավան գյուղի երկու բնակիչներ, որոնք գյուղի այլ բնակիչների հետ ստեղծել էին ավազակախումբ և զբաղվում էին խաղաղ բնակչության թալանով[229]:

ՆԳ նախարարության հետապնդած տարաբնույթ խնդիրների հաջող կենսագործումը ենթադրում էր սեփական շարքերի մաքրում անհուսալի, օրինազանց և անկարգապահ աշխատակիցներից, ինչը և կատարում էր Արամը՝ խտրականություն չդնելով ոչ ոքի մեջ: Սեպտեմբերի 13-ին նա Նոր Բայազետի գավառային կոմիսարին հանձնարարեց ձերբակալել հարկահավաքի ժամանակ չարաշահումներ կատարած տեղամասային կոմիսարներ Ռ. Թարումյանցին ու Ն. Աթոյանցին[230]: Հոկտեմբերի 12-ին Արամը պարենավորման բաժանմունքի վարիչին հրահանգեց նույն բաժանմունքի պաշտոնյա, Բաշ-Ապարանի հերոսներից Արսեն Տեր-Պողոսյանին ժամանակավորապես՝ մինչև քննության ավարտը, ազատել աշխատանքից՝ հիմք ունենալով գնդապետ Բեյ-Մամիկոնյանի կատարած հետաքննության ընթացքում նրա վրա բարդված մեղադրանքները[231]: Հոկտեմբերի 25-ին Արամը Երևանի շրջանային դատարանի դատախազին առաջարկում էր քրեական պատասխանատվության ենթարկել պարենավորման բաժանմունքի լիազորներ Ս. Հարությունյանին և Ս.

---

[227] Նույն տեղում, գ. 16, թ. 35:
[228] Նույն տեղում, թ. 73:
[229] Նույն տեղում, գ. 15, թ. 121:
[230] Նույն տեղում, թ. 78:
[231] Նույն տեղում, ց. 2, գ. 1, թ. 122:

Սահակյանին՝ պետական պարենամթերքը յուրացնելու և այլ ապօրինությունների համար[232]:

Արամը փորձում էր վերացնել նաև հանցագործությունների առաջացմանը նպաստող պայմանները: Այսպես, Հայաստանի Խորհրդի նախագահի և քարտուղարի անուններով կեղծ վկայագիր կազմելու և դրանով հացահատիկ հավաքելու համար 1918թ. սեպտեմբերի 26-ին ձերբակալվել էր Ե. Լուսիկյանը: Սեպտեմբերի 27-ին Արամը գործն ուղարկել էր Երևանի շրջանային դատարանի դատախազին՝ մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով[233]: Այստեղ էականն այն է, որ ելնելով այդ դեպքից՝ նա գավառային և տեղամասային կոմիսարներին հանձնարարում է նմանօրինակ թյուրիմացություններից խուսափելու համար լինել զգոն, գործել իրենց պարտականությունների շրջանակներում, իսկ օրենքով չնախատեսված դեպքերում գործել միայն վերադասի արտոնությամբ[234]:

ՆԳ նախարար Արամի աշխատանքային պրակտիկայում տեղ էր գտել այնպիսի կարևոր սկզբունք, ինչպիսին էր սահմանված վարչական պատժաչափի կրճատումը, եթե դա կարող էր ավելի ծանր հետևանքների հանգեցնել, քան գործված հանցանքն էր, կամ էլ եթե պարզվել էր, որ պատժի համար բավարար հիմքեր չեն եղել: Օրինակ, հաշվի առնելով հոկտեմբերի 12-ին իր կողմից 1,5 ամսով կալանված Խ. Բակլաչյանի հիվանդագին վիճակը, հոկտեմբերի 22-ին Արամը նրան ազատեց պատժի հետագա մասի կրումից[235]: Նոյեմբերի 9-ին նա միջնորդեց Հայկական դիվիզիայի պետին՝ Քարվանսարայի մի խումբ ձերբակալված բնակիչների կալանքից ազատելու համար՝ հենվելով ՆԳ նախարարին կից իրավախորհրդատուի եզրակացության վրա, ըստ որի գործում բացակայում էին հանցանշանները[236]:

Արամը հանդես էր գալիս նաև իշխանության անհարկի դրսևորումների դեմ: Դեկտեմբերի 4-ին, ընդառաջելով եղվարդցիների բողոքին, նա պարենավորման նախարարից պահանջեց հետ կանչել եղվարդ

---

[232] Նույն տեղում, ց. 1, գ. 16, թ. 50:
[233] Նույն տեղում, գ. 18, թ. 32-34:
[234] Նույն տեղում, գ. 16, թ. 39:
[235] Նույն տեղում, թ. 47:
[236] Նույն տեղում, թ. 92:

գյուղում գտնվող պատժիչ զորախումբը, իսկ ծերբակալված գյուղացիներին անհապաղ ազատել բանտարկությունից, ավելացնելով, որ հակառակ դեպքում օրինազանց պաշտոնյաները կենթարկվեն խստագույն պատժի[237]: Երաշտի պատճառով գյուղը ուշացրել էր հարկի վճարումը պետությանը՝ պարտավորվելով վճարել հաջորդ տարի:

ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացությունը թելադրում էր նոր մոտեցում օրինախախտներին պատժելու հարցում: Այդ հարցում նախաձեռնությամբ հանդես եկավ Երևանի քաղաքապետը՝ առաջարկելով քաղաքի միլիցիայի պետին օրինախախտ քաղաքացիներին արգելափակելու փոխարեն վարչական կարգով տուգանքի ենթարկելու արտոնություն տալ: Արամն ընթացք տվեց այս առաջարկությանը և այն ներկայացրեց կառավարությանը: Վերջինս հավանություն տվեց այդ առաջարկությանը՝ սահմանելով, որ միլիցիայի պետին իրավունք էր տրվում քաղաքացուն ենթարկել դրամական տուգանքի, որը պետք է փոխանցվեր պետական գանձարան[238]:

Արամի մշտական ուշադրության կենտրոնում էր գտնվում ազգաբնակչության շահերի պաշտպանությունն ամեն տեսակ ապօրինություններից: Օգոստոսի 5-ին նա զինվորական նախարարին առաջարկեց միջոցներ ձեռնարկել զինվորների կողմից դավալուցիներից խլված անասնահոտը հետ վերադարձնելու և առաջիկայում նման դեպքերը կանխելու ուղղությամբ[239]: Հոկտեմբերի 7-ին Արամը Նոր Բայազետի գավառային կոմիսարին հանձնարարեց անհապաղ քայլեր ձեռնարկել Ն. Ախտայի բնակիչների գլխին պատուհաս դարձած ոմն խմբապետ Շմավոնի և նրա խմբի շահատակությունները կանխելու ուղղությամբ, և կատարածի մասին հաղորդել իրեն[240]:

Արամն ամեն ինչ անում էր իր ենթակայության ներքո գտնվող պետական ծառայողներին զգաստացնելու, նրանց մեջ վստահված գործի հանդեպ պատասխանատվության զգացումը բարձրացնելու համար: 1918թ. սեպտեմբերի 8-ի շրջաբերականով Արամն ի գիտություն

---

[237] Նույն տեղում, գ. 15, թ. 202:
[238] Նույն տեղում, գ. 105, թ. 2; գ. 16, թ. 10, 11:
[239] Նույն տեղում, գ. 15, թ. 44:
[240] Նույն տեղում, թ. 158-159:

գավառային պաշտոնյաների հայտարարեց, որ եթե իրենց նկատմամբ լրագրերում հրապարակված մեղադրանքները կարճ ժամանակում չհերքվեն, ապա նրանք կհեռացվեն աշխատանքից և դատի կտրվեն[241]: Մեկ այլ անգամ նա գավառային կոմիսարներին առաջարկեց ներկայացնել իրենց տեսակետներն այն մասին, թե որքանով են վարչական մարմինների համար նախատեսված հաստիքները համապատասխան իրենց գավառներում: Կոմիսարներին առաջարկվում էր իրենց տեսակետներն արտահայտելիս ելնել պետական գանձարանի ծախսերը խնայելու անհրաժեշտությունից և որոշված նորմերի ավելացման անհրաժեշտության առաջարկի դեպքում ներկայացնել անհերքելի հիմնավորում[242]:

Արամն, անշուշտ, կառավարության օժանդակությամբ, որոշակի քայլեր ձեռնարկեց ներքին գործերի համակարգն ուժեղացնելու, նրանում հստակություն մտցնելու ուղղությամբ: Այսպես, եթե Դարալագյազի միլիցիան 1918թ. հուլիսին ուներ 13 միլիցիոներ, ապա նոյեմբերին՝ 37[243]: Եթե նույն թվականի օգոստոսին ՆԳՆ կենտրոնական ապարատն ուներ 26 ծառայող[244], ապա նոյեմբերին՝ 41 և իրենից ներկայացնում էր բավական կազմակերպված կառույց: Նրանում կային հատուկ հանձնարարությունների գծով երկու կոմիսարներ, իրավախորհրդատու, նախարարի գրասենյակի կառավարիչ իր ենթականերով, նախարարին կից Հայաստանի տարածքի վարչակազմի և միլիցիայի կոմիսար[245]:

ՆԳ նախարարությունում հստակություն մտցնելուն էր միտված Արամ Մանուկյանի հետևյալ քայլը: Սեպտեմբերի 7-ին նա դիմեց Երևանի քաղաքապետին, որի իրավասության ներքո էր գտնվում քաղաքի միլիցիայի պետի նշանակումը, նրան առաջարկելով հրահանգ իջեցնել միլիցիայի պետին այն մասին, որ նա իր որոշումներով այս կամ այն անձանց կալանելու վերաբերյալ անհապաղ իրեն ներկայացնի այդ որոշումների պատճենները[246]:

---

[241] Նույն տեղում, գ. 1, թ. 79, 80, 81, 82:
[242] Նույն տեղում, գ. 2, գ. 47, թ. 120:
[243] Նույն տեղում, թ. 96:
[244] Նույն տեղում, գ. 3, թ. 65-67:
[245] Նույն տեղում, թ. 123-124:
[246] Նույն տեղում, գ. 1, գ. 18, թ. 9:

Սեպտեմբերի 10-ին Արամն անձամբ իր դժգոհությունն ուղղեց Երևանի միլիցիայի պետին՝ գործերում տեղ գտած այն երևույթների համար, որ նա կատարում էր ձերբակալություններ և գրանցում իր անունով, այնինչ ինքը տեղյակ չէր ո՛չ ձերբակալությունների, ո՛չ էլ դրանց պատճառների մասին: Նա միլիցիապետին հանձնարարում էր երկօրյա ժամկետում իրեն ներկայացնել բոլոր այդպիսի որոշումների մասին՝ մատնանշելով նաև, թե արդյո՞ք դրանց առթիվ կազմվել են մեղադրական ակտեր և ու՞մ են ուղարկվել[247]:

1918թ. հոկտեմբերի կեսերից Թուրքիան, որի կապիտուլյացիան համաշխարհային պատերազմում օրերի հարց էր, սկսեց իր զորքերը հեռացնել Կովկասից, այդ թվում և գրավյալ հայկական շրջաններից: Դրան զուգահեռ հայկական զինուժը զբաղեցնում էր այդ տարածքները: Մասնավորապես, հոկտեմբերի 18-21-ը հայկական ուժերը հաստատվեցին Լոռի-Փամբակում[248]: ՀՀ կառավարությունն Արամի գործուն մասնակցությամբ քայլ առ քայլ վերականգնում էր իշխանության մարմիններն ազատագրվող տարածքներում: Արդեն նոյեմբերին Ղարաքիլիսայի գավառային կոմիսարիատն ուներ 11 ծառայող, իսկ միլիցիան՝ 195 միլիցիոներ[249]: Արամը, փորձելով արագացնել թուրքերի կողմից ազատվելիք տարածքներում (Նախիջևան, Սուրմալու և այլն) իշխանության վերականգնումը, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դրանց վարչական ղեկավարման համար կատարեց մի շարք նշանակումներ[250]: Դեկտեմբերի 8-ին նա Երևանի գավառային կոմիսարին հանձնարարեց մեկնել Ղամարլուի և Դավալուի շրջաններ ու վերականգնել իշխանությունը տեղերում, իսկ անհրաժեշտության դեպքում դիմել տեղի զինվորականության աջակցությանը[251]:

Մինչև ՀՀ երկրորդ՝ կոալիցիոն կառավարության ստեղծումը (նոյեմբերի 4), երբ ՆԳՆ-ից զատվեցին պարենավորման և լուսավորության նախարարությունները, Արամն իր ներդրումն ունեցավ նաև

---

[247] Նույն տեղում, գ. 16, թ. 20:
[248] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, N 3, էջ 43; Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 203:
[249] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 47, թ. 100-112:
[250] Նույն տեղում, թ. 69, 124, 131, 147; գ. 60, թ. 1:
[251] Նույն տեղում, ց. 1, գ. 15, թ. 203:

պարենային ճգնաժամի մեղմացման գործին: Դա դժվարին գործ էր, քանզի երկրի պաշարները սահմանափակ էին, իսկ հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ գրեթե բացակայում էր:

Օգոստոս ամսից, մի կողմից պարենային ծանր կացությունը մեղմելու, մյուս կողմից պետության գանձարանը լցնելու համար, ի լրումն հացի պետականացման, պետական մենաշնորհ հաստատվեց նաև գետնախնձորի, բամբակի, խմիչքների, աղի, կարտոֆիլի նկատմամբ: Վերջինի պետականացման վերաբերյալ օրինագիծը սեպտեմբերին կառավարությանն էր ներկայացրել Արամը[252]:

Կարճ ժամանակում պարենամթերքի պետականացման ուղղությամբ կատարվեց մեծ աշխատանք: Սեպտեմբերի 16-ի դրությամբ ՆԳ նախարարության պարենավորման բաժանմունքը հավաքել էր 180 հազար փութ հացահատիկ[253]:

Ձեռնարկվեցին քայլեր հանրապետության տարածք մթերքների պետական ներկրում կազմակերպելու և քաղաքացիների կողմից դրանց ներմուծումը դյուրացնելու ուղղությամբ: 1918թ. օգոստոսի վերջերին ՆԳՆ-ին կից պարենավորման բաժանմունքի կողմից Թիֆլիս ուղարկվեց Ս. Վանցյանը այնտեղից պարենային և այլ ապրանքներ գնելու համար: Գործը դյուրացնելու նպատակով պարենավորման բաժանմունքը հայցեց արտաքին գործերի նախարարության օժանդակությունը[254]:

1918թ. օգոստոսի սկզբներին Արամի կարգադրությամբ ապրանքների ներմուծումը հայտարարվեց ազատ, իսկ անհրաժեշտ մթերքների արտահանումն արգելվեց և պետք է կատարվեր միայն հատուկ թույլտվությամբ[255]: Նոյեմբերի 28-ին Արամը ֆինանսների նախարարին խնդրեց մաքսային հաստատությունների վարչությանը կարգադրել արտոնել պարենամթերքի անարգել ներկրումը հանրապետություն: Գաղթականներին թույլատրվեց 10-15-ական փութ հաց բերել դրսից:

Կազմակերպվեց նաև հացի բաշխումը ազգաբնակչությանը: Հոկտեմբերի սկզբին Երևանում հաց էին ստանում 36 հազար

---

[252] «Զանգ», 1918, սեպտեմբերի 28, N 57:
[253] Հ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 26:
[254] Նույն տեղում, թ. 5, 6; «Զանգ», 1918, օգոստոսի 25, N 48:
[255] «Զանգ», 1918, օգոստոսի 10, N 44:

գաղթականներ և տեղացիներ[256]: Ս. Վրացյանը նկատել է, որ բնակչությանը պարենով, ինչպես նաև բնակարանով ապահովելու համար Արամը ստիպված էր դիմել նաև հարկադրանքի, ինչը հարուցում էր սեփականատերերի և ընդդիմության դժգոհությունը[257]: Դրությունը շտկելու այլ ուղի չկար:

Արամը որոշակի, հանրապետության ֆինանսատնտեսական նեռուժին համարժեք քայլեր ձեռնարկեց խճուղիների պահպանման, հեռագրակապը վերականգնելու, ռադիոցանց ստեղծելու, ավտոմեքենաների շարժակազմը նորոգելու ուղղությամբ: 1918թ. օգոստոսի 30-ին Արամը խճուղիների պահպանման համար կառավարությունից ստացավ 30000, իսկ սեպտեմբերի 6-ին՝ 100000 ռուբլի[258]: Սեպտեմբերի 16-ին նա կառավարությունից ստացավ 20000 ռուբլի ավտոմեքենաների շարժակազմը սարքին պահելու և 50000 ռուբլի Դիլիջան-Այրում հեռագրացանցը վերականգնելու համար: 1918թ. նոյեմբերի 16-ին ընդունվեց օրենք ՆԳ նախարարին 200 հազար ռուբլի վարկ տրամադրելու մասին՝ ռադիոկայան գնելու և Երևանում գործարկելու համար[259]:

Արամը որոշակիորեն մասնակցեց նաև գավառներից մայրաքաղաքին մոտեցող համաճարակների կանխարգելմանը: Հուլիսի 27-ին Ազգային խորհրդին կից Սանխորհրդի նախագահ Զ. Անդրիասովից տեղեկանալով, որ Երևանի մի շարք շրջաններ աղտոտված են՝ Արամը, նկատի ունենալով բնակչության առողջությանը սպառնացող վտանգը, քաղաքագլխին առաջարկեց ձեռնարկել միջոցներ քաղաքի հակասանիտարական վիճակում գտնվող վայրերը մաքրելու համար: Ի հարկին քաղաքագլխի տրամադրության տակ էին դրվելու աշխատունակ փախստականները, ինչպես նաև զորամաս[260]:

Օգոստոս ամսին համաճարակային հիվանդությունները գավառներից թափանցեցին Երևան: Օգոստոսի 21-ին Հայաստանի Խորհուրդը

---

[256] «Զանգ», 1918, հոկտեմբերի 12, N 61:
[257] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով: Դէպքեր: Դէմքեր: Ապրումներ, հ. Ե, Պէյրութ, 1966, էջ 29:
[258] Հ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 9, 18:
[259] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 19:
[260] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 39-41:

երկիրը հայտարարեց խոլերայից վտանգված: Անհատների և կազմակերպությունների հանցավոր անտարբերությունը կանխելու նպատակով Արամը սեպտեմբերի սկզբներին արտահայտվեց խոլերայի դեմ պայքարի գլխավոր մարմնին՝ բժշկա-սանիտարական հանձնաժողովին չենթարկվողներին երեք ամսով բանտարկելու կամ 3000 ռուբլի տուգանելու առաջարկով[261]: Խոլերայի դեմ պայքարի նպատակով գավառներ էին ուղարկվում բժիշկներ ու ֆելդշերներ, հատկացվում որոշ գումարներ:

Արամի գործունեությունն այս բնագավառում նաև քննադատվել է: Մասնավորապես, Խորհրդի սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Հ. Ազատյանը նույնիսկ նշում էր, թե ՆԳ նախարարություն չկա և իրենց պետք չէ այդպիսի ՆԳ նախարար[262]: Աղբյուրները, սակայն, հերքում են այդ մեղադրանքը՝ վկայելով, որ ՆԳ նախարարություն և ՆԳ նախարար կար և նրանք հնարավորինն անում էին վիճակը շտկելու համար: Սակայն միջոցները բավարար չէին և ծանր հետևանքներից չհաջողվեց խուսափել: Մի փոքր ուշ սկսեց հետևանքներով էլ ավելի կործանարար տիֆը: Ընդհանուր առմամբ, 1918թ. աշնանից մինչև 1919թ. գարուն համաճարակներից ու սովից զոհվեց մոտ 180 հազար մարդ:

Երկրի ծանր դրությունը հնարավորություն չընձեռեց նկատելի քայլեր կատարել լուսավորության ոլորտում: Դրանք հիմնականում հանգում էին դպրոցական շենքերը զինվորականներից, գաղթականներից և որբերից ազատելուն ու բուն նպատակին հատկացնելուն: Նոյեմբերի 6-ին Հայաստանի Խորհրդի նիստում Արամը հայտնեց, որ տարրական դպրոցների մի մասը բացված է, մյուս մասը՝ բացվելու վրա է: Այն դպրոցները, որտեղ զորք կար, շուտով ազատվելու էին և դրանցում ևս սկսվելու էին դասեր: Նա, ելնելով այն հանգամանքից, որ լուսավորության նախարարությունը զատվել էր ՆԳՆ-ից և վերածվել առանձին կառույցի, հույս էր հայտնում, որ այդուհետև դպրոցական գործն էլ ավելի կկանոնավորվի[263]: Արամը նոյեմբերի 16-ին ՆԳՆ-ին կից ուսումնական բաժնի վարիչի պաշտոնից ազատեց Ա. Աստվածատրյանին, որն այդ

---

[261] «Զանգ», 1918, սեպտեմբերի 10, N 52:
[262] Նույն տեղում:
[263] «Զանգ», 1918, նոյեմբերի 21, N 72; «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, N 3, էջ 50:

պաշտոնին էր նշանակվել իր կողմից օգոստոսի 26-ին, և վարիչի պարտականությունները փոխանցեց նորանշանակ ժողովրդական կրթության նախարարին[264]:

Կրթության զարգացմանը միտված կարևորագույն քայլ էր սեպտեմբերի 11-ի դպրոցական օրենքը, որով տարաբնույթ կազմակերպություններին և անհատ քաղաքացիներին արտոնվում էր սեփական միջոցներով բացել դպրոցներ[265]:

Արամը երկրում կատարվող գրագրությունների հայացման նախանձախնդիր էր: ՀՀ կառավարության սեպտեմբերի 14-ի նիստում, շեշտելով երկրի տարածքում հեռագրերի ընդունման և առաքման հայացման անհրաժեշտությունը՝ նա առաջարկեց Մորզեի ապարատի համար իր իսկ կողմից մշակված հայկական տառաշարը: Կառավարությունը հավանություն տվեց նրա առաջարկին և հանձնարարեց քայլեր ձեռնարկել նոյեմբերի 1-ից երկրում հեռագրերը թե՛ ռուսերեն և թե՛ հայերեն լեզուներով հաղորդելու համար[266]: «Զանգ»ի սեպտեմբերի 28-ի հաղորդման համաձայն Արամը հեռախոսային գործերի կառավարչին հայտնել էր, որ այդ հաստատության ծառայողները պարտավոր են իմանալ հայերեն[267]: Ձեռնարկված քայլերի հետևանքով գրագրությունները, որոնք նախկինում տարվում էին հիմնականում ռուսերենով, աստիճանաբար հայանում էին:

ՀՀ իշխանությունների, անձամբ Արամի ուշադրության ներքո էր գտնվում հարյուր հազարավոր գաղթականության (փախստականության) և որբերի հոգածության հարցը: Նրանց օգնելու համար հատկացվեցին մեծ գումարներ և ընդունվեցին մի շարք օրենքներ: Օգոստոսի 22-ին կառավարության նիստում Արամը զեկուցեց Երևանի քաղաքային ինքնավարությանը կից գաղթականական բաժանմունքի ստեղծման և նրան միջոցներ տրամադրելու անհրաժեշտության մասին: Կառավարությունն ինքնավարությանը տրամադրեց 100000 ռուբլի[268]:

---

[264] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 1, թ. 178:
[265] Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 14, թ. 3:
[266] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 25:
[267] «Զանգ», 1918, սեպտեմբերի 28, N 57:
[268] Հ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 3:

«Զանգ»ի տվյալներով գաղթականական բաժանմունքը ստեղծվել էր Արամի կողմից[269]:

Հոկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Խորհուրդը որբերի խնամքի համար Արամին հատկացրեց 750000 ռուբլի[270]: Մի քանի օր անց որբերի և գաղթականների օգնության, ինչպես նաև նրանց տրամադրվելիք բնակարանների վերաշինության նպատակով երկրի իշխանությունները առանձնացրեցին ևս 1 մլն 736 հազար ռուբլի: Դեռևս սեպտեմբերի 28-ին Խորհուրդն ընդունել էր օրենք, որով պետությունը պարտավորվում էր ընչազուրկ գաղթականներին հող կամ աշխատանք տրամադրել, իսկ հակառակ դեպքում հատկացնել պետական նպաստ[271]: Կառավարության մոտեցումը գաղթականների հարցին ուսանելի է այն առումով, որ որոշվել էր օգնություն չցուցաբերել նրանց, ովքեր խուսափում էին առաջարկվող աշխատանքից:

Արամ Մանուկյանի նախանձախնդրությունն ու սրտացավությունն ակնհայտ էր առանձնապես որբերի ճակատագրի հարցում: Քաջ գիտակցելով, որ բավարար միջոցների բացակայության պայմաններում միայն համաժողովրդական մոտեցման դեպքում հնարավոր կլինի որբերին փրկել մահվան ճիրաններից, Արամը հոկտեմբերի 8-ին դիմեց ժողովրդին: Տեղեկացնելով, որ կառավարությունն իր խնամքի տակ է վերցրել 4000 որբերի և մտադիր է նրանց թիվը հասցնել 10000-ի, Արամն ավելացնում էր, որ հանրապետության կառավարությունն իր սուղ միջոցներով ի վիճակի չէ օգնել 50 հազարի հասնող բոլոր որբերին: Ժողովրդի աջակցությունը ստանալու համար Արամը դիմում էր նրա գիտակցությանն ու բնազդին՝ հետևյալ հոգեցունց խոսքերով. «Թառամում է խոշորագույն մասը մեր մատաղ սերնդի, մեռնում է ապագան մեր հայրենիքի, որի համար ցեղի լաւագոյն մարդիկը պայքարեցին, տառապեցին և նահատակուեցին»: Հայտնելով, որ կարիքը մեծ է, միջոցներն ու ժամանակը՝ քիչ, Արամը ավելացնում էր. «Օգնութեան եկէ՛ք Ձեր Կառավարութեանը, փրկեցէ՛ք անկումից վաղուայ

---

[269] «Զանգ», 1918, օգոստոսի 25; Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 9:
[270] Հ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 3:
[271] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 6:

յոյսը մեր Հայրենիքի, խնամոտ ձեռք կարկառեցէք մայթերի ու ճանապարհների վրայ մռմռացող անուժ որբերին, որոնց սովատանջ հայեացքը աղերսում է թէկուզ փշրանքը ձեր սեղանների»: Նա ժողովրդին կոչ էր անում օգնել որբերին և հույս հայտնում, որ փոխադարձ ջանքերով կարելի կլինի փրկել նրանց[272]:

1918թ. հոկտեմբերի 11-ին ընդունած գաղթական որբերի խնամատարության և դաստիարակության մասին օրենքով պետությունը, հանձինս խնամատարության նախարարի, իր վրա էր վերցնում բոլոր գաղթական որբերի խնամքը: Նախատեսվում էր խնամվող որբերի թիվը հասցնել 10 հազարի, և ևս 5000-ի համար կառուցել նոր որբանոցներ: Պետությունն իր վրա էր վերցնում մինչև 15 տարեկան որբերի խնամքը, իսկ 15 տարեկանից բարձր տարիքի որբերի համար պետք է աշխատանք գտներ[273]:

Հայաստանի ռազմաքաղաքական փխրուն կացությունը կառավարությանը թելադրում էր շարունակել Հայոց Կ. Ազգային խորհրդի կողմից Թուրքիայի և նրա դաշնակիցների հետ սկսված բանակցությունները: Հայկական պատվիրակությունները Բեռլինում Հ. Օհանջանյանի և Կոստանդնուպոլսում Ա. Ահարոնյանի գլխավորությամբ ծավալել էին եռանդուն գործունեություն:

Թուրքերի հետ բանակցություններ, թեև ոչ մեծամասշտաբ, ընթացան նաև Երևանում, որին մասնակցեց նաև Արամը: Որպես պետական գործիչ և իրավիճակին քաջատեղյակ անձնավորություն նա, որքան էլ նրա համար դժվար էր համակերպվել հայ ժողովրդին պարտադրված թուրքական ծանր պայմաններին, որքան էլ որ ծանր էր բանակցել թուրք ջարդարարների հետ, ընմբռնում էր վերջիններիս հետ բանակցելու անհրաժեշտությունը: Ժամանակը չէր խրոխտ կեցվածքի, այն միայն կբարդացներ հայոց կացությունը: Այդ իսկ պատճառով Արամի գլխավորությամբ կազմակերպվեց պատշաճ ընդունելություն 1918թ. օգոստոսի 31-ին Երևան ժամանած թուրք զորավար Խալիլին[274]: Ավելին,

---

[272] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 38 (I մաս), թ. 53-54; ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 19:
[273] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 11-12:
[274] Հ ԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 55; Նաւասարդեան Վ., Արամի կեանքից, «Հայրենիք», 1925, նոյեմբեր, N 1, էջ 75-79:

Արամն անձամբ ժամանեց երկաթուղային կայարան՝ թուրք գործչին դիմավորելու համար ու գրկախառնվեց, անգամ համբուրվեց նրա հետ: 1918թ. Վրաստանում Հայաստանի դեսպան Արշակ Ջամալյանի վկայությամբ, Խալիլի հետ «պաշտոնական խոսակցությունը», այսինքն՝ հայ-թուրքական բանակցությունն ընթացավ Արամի բնակարանում[275]:

Ելնելով այն բանից, որ բանակցություններում քննարկվել է նաև Անդրանիկի հարցը, որին թուրքերը ձգտում էին վերացնել ասպարեզից, գրականության մեջ հանիրավի կերպով փորձ է արվել բանակցությունները ներկայացնել որպես ազգային շահերի և Անդրանիկի դեմ ուղղված ծեռնարկ:

Արխիվային նյութերի և գրականության ուսումնասիրությունից հետևում է, որ Անդրանիկի դեմ միջոցներ ձեռնարկելու հարցի քննարկումը եղել է դիվանագիտական քայլ, հեռու գործադրվելու հնարավորությունից[276]: Ադրբեջանը երբեք չէր ընդունի Զանգեզուրում գտնվող Անդրանիկի դեմ զուտ հայկական զորք ուղարկելու Հ. Քաջազնունու՝ Խալիլին արված առաջարկությունը[277], այն պարզ պատճառով, որ անշեղորեն ձգտում էր նվաճել այն: Մյուս կողմից, Անդրանիկի հեղինակությունը (նաև զինուժը) այնքան մեծ էր, որ հանրապետության կառավարությունը չէր փորձի նրա դեմ զորք ուղարկել և սկսել եղբայրասպան պատերազմ, մի բան, որը կործանարար կլիներ երկուստեք: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը չճանաչող հերոսի գոյությունը ստեղծված պայմաններում, բացասական հետևանքներով հանդերձ, ավելի շատ ծեռնտու էր երկրին, քան վնաս, որովհետև իր գտնվելու շրջաններում հերոսը հանդիսանում էր զսպող ուժ թուրքերի դեմ: Առհասարակ, Անդրանիկը մեծապես խանգարում էր թուրքերի հայակուլ ծրագրերի իրագործմանը:

Փորձելով օգտվել Խալիլի հետ ծանոթությունից՝ Արամն առաջ քաշեց Հայաստանի Հանրապետության տարածքի ընդարձակման հարցը, սակայն թուրք գործիչն առաջադրեց անընդունելի պայմաններ,

---

[275] Հ ԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 56:
[276] Տես՝ Ասրյան Ա., ՀՀ կառավարության և Անդրանիկի հարաբերությունների հարցի շուրջ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական աշխատանքների ժողովածու, հ. II, Երևան, 2002, էջ 26-29:
[277] Հ ԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 56-57:

այն է՝ Մեղրին փոխանակել Ադրբեջանի իշխանության ներքո գտնվող Ջիվանշիրի և Վարանդայի շրջանների հետ: Խալիլ-Արամ կապի շնորհիվ սովի ճիրաններում գտնվող Հայաստանը Խալիլից ստացավ 25000 փութ ցորեն: Բացի այդ, թուրք գործիչը հրահանգեց Բաշ-Գառնիի շրջանի Միլլի ձորի թաթարներին հեռանալ թուրքական տարածք՝ այն հայ փախստականությանը զիջելու նպատակով[278]: Թեև, ինչպես սպասելի էր, թաթարները չանսացին Խալիլի ձայնին, որի անկեղծությունը միանգամայն կասկածելի էր, այնուամենայնիվ, այդքանն էլ բավական էր, որ հայկական ուժերը նշված տարածքը մաքրեին այդ թշնամական տարրերից: Իսկ հայկական պատմական տարածքներից թաթարների հեռացումը հրամայական անհրաժեշտություն էր՝ մի կողմից երկրի անվտանգությունն ապահովելու, մյուս կողմից՝ անօթևան տասնյակ հազարավոր հայ փախստականությանը տեղավորելու համար: Այդ ուղու նախանձախնդիրներից էին Արամը, Ռուբենը և ազատագրական շարժման այլ գործիչներ: 1918թ. ամռան վերջերից արևմտահայկական ուժերը խմբապետ Մուշեղի և ուրիշների գլխավորությամբ թշնամուց ազատագրեցին Ճղնի ձորը, Միլիտերեն (Զանգեզուր տանող ճանապարհին), Բաշ-Գառնին և այլ տարածքներ: Ազատագրական այդ գործողությունների համար անհրաժեշտ զենք-զինամթերքը, որպիսիք արգելված էր դուրս տանել Երևանից, հայկական ուժերը ստացան Արամի արտոնագրով[279]: Բացի այդ, Բաշ-Գառնիի ազատագրումը, ինչպես տեղեկանում ենք Հայաստանի առաջին հանրապետության ռազմական նախարար, գեներալ Հ. Հախվերդյանի վկայությունից, իրականացվել էր միլիցիայի օժանդակությամբ[280]: Պարզ է, որ դա կարող էր կատարվել միայն ՆԳ նախարար Արամի հրահանգով:

1918թ. սեպտեմբերի 18-ին Արամը Նոր Բայազետի գավառային կոմիսարին հանձնարարեց կանխել գավառի Բասարգեչարի շրջանի նկատմամբ Ադրբեջանի իշխանության հաստատմանը ձգտող ոմն Չայ-խորսկու գործողությունները և թաթարներին հայտարարել, որ նրանք

---

[278] Ռուբէն, հ. 7, էջ 145-146:
[279] Նույն տեղում, էջ 111:
[280] Հ ԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 15:

պարտավոր են կատարել ՀՀ կառավարության օրինական պահանջները[281]:

Երկիրը ներքին թշնամուց ազատագրելու կոնկրետ գործողությունների մասին, այդ թվում և Արամի մասնակցությամբ իրականացված գործողությունների մասին այնքան էլ շատ չեն: Սակայն, գեներալ Հ. Հախվերդյանի մեկ այլ վկայություն լիովին բացահայտում է Արամի դիրքորոշումն այդ հարցում: 1931թ. նա նկատել է, որ Արամը «Հայաստանի թաթարական բնակչության նկատմամբ վարում էր նեղ ազգային և պետական առումով վնասակար քաղաքականություն, արտաքսելով կամ, ավելի ճիշտ, ուղղակի քշելով թաթարներին իրենց բնակավայրերից, որոնք ենթադրվում էր բնակեցնել հայ փախստականներով: Այդ քաղաքականությունը, իմ խորին համոզմամբ, վարում էր ինքնուրույն, լռակյաց, հաշվի չնստելով նախարարների խորհրդի կարծիքի հետ, և ասելով մի բան, կատարելով այլ բան, հավանաբար, գտնելով դա օգտակար հայ ժողովրդի շահերի համար»[282]: Անշուշտ, քննադատության չի դիմանում և անընդունելի է Հ. Հախվերդյանի այն գնահատականը, թե Արամի այդ գործելակերպը պետական առումով վնասակար էր: Ընդհակառակը, պետական շահը պահանջում էր խիստ մոտեցում հայոց պատմական տարածքներում նստած թաթարների հանդեպ, որովհետև նրանք տասնամյակներ շարունակ, հատկապես 1905-1906թթ. և 1918թ. որդեգրել էին ծայրահեղ հակահայկական կեցվածք: Այդ էր պատճառը, որ Արամն իրականացրեց երկիրը նրանցից մաքրելու քաղաքականություն: Որ Արամը վարում էր ոչ թե նեղ ազգային, այլ ազգային-պետական շահերից բխող գործունեություն հաստատվում է այն հանգամանքով, որ նա, գնահատելով եզդիների և նրանց առաջնորդ Ջհանգիր աղայի օրի-նապահ դիրքը պետության հանդեպ, 1918թ. օգոստոսի 27-ին վերջինիս նշանակեց Հայաստանի տարածքում փախստական եզդիների գործերի վարիչ[283] և պաշտպանեց նրանց շահերը բազմաբնույթ օրինախախ-տումներից:

---

[281] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 102:
[282] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 44:
[283] Նույն տեղում, ֆ. 201, ց. 2, գ. 3, թ. 52:

Արխիվային փաստաթղթերի վերլուծությունից երևում է, որ Արամը կառավարության մեջ ուներ բացառիկ դիրք, և իզուր չէ, որ պատմագրության մեջ նրան անվանում են Հայաստանի փաստական կառավարիչ: Այսպես, ելնելով թուրքական կողմի հետ կայացած համաձայնությունից 1918թ. հուլիսի վերջերին Արամը ենթասպա Խոյեցյանին նշանակեց կառավարության ներկայացուցիչ Ալեքսանդրապոլում, որը պետք է կարգավորեր գաղթականական և այլ հարցերը[284]: Հուլիսի 30-ին նա Երևանի նահանգային վարչության բժշկական բաժանմունքը ժողովրդական առողջապահության տնօրինությունից հանեց և ընդգրկեց ՆԳՆ ենթակայության ներքո[285]: Այս քայլերը վկայում են, որ Արամի հեղինակությունը և լիազորությունների շրջանակը շատ ավելի լայն էր, քան ՆԳ նախարարինը: Արամի առանձնակի դերը երևում է և այն բանից, որ երբեմն նրան էին դիմում նաև ոչ իրեն վերապահված հարցերի վերաբերյալ, որոնց նա ընթացք էր տալիս: 1918թ. նոյեմբերի 25-ին արդարադատության նախարար Ս. Հարությունյանը հարցնում էր նրա կարծիքն այն մասին, թե արդյո՞ք ժամանակին և նպատակահարմար չէ լուծարել էջմիածնի Հայ-լուսավորչական սինոդին կից դատախազի պաշտոնը: Արամի պատասխանն այդ հարցմանը դրական էր[286]: Հիմք ընդունելով Ղարաքիլիսայի ռազմական օկրուգի պետի իրեն ուղղված հաղորդումը, որ քննչական իշխանության չգոյության պատճառով տեղում կուտակվել էին մեծ թվով քննչական գործեր, դեկտեմբերի 18-ին Արամն արդարադատության նախարարության առաջ հարց հարուցեց նշված տեղամասում շտապ նշանակել քննիչ և այդ մասին տեղեկացնել իրեն[287]: Արամի հրամանով նոյեմբերի 16-ին կրթության նախարարության գործը ՆԳՆ ենթակայությունից վերցվեց և փոխանցվեց կրթության նորանշանակ նախարարին:

Հայրենիքի հանդեպ ունեցած պատասխանատվությունը, ժողովրդասիրությունը, հետապնդվող խնդիրների նկատմամբ ցուցաբերած նախանձախնդրությունն Արամին ապահովում էին բարձր հեղինակութ-

---

[284] Նույն տեղում, գ. 1, թ. 42:
[285] Նույն տեղում, ց. 1, գ. 9, թ. 1:
[286] Նույն տեղում, ց. 2, գ. 1, թ. 146-147:
[287] Նույն տեղում, թ. 174:

յուն: Ասվածի խոսուն վկայությունն է Ղարաքիլիսայի ազատագրումից հետո՝ հոկտեմբերի 20-ին ղարաքիլիսացիների հղած հեռագիրը զոր. Սիլիկյանին և Արամին, որում ասվում էր. «Ուրախ ենք, որ Հայկական զօրքի և երկրի ներքին գործերի կառավարութեան գլուխ կանգնած էք դուք, որ հայկական կեանքի ամենածանր շրջանում չլքեցիք ձեր ժողովրդին և ցաւակից եղաք նրան: Հաւատում ենք, որ ձեր աշխատութեամբ և եռանդի շնորհիւ կը կազմւի ուժեղ բանակ և հաստատուն իշխանութիւն, որը վերջ կը դնի մեր ժողովրդի տանջանքներին»[288]:

Արամի պատասխանը ղարաքիլիսացիներին աչքի էր ընկնում գործնական մտքերով և համեստությամբ: Շնորհակալություն հայտնելով հայության լավ ապագայի համար արտահայտած զգացմունքի և հավատի առթիվ՝ Արամը հույս էր հայտնում, որ «հասարակական գործիչների գործակցութեամբ և ժողովրդի՝ դէպի անցման մոմենտը ցոյց տւած գիտակցական վերաբերմունքի շնորհիւ մեզ կը յաջողւի մօտիկ ապագայում երկրի մէջ ցանկալի կարգը հաստատել, ձեռնարկելով մեր ժողովրդին այնքան անհրաժեշտ շինարար աշխատանք»[289]: Նա նաև հետաքրքրվում էր Ղարաքիլիսայի ազգաբնակչության պարենային կացությամբ: Նկատելի է, որ Արամը խուսափում էր իր անձին ուղղված գովասանքին անդրադառնալուց և շեշտում նպատակների անշեղ իրականացման ձգտումը, փորձում էր ժողովրդի դերը կարևորելով ստանալ նրա աջակցությունը: Նրա համեստությունը, չմեծամտանալու և մարդկանց գնահատելու կարողությունը չէր կարող անպատասխան մնալ և չբարձրացնել վարկը ժողովրդի մոտ:

Ելնելով ժողովրդի և ընդհանուր գործի շահերից՝ Արամը երբեմն անտեսում էր օրենքն ու գործող կարգը: Այսպես, ելնելով բազմահազար որբերի պատսպարման, հետևաբար նրանց անխուսափելի զրկանքներից և կործանումից փրկելու նպատակից, Արամն արդարացնում էր Երևանի դպրոցներից մեկը նրանց տրամադրելու մասին Ռուբենի ապօրինի արարքը և դրանով իսկ հավանություն տալիս վերջինիս այն մտքին, թե «ողջ եւ ապահով երեխաների ուսման հարցը աւելի կարեւոր չէ, քան փողոցներում թափուածների ու քաղցի ճիրաններում գալարուողների

---

[288] «Զանգ», 1918, հոկտեմբերի 27, N 65:
[289] Նույն տեղում:

կեանքը»[290]: Նա իրավացիորեն գտնում էր, որ «կան դէպքեր...երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի ծանր ու անբնական ժամանակներում, երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»[291]: Մեկ այլ անգամ, անտեսելով գոյություն ունեցող կարգն այն մասին, որ աշխատավարձը պետք է տրվեր միայն ներկայացվող պահանջաթերթիկի հիման վրա, նա Նոր Բայազետի գավառային կոմիսարին հղեց նրա աշխատակիցների աշխատավարձը, բավարարվելով զգուշացումով, որ հետագայում գումարները փոխանցվելու էին միայն ըստ կարգի[292]:

Ժամանակակիցները վկայում են, որ Արամի արարքները զերծ էին անձնական շահախնդրությունից: ՀՀ առաջին կառավարության արդարադատության նախարար Գ. Պետրոսյանն Արամի մահվանից մեկ տարի անց նշում էր, որ նրա ձեռնարկները զուրկ էին անձնական միտումներից և բխում էին բացառապես հասարակության շահերից[293]:

Գեներալ Հախվերդյանը, որի մոտ ակնհայտ է համակրանքի բացակայությունն Արամի հանդեպ, հիշատակված գրության մեջ նշում է, որ նա «անձնապես ծնամոլ և հարստության տենչող մարդ չէր»[294]: Հիրավի, նա աչքի էր ընկել անկաշառ վարքով, ապրել համեստ կենցաղով, խուսափել մեծամտությունից և մարդկանց հետ հարաբերություններում դրսևորել համեստություն ու փափկանկատություն: Գործ ունենալով հսկայական գումարների հետ և օժտված լինելով մեծ իշխանությամբ՝ նա երբեք դրանք չծառայեցրեց իր անձնական հարստացմանը: Ա. Աստվածատրյանի վկայությամբ, նա մինչև իր ընտանիքի Երևան տեղափոխվելն ապրում էր մի սենյակում, որը զուրկ էր հարմարություններից, ուներ «մի անշուք մահճակալ, երկու հասարակ սեղան եւ մի երեք-չորս նոյնպէս հասարակ աթոռ...Մի անկիւնում հին արկղի վրայ յարմարեցուած էր թիթեղեայ վառարան...»: Նա նաև ավելացնում է, որ Արամը սնվում էր ինչպես

---

[290] «Արամը», էջ 139:
[291] Նույն տեղում, էջ 140:
[292] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 47, թ. 6:
[293] Աստուածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1964, հունիս, N 6, էջ 80; «Արամը», էջ 124:
[294] Հ ԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 44:

հասարակ երևանցին, անգամ պատահում էր, որ ճաշի ժամանակ հաց չէր ունենում[295]: Անգամ նրա թաղման ծախսը, որն այդքան էլ մեծ գումար չէր՝ ընդամենը յոթ հազար երեք հարյուր ութսուն ռուբլի վաթսուն կոպեկ, հոգաց պետությունը[296]:

Արամի պետական մտածողությունը, հաշվենկատ, հայրենանվեր ու օգտավետ գործելակերպը դարձել էին նրա նկատմամբ խոր հավատի աղբյուր: 1919թ., Արամի մահվանից ամիսներ անց Եղիշե Իշխանյանի հետ զրույցի ժամանակ, որը 1917-1919թթ. Ղարաբաղում ակտիվ դեր էր կատարել՝ լինելով ժողովրդական կառավարության նախագահ, Հակոբ Տերունին Զանգեզուր-Ղարաբաղի ծանր դրության կապակցությամբ նշել էր. «Կառավարութիւնը...լուրջ, մտածուած ու ծրագրուած վերաբերմունք չունի Զանգեզուր-Ղարաբաղի, մանաւանդ Ղարաբաղի վերաբերեալ: Եթէ Արամը վաղաժամ մեռած չլինէր, վստահ եղիր, այլ վերաբերմունք կը լինէր»[297]: Մեկ այլ օրինակ. 1919թ. հուլիսի 4-ին Ալեքսանդրապոլի գավառային կոմիսարը, փորձելով ՆԳ նախարարին համոզել, որ աննպատակահարմար է գավառի տեղամասերի թիվը չորսից իջեցնել երեքի, իր խոսքին ուժ տալու նպատակով նշում էր, թե գավառը չորս տեղամասերի էր բաժանվել հանգուցյալ Արամի հրամանով՝ 1918թ. նոյեմբերին[298]:

Արամի գործունեությունը, որպես ՆԳ նախարարի, բարձր են գնահատել նրա շատ ու շատ ժամանակակիցներ: Նրանցից էր նաև Ռուբեն Տեր-Մինասյանը: Վերլուծելով 1918-1820թթ. ՀՀ ՆԳ նախարարության գործունեությունը, նա նշել է. «Արամի ժամանակ, ներքին գործոց նախարարութիւն ասելով պէտք էր հասկանալ պետութեան ֆիզիքական ոյժը եւ նրա կառավարական վարչամեքենան, մարմնացումը պետական եւ կուսակցական բարոյական հասկացողութեանց, օրէնքների գործադրման եւ պարտադրման միակ խողովակն ու միջոցը, կեդրոնը որտեղ ամփոփւում էին Հայաստանը կազմակերպելու բոլոր ձգտումներն

---

[295] Աստուածատրեան Ա., Արամ, «Հայրենիք», 1964, ապրիլ, N 4, էջ 75; «Արամը», էջ 97-98:
[296] Հ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 14, 15, 16, 17, 18, 19; Սարդարյան Կ., Պատմություն և իրականություն, էջ 23:
[297] Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 505:
[298] Հ ԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 64 (Ի մաս), թ. 140:

ու ճիգերը: Արամի ատեն, ներքին գործոց նախարարութիւնը կը ներկայացնէր ամէն ինչ...»[299]: Դա հետևանք էր նրա կազմակերպչական ջիղի, հետևողականության, նախանձախնդրության, ազգային շահերի գերակայության ընդունման:

Դժբախտաբար, Արամին վիճակված չէր երկար ապրել, շարունակել ազգօգուտ գործունեությունը և հայրենիքի կայունությունը դնել առավել ամուր հիմքերի վրա: Ժողովրդի հետ ամենօրյա շփումների մեջ գտնվող Արամ Մանուկյանը 1918թ. դեկտեմբերին վարակվեց երկրում մոլեգնող բծավոր տիֆով[300]: 1918թ. դեկտեմբերի 28-ին Արամը, ամենայն հավանականությամբ, վերջին անգամ մասնակցեց կառավարության նիստին[301], իսկ դեկտեմբերի 30-ին վերջին անգամ իր ստորագրությունը դրեց փաստաթղթի ներքո: 1919թ. հունվարի 3-ին ՀՀ վարչապետ Հ. Քաջազնունու կարգադրությամբ, Արամի հիվանդության պատճառով, ներքին գործերի նախարարի պաշտոնը ժամանակավորապես հանձնվեց խնամատարության նախարար Ալ. Խատիսյանին[302]: Այնուամենայնիվ, անկողնին գամված Արամը մնում էր հեղինակություն և շարունակում իր մասնակցությունը բերել գործերին: Այսպես, 1919թ. հունվարի 14-ին ՆԳՆ գրասենյակի կառավարիչը նրա «հանձնարարությամբ» գավառային կոմիսարներին խնդրում էր վերջ տալ պարսիկների հանդեպ որոշ տարրերի կողմից կատարվող ավազակություններին[303]: Բնականաբար այդ հանձնարարականը թելադրված էր Պարսկաստանի հետ բարիդրացիական հարաբերություններին չվնասելու մտահոգությամբ:

Արամը վախճանվեց 1919թ. հունվարի 29-ին, ժամը 14: 30-ին[304], բծավոր տիֆից և թոքատապից[305]: Նրա մահը ծանր հարված էր դեռևս խանձարուրում գտնվող հայոց պետականության և բազմաչարչար հայ

---

[299] Ռուբէն, հ. 7, էջ 312-313:
[300] Ի դեպ, 1918թ. դեկտեմբերի սկզբին Արամը կտրականապես մերժել էր ընդգրկվել Փարիզի խաղաղության խորհրդաժողովին մասնակցելու նպատակով ստեղծվող Ավ. Ահարոնյանի պատվիրակության մեջ և մեկնել Եվրոպա. Տես՝ Ամատունի Յ., Անդրկովկասեն Կ. Պոլիս (Ապրուած օրեր), «Հայրենիք», 1940, հոկտեմբեր, N 12, էջ 72:
[301] Հ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 51:
[302] Նույն տեղում, թ. 50:
[303] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 20, թ. 4:
[304] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 231, թ. 2:
[305] Նույն տեղում, ֆ. 47, ց. 6, գ. 363, թ. 36:

ժողովրդի համար: Արամի մահը ցնցեց հայ ժողովրդին, պետական, հասարակական ու կուսակցական գործիչներին:

Որպեսզի պարզ լինի Արամի մահվան ողջ ահավորությունը, խոսքը տանք Ս. Վրացյանին, որը գրել է. «...Դրոյի բնակարանում նստած էինք ճաշի: Յանկարծ, դրսի դրան զանգը հնչեց, եւ Դրոյի կինը՝ Արփենիկը ներս բերաւ սարսափահար աչքերով մի երիտասարդ: _Արամը մեռաւ, ասաց նա: Դրոյի ձեռքից վար ընկաւ ապուրի գդալը: Առանց մի խօսք արտասանելու՝ նա դուրս թռաւ սենեակից»[306]: ՀՀ կառավարությունը, ՀՅ դաշնակցության Հայաստանի և Արևելյան բյուրոները, Խորհրդարանի և քաղաքային դումայի ֆրակցիաները, արևմտահայ և տեղական կոմիտեները և այլ մարմիններ անհուն վշտով ազդարարեցին Արամի մահը[307]: Երկրի տարբեր կողմերից ուղարկվեցին բազմաթիվ ցավակցական հեռագրեր, որոնք նաև ձոն էին Արամի հիշատակին[308]: Արամի հուղարկավորության օրը սրտառուչ դամբանականներ արտասանեցին Խորեն եպ. Մուրադբեկյանը, Հ. Քաջազնունին, Ն. Աղբալյանը և աչքի ընկնող բազմաթիվ այլ գործիչներ:

Հանդես գալով ՀՅԴ Արևելյան բյուրոյի անունից՝ Ն. Աղբալյանը նշեց. «...մենք այս օր պիտի թաղենք մեծ մարդը, զոր հայ ժողովուրդը տուած է մեծ պատերազմի ընթացքին: Ի՞նչ է մեծ մարդը_Մեծ մարդը ան է, որ գիտէ ըմբռնել ժամանակի հարցը և որո՞նք էին այս վերջին շրջանի մեծ հարցերը, որ համայն հայ ժողովրդին կը պատկանէին_հայ ժողովրդի պաշտպանութեան և ազատութեան հարցերն էին ատոնք ...Վանը բոլորի յիշողութեան մէջն է, հոն_Արամը հանդիսացաւ հայու հերոսական ոգին, փրկելով անոր ռազմական պատիւը: Երևանը վկայ էր այն հզոր ուժին, որ կար և կապրեր անոր մէջ, որ կազմակերպեց դիմադրութեան ուժը և այդ դիմադրութեան շնորհիւ կարողացաւ հիմք դնել Հայաստանի Հանրապետութեան, հայ ժողովրդի ազատագրութեան»: Նա հավաքված բազմությանը նշում էր. «Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսեցէք ձեր խղճի հետ և ըսէք, արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովրդի

---

[306] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 50:
[307] Հ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 231, թ. 2; ֆ. 4047, ց. 1, գ. 135, թ. 2:
[308] «Զանգ», 1919, փետրվարի 9, N 16:

համար, ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնազոհ, որքան Արամը, տե՞ր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը...»[309]:

Յուղարկավորությունը կատարվեց փետրվարի 1-ին, շաբաթ օրը, ս. Պողոս-Պետրոս եկեղեցում կատարված ս. պատարագից հետո, ժամը 11-ին, թնդանոթների որոտի ներքո[310]: Յուղարկավորությանը մասնակցում էին պետական հիմնարկների, զինվորական գնդերի, քաղաքական կուսակցությունների, գավառային համայնքների, արևմտահայ տարբեր մարմինների, ուսուցչական խմբերի և այլ մարմինների ներկայացուցիչներ, բազմահազար ժողովուրդ: «Հայ ժողովուրդը Արամին արաւ մի յուղարկաւորութիւն, որպիսին չէր տեսել Երեւանը. ամբողջ քաղաքը լալիս էր եւ երկիւղածութեամբ հետեւում նրա դագաղին»,-գրել է Ս. Վրացյանը[311]: Ա. Աստվածատրյանը նշել է. «Արամի յուղարկաւորութիւնը համաժողովրդական մեծ սուգ էր: Հազարաւոր մարդիկ եկել էին վերջին յարգանքը մատուցանելու այն մարդուն, որին վստահել էին իրենց բախտը կեանքի ամենածանր օրերին: Ես գիտէի, թէ ի՞նչ էր եղել Արամը այդ ժողովրդի համար, բայց եւ այնպէս, երբ դագաղը դուրս բերինք բնակարանից, այն, ինչ որ տեսայ դուրսը մի վայրկեան սթափեցրեց մեծ կորուստի ազդեցութիւնը ու զարմանք պատճառեց: Աչքդ որ կողմ ուղղում էիր՝ ծով բազմութիւն...Ամբողջ քաղաքը, մեծ ու փոքր, դուրս էին եկել փողոց: Պօղոս-Պետրոս եկեղեցուց սկսած մինչեւ հանգստարան դիակառքը մնաց դատարկ: Դագաղը տանում էին ձեռքերի վրայ»[312]: Դագաղը տանողները վանեցիներն էին, որոնց հետ նա անց էր կացրել մի ամբողջ կյանք:

---

[309] «Աշխատանք», 1919, փետրվարի 12, N 4; Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 54-55:
[310] Հ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 231, թ. 1, գ. 207, թ. 57; ֆ. 47, ց. 6, գ. 363, թ. 36; Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 51-53:
[311] Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան, էջ 467; «Դրօշակ», 1929, հունվար-փետրվար, N 1-2, էջ 28:
[312] Աստուածատրեան Ա., Արամ, «Հայրենիք», 1964, օգոստոս, N 8, էջ 41; «Արամը», էջ 145:

Արամ Մանուկյանը հայոց պատմության մեծերից է, Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրը, հայոց նորագույն պատմության մեջ իր կատարած դերով ամենախոշոր ազգային-քաղաքական ու պետական դեմքը:

Հասակ առնելով մի ժամանակաշրջանում (1880-1890-ական թթ.), երբ հայ ազգային-ազատագրական շարժումը թևակոխել էր բարձրագույն՝ զինված պայքարի փուլը, երբ հայությունը տարված էր արևմտահայության ազատագրության գերագույն խնդրով, Արամն անդամագրվեց հայ ազատամարտի առաջատար ուժ ՀՅ դաշնակցությանը և իր ամբողջ կյանքն անմնացորդ նվիրեց հայ ժողովրդի ազատության սուրբ գործին:

Նրա հայացքներն ազատագրական շարժման վերաբերյալ, ինչպես նաև այդ ուղղությամբ ձեռնարկած քայլերն աչքի ընկան նպատակասլացությամբ, հետևողականությամբ ու հիմնավորվածությամբ:

Արամի համոզմունքն էր, որ ազգային-ազատագրական պայքարի դրոշ պարզած հայ ժողովուրդը պետք է ապավինի սեփական ուժերին: Այդ իսկ պատճառով նա սկզբնապես՝ Կարսում գործելու ընթացքում (1903-1904թթ.), փորձում էր զինատար խմբերի կազմակերպմանն իր մասնակցությունը բերելով հասնել հայոց ներուժի հզորացմանը, ապա՝ Վանում գործելու առաջին շրջանում (1905-1906թթ.) անդադրում աշխատում էր ընդհանուր ապստամբության համար անհրաժեշտ հիմքերի ստեղծման ուղղությամբ, որը հաջողության հասնելու կարևորագույն գրավականներից մեկը կարող էր լինել:

1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Արամն արտահայտվեց երիտթուրքերի հետ գործակցելու իր կուսակցության քաղաքական գծի օգտին՝ հուսալով այդ կերպ հասնել արևմտահայության դրության բարելավմանը: Սակայն, երիտթուրքական կուսակցությունը կարճ ժամանակում ապացուցեց, որ ինքը սուլթանական վարչակարգի արժանի հետևորդն է և կայսրության այլազգիների, այդ թվում հայ ժողովրդի հետ հաշվեհարդար տեսնելու համար ոչ մի միջոցի առջև կանգ չի առնելու: Ստեղծված իրավիճակում Արամը, որը երբեք չէր մտածել վերջ տալ

ինքնուրույն ազգային շարժմանը, դարձյալ հակվեց, այլևս անդառնալիորեն, ազգային ուժերով ազգային խնդիրները վճռելու գաղափարին:

Երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, Արամը նախ փորձեց թուրքական իշխանությունների հետ բանակցությունների միջոցով Վանի հայությանը փրկել զրկանքներից ու ջարդերից: Իսկ երբ խաղաղ միջոցներով այլևս անհնար դարձավ կանխել հայոց մեծամասշտաբ ջարդերը, գործակցելով Վանի քաղաքական այլ ուժերի հետ Արամը հաջողությամբ կազմակերպեց ու ղեկավարեց Վանի 1915թ. ապրիլյան հերոսամարտը՝ հանդիսանալով նրա ոգին: Հաղթական ինքնապաշտպանությամբ ոչ միայն ապացուցվեց, որ ճիշտ ղեկավարվելու և միասնականորեն գործելու դեպքում հայությանն անհնար է հաղթել, այլև վասպուրականահայությունը փրկվեց թուրք ցեղասպանների ճիրաններից:

Վանի նահանգապետի պաշտոնում նա լիովին վեր հանեց իր կազմակերպչական տաղանդը, ազգային-պետական մտածելակերպն ու անխտրական ոգին: Առաջնորդվելով հայ ժողովրդի շահերով՝ նա գործի լծեց բոլոր կարող ուժերին, ինչ կուսակցության էլ նրանք պատկանեին: Արամի հմուտ կառավարման շնորհիվ Վան-Վասպուրականի նահանգապետությունն ապրեց այնպիսի զարգացում, որ այն կարելի է անվանել հայոց նորագույն պետականության նախատիպ:

1915թ. հուլիսին, երբ ռուսական բանակը Վանից բռնեց նահանջի ուղին, Արամը՝ հանդես բերելով ազգային-պետական մտածողություն և պատասխանատվության բարձր զգացում իր ժողովրդի հանդեպ, վճռականապես դեմ արտահայտվեց գաղթին: Սակայն գաղթի կասեցումը նրա և հայրենանվեր մյուս ուժերի կամքից վեր գործ էր:

1915-1917թթ. Արամի գործունեությունը հիմնականում աղերսվեց ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ փախստականության ճակատագրի հետ՝ աչքի ընկնելով նպատակասլացությամբ ու հետևողականությամբ: Միաժամանակ, նա իր մասնակցությունը բերեց ՀՅԴ ձեռնարկներին և արևելահայությանը հուզող խնդիրների լուծմանը:

1917թ. ռուսական փետրվարյան հեղափոխության, բայց առավելապես հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով ռուսական Կովկասյան ռազմաճակատի քայքայումը թուրքական ներխուժման սպառնալիքի տակ դրեց նաև Արևելյան Հայաստանը, որը հղի էր հայ ժողովրդի նոր

կոտորածների վտանգով: Հայության առջև հրամայաբար ծառացել էին հայոց բնօրրանի արևելյան հատվածի զգալի մասը զբաղեցնող Երևանի նահանգում ուժեղ իշխանություն ստեղծելու, կազմակերպված զորահավաք իրականացնելու և այլ հրատապ խնդիրներ: Հայ ժողովրդի համար բախտորոշ այդ պահին Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային և Հայ զինվորական խորհուրդների լիազոր-ներկայացուցչի կարգավիճակով Արամ Մանուկյանը գործուղվեց Երևան:

Հենց Երևանում էլ՝ 1917թ. դեկտեմբերից 1919թ. հունվար ընկած ժամանակահատվածում, առավելագույնս բացահայտվեցին Արամի կազմակերպչական տաղանդն ու ազգային-պետական մտածողությունը: Գիտակցելով տարածաշրջանում զարգացող ռազմաքաղաքական անցքերի հնարավոր վտանգավոր հետևանքները հայ ժողովրդի համար՝ Երևան հասնելուն պես Արամն ուրվագծեց հայ ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված պարզ և իրատեսական մի ուղեգիծ, ըստ որի հայ ժողովուրդը առաջին հերթին սեփական ուժերով պետք է հանգուցալուծեր իրեն հուզող բոլոր խնդիրները: Նա ցուցաբերեց աներևակայելի կազմակերպչական տաղանդ, նախածեռնողականություն, երկաթյա կամք, հետևողականություն և շրջահայացություն՝ ժողովրդական գիտակցության մեջ սեփական ուժերի նկատմամբ հավատն ամրապնդելու և համազգային շարժում կազմակերպելու համար:

Ինչպես Վան-Վասպուրականում, այնպես էլ Երևանում, գործելով բացառիկ պայմաններում, նա շատ արագ դարձավ կենտրոնական դեմք՝ իր ուժեղ, նախածեռնող կամքի, նրբամիտ կեցվածքի, գործող անձանց ու կազմակերպություններին իր հավասարակշիռ մոտեցումների և ապակուսակցական ոգու շնորհիվ հասնելով հասարակության հետ նրանից բարձրացող անհատի հակադրության բացառմանը: Այդ է այատճառը, որ նա ժողովրդական լայն զանգվածների, զորքի և Երևանի նահանգի Ազգային խորհրդի կողմից հռչակվեց նահանգի դիկտատոր, այսինքն՝ օժտվեց միանձնյա իշխանությամբ: Սշտապես պարզաբանելով իրականացվող քայլերի հրատապությունը, շեշտելով ժողովրդի և ռազմական ու քաղաքական ուժերի նկատմամբ իր հարգանքը, լինելով հավասարապես հետևողական իր խոսքում և գործում՝ նա կարողացավ ներգործել ժողովրդի վրա և նրան առաջնորդել դեպի հաղթություն: Ամիսներ

շարունակ Արամի նախանշած գաղափարական ու գործնական կոնկրետ ու հետևողական քայլերը, մայիսյան ճակատագրական օրերին նրա վճռական, առարկություն չընդունող դիրքորոշումը հօգուտ թշնամուն վճռական ճակատամարտ տալու և Երևանը պաշտպանելու, սթափեցրին թուրքական առաջխաղացման սարսափելի վտանգից անորոշության մատնված ժողովրդին և տևական պարտություններից հուսալքված զորքին ապահովելով հայ ժողովրդի ոչ միայն գոյությունը, այլև անկախ պետականության վերականգնումը: 1918թ. Հայաստանի Հանրապետության ստեղծման համար մեծապես պարտական ենք նրան և ամենևին էլ պատահական չէ, որ նա արժանացել է ՀՀ հիմնադրի կոչմանը: Ասվածից չի կարելի հետևություն անել, թե Արամը միայնակ կերտեց Հայաստանի Հանրապետությունը: Այն արդյունք էր ողջ ժողովրդի ու բազմաթիվ գործիչների գերմարդկային ջանքերի: Արամի մեծագույն ծառայությունն այդ բոլորին միավորելն ու մեկ նպատակի ուղղորդելն էր:

Սարդարապատի ճակատամարտից հետո Արամը, ստանձնելով անկախ Հայաստանի նախակառավարության նախագահի և զինվորական վարիչի պաշտոնները, ընդհանուր գործին շաղկապելով բանիմաց և հասարակության մեջ մեծ հեղինակություն վայելող ուժերին, կարողացավ նորանկախ երկիրը պահել համեմատական կայունության մեջ, մինչև որ ՀՀ կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվեց Երևան:

ՀՀ անդրանիկ կառավարության մեջ Արամն ուներ բացառիկ դիրք. նրան էին վստահվել միաժամանակ ներքին գործերի, լուսավորության, հաղորդակցության, պարենավորման, խնամատարության, մեր օրերի լեզվով ասած՝ նաև տարածքային կառավարման նախարարի լիազորությունները: Համալսարանական կրթության պակասն ինչպես միշտ, այժմ ևս նրան չխանգարեց վարելու խելամիտ ու նպատակային գործունեություն: Արամը՝ առաջնորդվելով ազգային-պետական մտածողությամբ, դրսևորելով կազմակերպչական տաղանդ, անձնական անշահախնդրություն, նախաձեռնողականություն ու հետևողականություն, նպատակային և արդյունավետ գործունեություն ծավալեց երկրում ամուր իշխանության և իրավակարգի հաստատման, վարչական մարմինների, հատկապես ՆԳ նախարարության ամրապնդման, երկրի հայացման և այլ ուղղություններում՝ այդ կերպ մեծապես նպաստելով նորաստեղծ պետա-

կանության ամրապնդմանը: Նրա մոտեցումների նույնականությունը բոլորի նկատմամբ՝ անկախ կուսակցական հանգամանքից, պետական և սոցիալական դիրքից, համեստ կենցաղը, հայրենասիրությունը գրավականներ էին իր և իշխանությունների հանդեպ ժողովրդական վստահության ամրապնդման և պետականության կայացման համար:

Արամ Մանուկյանի գործունեության ուսումնասիրությունը հաստատում է այն իրողությունը, որ ազգային արժեքներին անկեղծորեն նվիրվելու, իրապես ազգային նպատակներ հետապնդելու, ազգային ուժերին ապավինելու, հաստատակամ, հավասարակշիռ ու անշահախնդիր գործելու դեպքում հայ քաղաքական, պետական, ռազմական գործիչներն ու ուժերը կարող են համախմբել ժողովրդին և նույնիսկ ամենածանր իրավիճակներից հաղթանակով դուրս գալ: Հակառակ դեպքում, երբ նրանք՝ 1) կանտեսեն ազգային արժեքներն ու շահերը և կառաջադրեն երևութական ազգային գաղափարներ ու ծգտումներ, 2) մեր ժողովրդին կմատուցեն այլ ժողովուրդների և քաղաքակրթությունների առաջադիմական կամ այդպիսին ներկայացվող կենսակերպերը, որոնք, սակայն, անհարիր են հայության ազգային ու բարոյական նկարագրին, 3) կապավինեն տարատեսակ գրավիչ դիմակներով պարբերաբար հայտնվող արտաքին ուժերին կամ կընդունեն նրանց կողմից առաջարկվող պարտադիր «օգնությունը», կիետամտեն նրանց ներկայացրած անվերապահ կենսագործման ենթակա «զարգացման» ծրագրերը, անհնար կլինի հասնել ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը, ազգային ներուժի հզորացմանն ու անկախ պետականության ամրապնդմանը, որոնք ազգային հեռահար նպատակների կենսականացման երաշխիքներն են:

Արամ Մանուկյանի հայրենանվեր, փոթորկահույզ կյանքն ու գործունեությունը ուսանելի օրինակ է հայ ժողովրդի ներկա և գալիք սերունդների համար: Երիցս ընդունելի է գործչի մահվան 90-ամյակի կապակցությամբ նրա շիրիմին մատուցված հոգեհանգստյան արարողության ժամանակ ՀՀ ներկայիս վարչապետ Տիգրան Սարգսյանի արտահայտած միտքը. «Այսօր էլ պետք են Արամ Մանուկյանի պես անկոտրում կամք եւ կազմակերպչական ունակություններ ունեցող մարդիկ: Մենք դեռ պետք է շարունակենք նրա գործը»[313]:

---

[313] «Երկիր», Երևան, 2009, հունվարի 30, N 3, էջ 3:

SUMMARY

In the monograph on the bases of archives documents, timely press, printed and non-printed other primary sources, memorandum and historical different literature is scientifically elucidated the whole history of life and activity of Aram Manukyan (1879-1919) – the devoted person to the national liberation movement, national political figure and statesman, honored to the exclusive rank as the founder of the first Republic of Armenia(RA).

The monograph consists of introduction, three chapters, conclusion and the lists of used literature and sources.

The main conclusions of the work are:

In 90^{es} of the 19 century by accepted to Hay Heghapokhakan Dashnakcutyun Party Aram Manukyan has fought against the freedom of Armenians up to the end of his life. He was sure that Armenians who had raised the liberating flag against Turkish yoke must rely upon his own power.

During the first world war Aram had tried to keep away the Armenians of Van from the large scale of the violence of Turkish. In April of 1915, by collaborating with other political forces, he had organized self-defence of Van, owing to which Van was saved from massacre, to what were given one and a half million Armenians from other marzes of Western Armenia.

In 1918 the ideological and practical consistent steps signed by Aram, his decisional orientation on beginning the battle in favour of Turkish on fatal days of may and on protecting Yerevan, had brought the despaired nation and forces to senses from the horrible danger of attack of Turkish by providing not only the existence of Armenians but also by reestablishing the independent statehood. We are obliged to him for establishing the Republic of Armenia and it isn't casual that only he has been honored with the title of founder of RA.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱԶԳԱՅԻՆ–ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 12

Արամ Մանուկյանի մուտքը ազգային-ազատագրական շարժում 12

Արևմտյան Հայաստանում 1905-1907թթ. 16

Երիտթուրքական հեղաշրջման ժամանակաշրջանում 25

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ 31

Վանի հերոսամարտի կազմակերպումը 31

Վան-Վասպուրականի նահանգապետը 37

Ազգային-քաղաքական գործունեությունը 1916-1917թթ. 41

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ 46

Ազգային ուժերի համախմբումը թուրքական ներխուժման դեմ
Արևելյան Հայաստանում 46

Արամ Մանուկյանի հռչակումը Երևանի դիկտատոր 57

Սարդարապատի հերոսամարտի կազմակերպումը 63

Հայաստանի Հանրապետության ստեղծումը 71

ՀՀ ներքին գործերի առաջին նախարարը 81

ՎԵՐՋԱԲԱՆ 107

SUMMARY 112

ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՍՐՅԱՆ
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ. ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

АРМЕН СЕРЕЖАЕВИЧ АСРЯН
АРАМ МАНУКЯН: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ

Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
Համակարգչային շարվածքը՝ ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆԻ
Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24^{գ}

[1000 տ.]

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0143505

95229